Դոդումերը դարձյալ դիտարկվում են հոյժ խոցելի տարր. «Սուսուլման եղբայրները» նրանց համարում են 2013-ին նախագահ Սուլիման առ Սուլիմի գահընկեցության զիսավոր սաղրիչները: Այդ թվականին՝ *Annis horribilis*-ին [47]՝ մոտ 80 եկեղեցներ ու քրիստոնեական կառուցներ, ինչդեռ նաև դոդումերին դատկանոր հարյուրավոր կացարաններ ու վաճառատներ հրդեհվեցին: Մի քանի տարվա ընթացքում իսլամական միությունները ավելի քան իհնգ հարյուր աղջկների առևանգել ու նուսովմանների հետ բռնի ամուսնացնելով՝ կրոնափոխ են արել: Այս ոճիրները արդարադատությունը ըստ եռյան չի դատմել, քանի որ շարունակել է գոհերին երկրորդ կարգի քաղաքացի համարել:

Մարշալ ալ-Սիսի՝ 2014-ի մայիսին իշխանության հասնելուց հետո դոդումերի վիճակը նկատելիորեն բարելավվեց: Դոդում համայնքի դեմ հարձակումից մի քանի օր անց՝ 2019-ի հունվարի 6-ին, նա եգիպտոսի աղաքա վարչական մայրաքաղաքում՝ Մադինաթ Նասրում անվտանգության խիստ դայմաններում ներկա եղավ Ս. Ծննդյան փառահեղ տաճարի բացմանը ու դոդումերի Սուրբ Ծննդյան դատարագին:

Այնուամենայնիվ՝ խորականությունն ու բռնարարները,

ինչդեռ նաև սալաֆական իմամների ատելության քարոզները կանխարգելելու համար քիչ քան է արվել: Ոչինչ կամ համարյա ոչինչ չի արվել 2013-ի գրոհների ընթացքում վնասված կամ փլուզված եկեղեցները վերականգնելու համար: Եգիպտոսի դոդումերի դաշտանության՝ իհնականում սփյուռքում հաստատված բազմաթիվ հասարակական կազմակերպություններ տարիներ ի վեր տարբեր բնույթի բռնարարներ ու հալածանքներ են հաշվեգրել: *Coptic Solidarity*-ի («Դոդումերի համերաշխություն») ու *Voice of the Copts*-ի («Դոդումերի ճայն») նման կազմակերպությունների բազմաթիվ կայքեր են նուտքագրվել ամենօրյա բռնությունները [48]:

Ներկայումս քրիստոնյաները թիրախ են դարձել «Խոլամական դետության» ահաբեկչիների համար, որոնք 2016-ից ի վեր ստանձնել են այդ համայնքի դեմ բազմաթիվ մահացու հարձակումների դատասխանատվությունը:

Իրար հաջորդող ահաբեկչությունները էլ ավելի արագացրին Սինայի ու է-Արիշի քրիստոնյաների, ինչդեռ նաև Նեղոսի գետաբերանի դոդում գյուղացիների տեղահանությունն ու փախուստը: Սինայի թերակղզում աշխոյդ ջիհանականները, որոնք ցանկանում են արմատավորվել նաև երկրի մնացած մասում, դոդումերին «Խաչակիրներ» հորջործեցին ու, «Խոլամական դետության» քարոզչությամբ, ուղղակի նոյնացրին Արևմուտքին: Դոդումերը շատ թանկ վճարեցին նաև իշխանության ձգտող մարշալ ալ-Սիսիին սատարելու համար, փոխարենը չարժանացան եգիպտական իշխանության դաշտանությանը, որը միտումնավոր մեղմ էր ներկայացնում բռնության դեղբերը և ազգային միասնականություն քարոզում՝ այն դեղորում, երբ սալաֆական լրատվամիջոցները, վարչակարգի հետ դաշնակցելով և սառուցի կնքահոր սատարնաբ, շարունակում են ատելություն քարոզել անհավատների նկատմամբ:

ՍԻՐԻԱ. ՔՐԻՍՏՈՆՅԱՆԱԿՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Պատերազմն սկսվելոց ինը տարի անց Սիրիայի քրիստոնյաները շնչահեղձ են լինում, վախենում են իրաքյա սցենարի կրկնությունից՝ ի տարբերություն ընդգծման առաջին ամիսների բերկրաթճիրի: Սիրիայի քրիստոնյաները տեսան գրկանըներ, մահ, ներքին տեղաշարժ, արսոր, զանգվածաբար խոյս տվեցին աղստամբների վերահսկած տարածքներից, իսկ այնտեղ մնացողներն ենթարկվում են դարտադիր զինվորական ծառայության հարկադրանքին: Այս ամենի հետևանքով, 2011-ից ի վեր, Սիրիայի քրիստոնյա համայնքը, - որի թվաքանակը 2011-ից առաջ հասնում էր 1-1,5 միլիոնի (բնակչության 5-8%-ը), - կրոցուել է իր անդամների գոեթ կեսին:

Եթե 20-րդ դարի սկզբում քրիստոնյաները ընդհանուր բնակչության 32%-ն էին կազմում, 1980-ին նրանց քանակը կիսով չափ նվազել էր: Մահից, առևանգումներից և բռնի կրոնավորություններից խոյս տալու համար մոտ 450 000 հոգի ստիլված եղավ օջախները լրել: Այնուամենայնիվ, ներքին աքսորը (դեռի Տարսոս, Լաթարիա, Շատի ալ-Նասարա կամ «Քրիստոնյաների հովիտը», Խարուրի հովիտ ու Դամասկոսի շրջան) դժվար է համեմատել արտաքին աքսորի՝ Լիբանանի, Հորդանանի, Եվրոպայի տարբեր գաղթավայրերի հետ, որտեղ նրանք կիսում են իրենց խլամ հայրենակիցների անորոշ ճակատագիրը:

2013-ից զիհաղական մարտախմբերը տարբեր բնակավայրերում սկսեցին հոգևորականների առևանգել. նրանք 18 ուղղափառ կրոնականի գերեվարեցին Դամասկոսից 55 կիլոմետր հյուսիս գտնվող Մաալուա ավանում միայն: Դավելենք 2013-ի աղրիլին մեկական հոյս և ասորի ուղղափառ եղիսկողոսների առևանգման հարուցած հուզումը: Որոշ դաշտոնատար քրիստոնյաներ՝ ի դեմս Սիշել Կիլոյի ու ժորժ Սաքրայի, բացահայտ ընդդիմադիր կեց-

վածք որդեգրեցին: Երկուսն էլ, լինելով նախկին նարքսիստներ և հոյն ուղղափառներ, վայելում էին Կատարի ու Թուրքիայի հովանավորությունը, բայց որոշակի հեռավորություն էին դահղանում Սիրիայի ազգային խորհրդից, որտեղ գերիշխում են «Սուսուման եղբայրները»:

Այնուամենայնիվ, բանակում, բարձրաստիճան սղաների շարքերում, քրիստոնյաների զգայի ներկայություն է նկատվում. օրինակ՝ Ֆրանսիայում Սիրիայի նախկին դեսպանը՝ Լամիա Շակկուրի հայրը՝ գեներալ Յուսեֆ Ռաջեր Շակկուրը (հոյս ուղղափառ համայնքից), ով 1973-ի հոկտեմբերի դատերազմին Սիրիայի արաբական բանակի զյանակոր շտաբի ղետն էր եղել, շարունակել էր ճնալ երկրի խորհրդանշական դեմքերից մեկը: 2018-ի սեպտեմբերին մահանալով՝ նա հոդին հանձնվեց դետական հուղարկավորությամբ: Բանակի բարձրաստիճան զինվորականներից էր դաշտանության նախկին նախարար գեներալ Դաուդ Ռաջան, ում 2012-ին դավադրաբար սղանած ընդդիմադիրները համարում էին «Վարչակարգի քրիստոնյա երաշխիքը»: Դամբաղետության մուֆտիի խորհրդական Բասել Կըս Նասրալլահը նույնութես քրիստոնյա էր: Դավատարիմ մնալով Յաֆեք ալ-Սաադի օրոք իրագործվող ուազնավարությանը՝ սիրիական իշխանության տեսլականը արմատականության դեմ դատվար հանդիսանալն ու փոքրանամությունների դաշտանությունն ստանձնելն է:

Քրիստոնյաները զինվորական դարտադիր ծառայությունից չեն խուսափում: Նրանք սիրիական կանոնավոր բանակի շարքերում նասմակցում են ուզմական գործողությունների, ընդգրկվում կառավարամետ (Ազգային դաշտանության ուժեր, ժողովրդական կոմիտեներ...), ինչուն նաև ինքնառաջտղանական աշխարհազորային խմբերում:

Այս հանգամանքը բացատրվում է հակամարտության սկզբից ի վեր հատկապես քրիստոնյաների դասալքության համեմատաբար փոքր թվով, ուստի և հասկանալի է դառնուած նրանց բարձր դաշտումները վստահելը: 2017-ի սեպտեմբերին Սիրիայի դատգամավորմերը 252-ից 193-ի կողմէ քվեներով խորհրդարանի նախագահ ընտրեցին Յամնուհա ալ-Սարբաղին, ով ծագումով Յասակէի նահանգից է, դավանանքով՝ ասորի քրիստոնյա, «Բաաս» կուսակցության անդամ: Նա խորհրդարանի քրիստոնյա երկրորդ նախագահն է Ֆարես ալ-Խուրիից հետո, ով ֆրանսիական մանդատի ու հետո ազգային՝ անկախության տարիներին, երեք անգամ խորհրդարանի նախագահ է ընտրվել:

Իրենց հերթին, հոգևոր առաջնորդները, քազմաթիվ հրամայականներից մղված, վարչակարգին դարրերաբար իրենց հավատարմությունն են հայտնում, համոզված, որ եթե ընդունիւթյունը հաղթանակի, իշխանությունում խլանական տարրը կգերակշի: Ուստի թե՝ հոգևորականները և թե՝ աշխարհականները գրեթե միակամ, երեսն իմբնարերաբար, հաճախ վխալմանք, սատարում են Ասարների իշխանությանը: Յեռատես, միաժամանակ թերահավատ լինելով հանդերձ, քրիստոնյաները գիտակցուած են, որ միայն տիրող վարչակարգն է ի վիճակի զարգացման համարներին, աղահովել իրենց հարաբերական անվտանգությունը:

Իշխանությանը սատարելու իրենցից ակնկալված տուրքը վճարող քրիստոնյաները առայժմ, փոխարենը, տեղիանատեղի տուժում են իսլամական զինված խմբավորումներից, այդ թվում՝ ջիհանական ԴԱԻՇ-ի հայածանքներից: Ինչուս նրանց մեղադրում են սադրիչները, սիրիական իշխանությունը սուննի իսլամ մեծամասնականների հանդեր որքան է ժողովողագրական հնարամիտ քաղաքականություն որդեգրի, ժողովրդագրական ուժն, այնուամենայնիվ, կայուն, այսինքն փոքրանամության համար ան-

նոյաստ է մնում՝ զանգվածային արտագաղթի ու ճարտական գործողությունների կորուստների դատշառով:

Քրիստոնյաների մեծ մասը՝ հովն ուղղափառները, մելքիստները, նաև հայերը, վարչակարգի հանդեղ բարյացակամ չեղորություն են դահողամում, այն դեղքում, երբ հաճախ սփյուռքում հաստատված որոշ ասորի դահանջատիրականներ ավելի քննադատական դիրքորոշում են որդեգրել: Բաասական իշխանությունից տարանջատվելու իրենց ցանկությունը նրանց հիմնավորում են աղակենտրոնացման ու մշակութային հնքնավարության դահանջով: Ըստ նրանց ծայրանատաւմ՝ Ձեզիրեկ շրջանում հաստաված հանայնքների (որոնց անդամների մի մասը 1933-ին Իրաքի քրիստոնյաների նախնիրի վերաբերություններն են) եթու-մշակութային առանձնահատկությունները հաշվի չեն առնում և նրանց բռնի արաբացնում են: Բրդական վերահսկողության տարածքներում քրիստոնյաները տարբեր բնույթի այլ ճնշումների են ենթարկվում՝ սկսած կրթական հաստատությունների փակվելուց ընդհուտ անձնական ունեցվածքի վրա արգելանքը:

Օրենքով հաստատված միակ բացառությունը առնչվում է Սիրիայի հայերին, որոնք ուսումնական կայուն համակարգի միջոցով միշտ էլ իրավունք են ունեցել իրենց մայրենի լեզուն դասավանդել, հայերեն շաբաթաթերթ իրատրականել:

Եթու-եզրվական խզում է նկատվում նաև մի կողմից՝ «Օգտաշատ Սիրիայի» [49]: այսինքն հյուսիս-հարավ առանցքի ու ծովափի, մյուս կողմից՝ Սիրիայի հյուսիսարևելյան երկու նահանգների՝ Յասակեի ու Դեյր էգ-Չորի քրիստոնյաների միջև:

Քաղաքային հիմնական ուսումներում խաղաղության հաստատման հեռանկարը կարո՞ղ է նոյատել, որուսացի Սիրիայի քրիստոնյաները համակվեն հույսով ու վեր-

ընծուղվեն իրենց երկրում: Հավանականությունը շատ քիչ է: Երկրում մնացած քրիստոնյաների համար աղբելը չափազանց դժվարացել է: Բայց կենամակարդակի անկման վրա ազդող միջազգային տնտեսական դատամիջոցների հարուցած դժվարություններից, քրիստոնյաներին անհանգստացնում է դետական գիշողական քաղաքականությունը սուննիների դահանջատիրության նկատմամբ, որոնց ընձեռվող տարրեր ընկայի արտոնությունները նորաստում են հասարակական միջավայրի ու քաղաքական համակարգի աստիճանական խևանացնանը: Մինչև աղաքա սահմանադրության բանակեծի ավարտը հարցը հավանաբար առկախ կմնա:

ԻՐԱԲ. ԼԻԲԱՆԱՆՑԱՆ ԲԱՆԱՉԵՎԱՆ ԱՆՇԱՄՐԻ

Այժմ արդեն թույլ ու ցիրուցամ՝ իրաքի քրիստոնյա բնակչությունն 80-ական թվականներին, Սադրամ Չուսեինի վարչակարգի օրոք, նույն մեկ միլիոն էր, իսկ 70-ական թվականներին՝ նույնիսկ երկու միլիոն: Այսօր նա երկու հարյուր հազարից չի անցնում: Ըստ եռյամ, քրիստոնյաները ենթակա են վաղմնջական Միջագետքի այս տարածքից վերջնականապես վերանայու վտանգին, քանի որ միաժամանակ զոհ են գնում ամերիկյան ներխուժմանն ու հաջորդած քաղաքացիական դատերազմին՝ իիմնականում արմատական խևանին, որը ծգուում է տարածաշրջանը զտել ոչ-մուսուլման բոլոր տարրերից:

Ի տարբերություն շիա և սուննի հայրենակիցների՝ երկրի քրիստոնյա բնակչությունը ծանր տուրք է տվել Իրան-Իրաք դատերազմին (1980-1988 թթ.): Աղա, հարաբերական բարգավածում վայելելուց հետո, Բաղդադի ու Սուսովի, երկրի մյուս ոստանների քրիստոնյաները ստիղված են եղել հարմարվել Սադրամ Չուսեինի դաման վարչակարգին:

Ավելի ծանր փորձության ենթարկվեցին նրանց այն հավատակիցները, ովքեր հայտնվեցին քուրդ զինյալների մարտական գործողությունների տարածքներում: Վերջիններիս վիճակն անհանեատ ծանրացավ հատկապես 1991-ին, երբ քրդերի դեմ եթենիկ գտնան ժամանակ ասուրական գյուղերու անդանալի կորուստներ կրեցին: Ասուրաշտղանության ու խաղաղ աղբելակերպի դատօնով դյուլին թիրախներ լինելով, քրիստոնյաները զոհը դարձան նարազատման քաղաքականությանը (կողողուսներ, առևանգումներ, բռնի կորոնափոխություններ, հարձակումներ): 2004-ի ամռանից քրիստոնյաների իրավիճակն անհանդուժելի դարձավ եկեղեցիների դեմ ոմբահարումների հաճախակիացումով, արմատական խմբավորումների՝ խևանական կենակերպի դարտադրմամբ, ինչդեռ, օրինակ, ոգելից խմիչըների արգելումն ու կանանց իջաք [50] կրել ստիղելը: Այդ սև տարիներին յոթանասունից ավելի եկեղեցի հաճակնան ու ոմբահարման ենթարկվեց: Բոնությունների բարձրակետերից մեկը դարձավ 2010-ին Բաղդադի ասուրի կաթոլիկական «Ս. Տիրամայր Փրկարար» եկեղեցու նախաձիրը. «Խևանական դետություն» կազմակերպության իրաքի թևի վեց զիհաղականներ վաթուն հավատացյալի կոտորեցին իրենց դատարագի ընթացքում:

Քրիստոնյա համայնքների նկատմամբ հալածանքները մոտ մեկ միլիոն քրիստոնյայի արտագաղթի դատօնության դարձան: Ըստ Սիացյալ ազգերի կազմակերպության տվյալների՝ դատերազմից առաջ ասուրիները Իրաքի ազգաբնակչության 5%-ից մի քիչ ավելի էին, սակայն նրանց տոկոսը Սիրիայում, Յորդանանում, Լիբանանում ու Թուրքիայում աղաստանած իրաքցի փախստականների թվաքանակում՝ բավականին մեծ է (13%):

Այդ ժամանակներից ի վեր քրիստոնյաները գործնականում վերացել են երկրի մեծ քաղաքներից, հանգրվանել

արտասահմանում կամ Իրաքյան Քուրդիստանում: 2014-ին «Խոլանական ղետության» ջիհադականների ներխուժումը Սուսուկ ու Նինվեի հովիտ, նրանց փախուստն ավելի արագացրեց:

Իրաքի նոր սահմանադրության 2-րդ հոդվածը որոշակիացնում է, որ խալամը ղետական կրոնն է և որում այդիսին՝ իրավունքի գլխավոր աղբյուրներից է: Մի քավական խիստ՝ անհամենատ ծանր հետևանքներով որույթ բացառում է խալանի սկզբունքներին հակասող օրենքների ընդունումը: 39-րդ հոդվածը հավաստում է նաև, որ Իրաքի քաղաքացիները ազատորեն կարող են ընտրել քաղաքացիական կարգավիճակ, որը դիտի հաստատի, սակայն, աղագային ընդունվելիք օրենքը... Մոտավորապես նոյն կանոնակարգին հանդիդում ենք Արևելքի մյուս երկրներում, որտեղ անձնական կարգավիճակը կախված է հանայնքային իշխանություններից:

Հատկապես հոգևոր հաստատություններին թիրախավորող ննան օրենսդրությամբ, հանրային հասարակությունից դուրս մղվելով հանդերձ, քրիստոնեական քաղաքացիան կուսակցությունները այս կամ այն կերպ կազմակերպում են անվտանգության քառում:

Դյուսիսային Իրաքում քրիստոնեական քաղաքական հիմնական ուժը «Աշուրական ժողովրդավարական շարժումն» է: Այն նոյաստել է ամերիկյան ներխուժմանը հաջորդած իրաքյան քառում: Շարժման անդամները նաև նակարգեցին քայլուղով հարուստ Կիրկուկի ու Մուսուլի ազատագրության նարտերին, սակայն աշուրի-քաղդեացիներին չներգրավեցին աղագա վարչակարգի բնույթը որոշող հանձնաժողովի կազմում: Միայն մի քրիստոնյաց՝ «Աշուրական ժողովրդավարական շարժման» առաջնորդ ու Սադրամ Չուսեինի հետևողական ընդդիմադիր Յունադեմ Կանան (Younadem Kana) մի կարծ ժամանակ՝

2003-ի սեպտեմբերից 2004-ի հունիսը, անսղասելիորեն աթոռ գրադեցրեց ժամանակավոր կառավարությունում: 2008-ին, աշուրիները, հաճախակիացող հարձակումները դիմագրավելու համար, ստեղծեցին իրենց ազգային աշխարհագործ՝ Քարաքոչի ղաշտղանության կոմիտեն՝ հյուսիսային տարածքների աստրական քաղաքները, գյուղերն ու շրջանները ղաշտղանելու նոյատակով: Նոյն տարվա ընթացքում Սուսուկի քաղեցացիների արքութիսկողոս Պառլուս Ֆարաջ Ռահիկն առևանգվեց ու ստանալով՝ անենայն հավանականությամբ Իրաքի ալ-Բայիրայի ծեռքով: Քրիստոնեական ինքնավարության այս ղաշտղանը Իրաքի քրիստոնյա մտավորական այն եզակի առաջնորդներից եր, ով Շարիհաթը երկրի օրենսդրության մեջ ներառնելուն ընդդիմադիր դիրք էր գրավել:

Իրաքում մնացած քրիստոնյաների հիմնահարցերից են աշխարհականների՝ քաղաքականությանը նաև նաև կցությունն ու եկեղեցական վերնախավի հետ նրանց հարաբերությունները: Կարդինալ Լուի Ռաֆայել Սակո Ա-ի գլխավորած Քարդինալ Կաթոլիկ Եկեղեցին փորձում է իրաքյան հասարակությունում ավելի գործուն դեր խաղալ: Աստրական Եկեղեցուն հակառակ՝ նրա գործելառքը միշտ հետևողական է՝ խուսափել քաղենական ինքնությունը արաբականին հակադրող եթերի վիճաբանության մեջ ներքաշվելուց, մինչդեռ իրարահաջորդ ղատրիարքները միշտ էլ ջանացել են, հանուն ներառական քաղաքացիության, մերվել աստղական երկրում: Իոնենտականության [51] այս մերժումն ու առավելամոլությանը համազոր ուազնավարության նախնականությունը իրարահաջորդ միադիտական ու հանրադեսական վարչակարգերում հարաբերական կայունություն, նոյնիսկ քարյացականություն է աղահովել՝ հատկապես քաղաքային միջավայրում:

Այսօր քաղեցացիների ղատրիարքի գրության համայնքի ներսում քամբասում են, թե նա մեծ այաթոլլա Ալի

ալ-Սիստանի քրիստոնյա խորհրդականն է: Ու չնայած այդ դերը սովոր խորհրդատվական է, դատրիարքության՝ խորհրդարանական վերջին ընտրություններին որոշակի թեկնածուների դաշտողանելը բավական դարձավ հարուցելու քրիստոնեական համայնքին առնչվող որոշումներում իրենց ձայնն ունենալ ցանկացող քրիստոնեական քաղաքական կուսակցությունների բուռն հակագդեցությունը:

Ու մինչ քրիստոնյաների թիվը շագրենու կաշվի նման նվազում է, քրիստոնեական քաղաքական ուժերը ներքուստ դառնակտվում են «Բարելոն» շարժման դատձառով, որը կցված է շիայական ժողովրդական գորահավաքի միավորումներին [52] և հակադրվում է դատիարք Սակոյին:

Քուրդիստանի ինքնավար շրջանում օրենսդրական մի որոշում աղահովում է քրիստոնյաների ներկայացուցչությունը ինչողես շրջանային, այնողես էլ Իրաքի դաշնային խորհրդարանում: Ու չնայած Քուրդիստանի շրջանային կառավարությունը հաճուրով հրատարականացնում է «Խալանական դեսության» հալածած փոքրամասնություններին դաշտողանելու իր քաղաքականությունը, լայնախոհության նրա այդ դիմակը վաստ է թաքցնում ավատատիրական ու բռնատիրական որոշակի վերաբերնունքի շարունականությունը, որին մենք կանդրադառնանք հաջորդ գլուխում: Այնուամենայնիվ, դա չի խանգարել, որ մեծ թվով աշուրի-քաղդեացիներ աղաստան գտնեն Նինվեի հովտի ու Քուրդիստանի ինքնավար շրջանի նախկին աշուրական-քրիստոնեական գյուղերում, ինչը նրանց որոշ գործիչների դրույ է դահանջել քրիստոնեական ինքնավար շրջան ստեղծել:

Անվերադահորեն հավատարին մնալով 1991-ից ի վեր երիկում իշխանության գլուխ գտնվող Բարզանիների [53] տոհմին՝ Իրաքյան Քուրդիստանի տնտեսության ու ելե-

նուտքի նախկին նախարար Սարգիս Աղաջան Մամենդյան ստեղծել է «Իշտար» հեռուստատեսային արբանյակային ալիքը, որը հաղորդումներ է սփոռում երեք լեզուներով՝ արաբերեն, քրոներեն և ասորերեն: Նա հայտնի է նաև վորապես իր դավանակիցների կենսադայմանները բարելավելու մարդասիրական գործումներությամբ (Եկեղեցիներ, վարժարաններ, այլ ենթակառույցներ...): Աշուրի-քաղդեական բազմաթիվ հասարակական կազմակերպություններ իրենց հերթին ջամում են, որ Քուրդիստանի շրջանային կառավարությունը նրան ընդունածի և թեկուզ ծնական՝ որևէ դատվավոր դաշտումի նշանակի: Դրան խանգարում են հովանավորչության ու քծնանի մերադրանքները: Մեղադրանքներ են ուղղվում նաև Սարգիս Աղաջանի անձնական դահակազորի անդամներին՝ 2009-ի Նինվեի հովտի տեղական ընտրություններում աշուրի-քաղդեացի թեկնածուների վրա հարձակվելու համար:

Տարութերվելով Բաղդադի անկայուն քաղաքականության և Քուրդիստանի ինքնավար շրջանի (որը 2017-ին չկառողացավ հասել անկախության) հետ լարվածության միջև, հյուսիսային Իրաքի փախստական քրիստոնյաները տվայտում են անորոշ ներկայում: Դետական մարմիններում սահմանափակ դաշտուններ են ստանում, աշխատանք դժվարությամբ են գտնում և, ծարահատ, հակվում են արտագործելու: Նոյնիսկ մինչև հիմա բնօրդանում մնացածներն արդեն շրջել են իրենց կյանքի իրաքյան էջն ու միայն մեկնելու մասին են մտածում: Բաղդաստանի (Իրաքի հարավում) Ուրից սերող Արրահամի երկիրը երթև կտեսնի՝ բռնագաղթած քրիստոնյաների տունդարձը: Նինվեի հովտի ու Սուսուլի տարագիրների վերադարձը միշտ է վեճեր է հարուցել: Սուսուլի քրիստոնյաները, չնայած իրենց Եկեղեցների վերականգնմանը, հատուկենտ են տուն դառնում: Մուտքն ասես չքացել է, ինչողես Յովնանը՝ կետի երախում: Արդական ուժերի գրաված Նինվեի հովտի գյու-

դերի ավերման հետևանքներն այսողիսին են, որ չեն հուսադրում նրա բնակիչների վերադարձը: Սինջարի լեռնադարում, Եղդիների նահատակության անվանադիր քաղաքում, Եղդիների տների 90%-ը փլատակ է: Եթե անգամ, ինչդես Սիրիայում, տարածքներն ազատագրվեն ու անվտանգ համարվեն, բնակիչները դժվար թե վերադառնան, ինչդես դատահեց Մաալույայում, որն ազատագրվեց 2014-ի առջիկ 14-ին, բայց բնակչության միայն մի շնչին ճամար վերահստատվեց: Խարուրի հովտում՝ Յասակեում՝ ԴԱԻՀ-ի վերահսկած տարածքներում քրիստոնյաներն այնքան ահարեւկված էին, որ հազիվ մեկ երրորդը մնաց: Նրանց առաջ ծառացել է անդատախան մնացող մի հարցում՝ ինչդես վերադառնալ ու առրել նարդկային հասարակությունից իրենց արտաքսած ԴԱԻՀ-ի հանցակիցների միջավայրում:

ՊԱԴԵՍԻՆ. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԵՐՍԱՍՈՒ

ԲԱՍՏՊԱՐԵՒՆ ԵՆ

Եթե քրիստոնյա տաղեստինցիները 1992-ին 73 հազար էին, այժմ նրանց քանակը 50 հազարից չի անցնում: Այս փոքրիկ խճանկարն իսկ մասնաւում է քաղուն հարանվանությունների՝ հոյն ուղղափառներ, ասորիներ, լատիններ, հոյն կաթոլիկներ, հայ առաքելականներ, յութերականներ, անգլիկաններ, բողոքականներ...

Պաղեստինում գաղլի քարավանը ծայր է առնում Այսրհուդանանի բռնազավթված տարածքներից, հասնում ընդհույտ արևելյան Երուսաղեմ ու Գազայի հատվածը: Պաղեստինցի քրիստոնյաները մի բուռ են մնացել՝ զոհ գնալով Սուլը Վայրերի հետևողական հուդայականացմանը: Եթե քրիստոնյաները 1948-ին Երուսաղեմի բնակչության մեկ իինգերորդն էին կազմում, այժմ նրանք 2%-ից ել դակաս են: Քրիստոսի ծննդավայրում՝ Բեթղեհեմուն,

որտեղ քրիստոնյաները դարեր ի վեր մեծամասնություն են կազմել, այժմ բնակչության հազիվ մեկ երրորդն են:

Կարելի է հաստատ դնել, որ Պաղեստինի/Խորայելի տարածքը, - բացի Բեթղեհեմի, Երուսաղեմի ու Նազարեթի մի քամի այլ բնակավայրերից, - մի օր թեմատիկ գրոսավայրի կվերածվի աստվածաշնչյան խաչակրաց արշավանքների ակումբներին անդանակցող տարեց գրոսաշրջիկների համար, որոնց համար դատարագ կմատուցի արտագաղթած հոգևորականը...

Խորայելան գրավման, հայածանքների ու ճնշումների գոհը դառնալուց հետո քրիստոնյաներն այժմ դժվարությամբ են համակերպվում Յամասի [54] ու նրա կողմնակիցների դարտադրած ու հետզիեւն տիրապետող դարձող իսլամականացմանը, այն դեղքում, եթե իրենց ներկայացուցչությունն ունեն Պաղեստինյան Ազգային Խշխանությունում:

Տարագրության հետևանքով արմատախիլ լինելը երկու հետևանք կարող է ունենալ՝ կան խորայելան քաղաքական ու զինվորական իշխանությունները կյուրացնեն վանքադատկան կալվածքներն ու հողերը, կամ էլ իրենց սեփական տարածքներում մրցակցություն կակսի նորահայտ քարոզիչների՝ ավետարանականների, հիսունականների, Եհովայի վկաների և նոյնիսկ Միջին Արևելիք դատերազմների հարուցած տնտեսական ու հասարակական անկայունության միջոցով իրենց համար նոյաստավոր հող գտած ամերիկյան հավատարյանների միջև: Այդ երևույթը հաջողությամբ տարածվում է Ալմիրում ու Մարուկոյում, որտեղ քրիստոնեությունը հաճախ շփոթում են տեղական դատմական ամենաշնչին արմատավորում իսկ չունեցող գաղութատիրական ներկայացուցչության հետ: Այդ իսկ դատճառով ասդարեզում հայտնվում է քրիստոնյա արար հորջորջվող՝ լավագույն դեղքում որոշես «անհեթերու-

թյուն», վատթարագում դեղքում ծավալաղաշտական որևէ նոյատակի ծառայող 5-րդ գորասյոն:

Թրամփի վարչակարգում հաշվում են ոչ թիշ նախանձախնդիրներ՝ այսպիս կոչված «սիոնական ավետարանականության» շատագովներ (նրանց թվում է փոխնախագահ Մայք Փենսը), որոնք դայըքարում են հանուն իսրայելյան աջ արճատականների դատի [55]: ԱՄՆ-ի դեսողանությունը Երուսաղեմ տեղափոխելու որոշումը հետևանքն է հենց «Քրիստոնեության միջազգային դեսողանատունը՝ Երուսաղենում» կոչվող սիոնական ավետարանականության շահախմբի ջանքերի:

Որպես սիոնական քրիստոնեության իրակրած քարոզարշավի, ինչպես նաև խրայելյան գրավման հակագդեցություն, Երուսաղեմի լատին դատրիարք նորին ամենադատվություն Միշել Սաքքահը, Երուսաղեմի յութերական եղիսկողոս Մումիք Յունանը, Երուսաղեմի հովոն ուղղափառ դատրիարքարանից՝ խրայելյան գրավման և ուղղափառ դատրիարքարանի ունեցվածքի վաճառքի դեմ դայըքարող քրիստոնեական դիմադրության ընթոստ հոգևոր հայր, Սեբաստիայի տիտղոսավոր արքեպիսկոպոս Թեոդոսիոս Աթալլահ Յաննան, Պահեստինի տարբեր Եկեղեցիների տասներեք այլ աստվածաբաններ 2009-ի դեկտեմբերին ստորագրեցին «Պահեստինի կայրոսը» [56]: Աստվածաբանական-քաղաքագիտական ոճով շարադրված այդ ոսկերծը Պահեստինի Եկեղեցիների ներկայացուցիչների հավաքականությանը, Պահեստինցի ու խրատական քաղաքական դատավանատուններին, իրեա և մուսուլման հոգևոր առաջնորդներին, միջազգային հանրությանը, ամբողջ աշխարհի «մեր Եկեղեցիների եղբայրներին ու քոյրերին», հանայն մարդկությանը հավաստում եր Խսրայելի ու Պահեստինի միջև անհաղաղ արդարացի խաղաղության անհրաժեշտությունը՝ դատաղարտելով ուղամակալունը, այն համարելով «մեղ Աստուծո և մարդ-

կության հանդելով», ամուղղակիորեն մեղադրելով նաև գրավմանը սատարող սիոնական քրիստոնյաներին:

Պահեստինի նվազագույն թվաքանակի հասած քրիստոնյաները ցանկանում են կեմոդանի վկայություններ լինել և ոչ թե թանգարանային նմուշներ անդրատլանտյան քրիստոնյաների համար:

Իսկ Խսրայելում, 1948-ին իրեական դետության հաստատումից հետո Երկրում մնացած արար քրիստոնյա փոքրանամությունը հարաբերաբր ավելի նոյատավոր դայնաներուն է գտնվում: Երկար ժամանակ ազատված լինելով զինվորական ծառայությունից՝ նրանք այժմ վերաբերնունքի փոփոխություն են գգում խրայելյան կառավարության կողմից, որը փորձում է ժխտել նրանց արաբական ինքնությունը՝ ինքնության փաստաթղթերում «արամեացի» արձանագրելով [57]: Իրականությունն այն է, որ խրայելյան իշխանությունները սովորություն են դարձրել միաժամանակ մեղմ ու խիստ վերաբերվել, դիմել թե բարի կամքի դրսնորումների և թե հարկադրանքի (օրինակ՝ դորոցների դեղքում), որի բուն նոյատակը արաբների արտագաղթի արագացուն է [58]: Պահեստինյան տարածքներում դա ակնհայտ է հատկապես Բեթղեհեմում՝ Երկրորդ ինտիֆադայից [59] հետո. Սուլը Ծննդյան քաղաքը շրջափակվել է «անվտանգություն դատնեշով» ու վերածվել բանտի՝ բաց Երկնքի տակ: Խսրայելացի քրիստոնյա արաբների տագնալոն ավելացավ հատկապես 2018-ի հուլիսին որդեգրված հիմնարար օրենքից հետո, որը Խսրայելը «իրեա ժողովորի ազգային օջախ» սահմանեց: Խսրայելի արար փոքրանամության և մարդու իրավունքների դաշտումների համար մեկ ուրիշ գերզգայուն կետ է արաբերենի կարգավիճակը, որը որակագրելով է իրու դաշտումնական լեզու և տարտան «հատուկ կարգավիճակ» ստացել: Մեկ ուրիշ զգայուն հարց է խսրայելական իշխանությունների կողմից խլանական կուսակ-

ցությունների շահարկումը քրիստոնյաներին թուլացնելու նոյատակով, ինչողև է Նազարեթի դարագան:

Ամփոփենք՝ երկրորդ կարգի քաղաքացու կարգավիճակի դաշտոնականացումը, խրայելյան իշխանությունների անընդիատ դեմքի աջ թերումը քրիստոնյա արարներին կանխազգացնում են բնավ էլ ոչ նոյատավոր միտում, և սա՝ ի հեծուկս դադեստինյան տարածքներում [60] ներամփոփ քրիստոնյա դադեստինցիներից անհամեմատ բարվոր կենսադայմանների:

ՀՈՐԴԱՍԱՆՅԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Հորդանանի քրիստոնյա համայնքը քանակով շատ նվազած լինելով հանդերձ վայելում է հաշիմյան միադետության [61] «Դրական խտրականությունը», որը նրան կարևոր տեղ է վերադահում հասարակության մեջ: ճիշտ է՝ դետական կրոնը խյալան է, սակայն կառավարությունն ընծեռում է դաշտամունքի ազատություն և միաժամանակ այսպես է անում, որ քրիստոնյաները դաշտոններ գրադեցնեն կարսորագոյն նախարարություններում, ինչողև նաև քանակում: Այսուն, թագավորության մոտ 200 000 քրիստոնյաներն իրենց ներկայացուցիչներն ունեն խորհրդարանում՝ ստորին և վերին դալատների ծայների 6%-ը նրանցն է: Արդարական Բ-ը 2010-ին 10% հայտարարեց: Նրա առաջին փոխվարչադեսությունը՝ Շաջա՛ի Մուաշշերը, քրիստոնյա է:

Լինելով ազդեցիկ գործարարներ՝ թագավորության քրիստոնյաները տնօրինում են բարձրակարգ հյուրանոցային ու ռեստորանային սրամարկման ոլորտի գրեթե ամբողջ մենաշնորհը, Վերահսկում են տնտեսության 30%-ը: Նրանց բարեկեցությունը հետևանքը է իհմնականում հաշիմյան արքայական ընտանիքի ազատամտության ու հանդուր-

ձողականության, որը սկզբունքային դայքար է մղում «Արևուլուման եղայրների» ազդեցության դեմ: 1917-ին, Սերբայի հաշիմյան շերիֆ [62], իսլամական սրբազնա վայրերի դահաղան Հուսեին Իբն Ալին հատուկ ֆեթուա [63] հրադարակեց՝ մուսուլմաններին հորդորելով ընդունել ու դատսողարել ցեղասպանության հայ վերաբրոդներին:

Հորդանանի Հուսեին թագավորի եղայրը՝ նախկին զահածառան իշխան Հասան Իբն Թալալը հատկացես գործոն է միջկրոնական երկխոսություններն աշխուժացնելու ասդարեզում: 1994-ին նա իհմնադրեց Միջհարանվանական ուսումնասիրությունների արքայական ինստիտուտը, որը գտնվում է Ամճանում և զբաղվում կրոնի միջգիտակարգային ու կրոնական հարցերի ուսումնասիրությամբ՝ առանձնահատուկ ուշադրություն ընծայելով արաբ-իսլամական հանրությունում քրիստոնեությանը: Արդարական Բ թագավորի զարմիկ իշխան Ղազին իսլամության ու քրիստոնեության մերձեցման ասդարեզում բացառիկ ազդեցիկ դեր է խաղում: Նա է նախաձեռնել 138 մուսուլման աստվածաբանների՝ 2007-ի հոկտեմբերին Բենելիկտոս Ժ-ին հղած նամակը, որը կոչ է անում երկխոսություն սկսել երկու կրոնների (ներկայացուցիչների) միջև:

Բայց այս դատկերը հեռու է կատարյալ լինելուց: Եթե Արդարական Բ-ն միրում է ասել, որ «քրիստոնյա արարները մեր տարածաշրջանի անցյալի, ներկայի ու աղազայի անքակտելի մասն են», շրջանային քառային վիճակն ու իրարյան սցենարի կրկնության վախս լավատեսություն չեն ներշնչում քրիստոնյա հաճայնքին, որը փոթորկից հեռու մնալով հանդերձ՝ իր աղակովությունը «հարաբերական» է համարում: Դեռ որքա՞ն ժամանակ: Հորդանանը, որտեղ բնիկները փոքրամասնություն են կազմում, այժմ, հասարակական-տնտեսական ճգնաժամի սրման դատքառով հարաշարժ նրկահողմի ներթափանցնան գոտու է վերածվել: Հանրային միջավայրի իսլամականացումն ու

«Սուսուլման Եղբայրների» ազդեցության աճը անհաջողություն են հարուցում: Հորդանանցիների մոտ 20%-ը աղքատության շեմից ցածր է աղրում, իսկ իւլամական շարժումները յուրովի են շահարկում արևմտյան օգնությանը ու Միջազգային արժութային իիննադրամի աջակցությանը իր գոյությունը դահլիճանող խոցելի երկրի հասարակական դայթյունավտանգ իրավիճակը: Այս անկայունության ավելանում է Իրաքի ու Միջիայից փախստականների զանգվածային ներհոսքը, որն անդրադառնում է աշխատութի շուկայի վրա:

2015-ի վերջին հորդանանյան դրորոցական ծրագրերի բարեփոխությունը հարուցեց իւլամական ընդդիմադիրների ու մասնագետների մի մասի սուր քննադատությունը: Պատճառը մատուցված նյութերում իւլամին ուղղակի հղումների նվազումն էր [64]:

Որքան է տարբեր լինեն դատճանները, արտագաղթն արմատավորվել է ու այնքան ընդհանրացել, որ դարձել է անշրջելի: Այստեղից, որտեղ կասանդրաները [65] կանխագուշակել են Արևելի քրիստոնյաների առաջիկա վերացունք, քրիստոնյաները հեռանում են, աշխարհաքաղաքացի դատնում, այլ խոսքով՝ «սկիուռանում»: Ֆիշտ է, ձուման երևույթը հիմնավորված վախ է հարուցում, սակայն Արևելյան Եկեղեցիներից սերող անդրազգային հաճայնքները ինքնության քացանիկ գործնականությամբ դադանան նոր ճարտավարություններ են հղանում, ինչուն նաև արդիականացնում են մի ծրագրակազմ, որը մինչ այժմ տարածություն-ժամանակում քարացած էր թվում:

«ՍՓՅՈՒԹԵՎՇՈՐ» ԴԱՎՎՅՆՔՆԵՐ

Ականա կան ինքնակամ՝ իրար հաջորդող արտագաղթերի հետևանքով, բացի Ղույի Ուղղափառ Եկեղեցուց, Արևելյան մյուս Եկեղեցիներն այժմ սփյուռքում ավելի շատ հավատացյալներ ունեն, քան բնօրրանում: Դարկ է հատուկ ուշադրություն սևեռել անդրազգայնացման երևույթի վրա այստեղ, որտեղ ոմանք հայտարարում են, թե Արևելի քրիստոնյա փոքրանանություններին ծրագրավորված են վերացնում իրենց դատանական տարածքներից: Ցուրաքանչյուր Եկեղեցական ցանց ծավալվել է: Այս նոր ճարտահրավերը թելադրում է նոր ներուժի զորաշարժ, ասունչական երկրի միջավայրին մերվելու որոշակի ծիգ: Դարկ է լինում ամեն միջոցի դիմել ձուլումը կանխելու համար: Այլ կերպ ասած՝ ներվել, բայց ինքնությունը չկորցնել:

Արտագաղթի ուղղությունները միշտ չեն համընկնում: Եզիդոսով դղտիմները նախընտրում են Շյուսիսային Ամերիկան ու Ավստրալիան, Միջիայի, Թուրքիայի ասորիները՝ Շվեյչարիան, Գերմանիան, Նիդերլանդները, Շվեյցարիան, Իրաքի քաղեցացիները՝ Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Լիբանանի մարունակները հենվում են Ֆրանսիայում, Կանադայում, ԱՄՆ-ում և Արգենտինայում հաստատված իրենց համայնքների վրա: Արգենտինայի նախկին նախագահ Կառլոս Մենենը (կրոնափոխ քրիստոնյա) ծագումով Միջիայից է: Նոյնը կարելի է ասել հատկապես Բրազիլիայի մասին, որի նախկին նախագահ Միշել Թեմերը ծագումով Լիբանանից է, սերում է նոյն (ճարոնի) համայնքից:

Արևելյան Եկեղեցիները տարածվում են նաև արարախանական միջավայրում, ավելի ծզգիտ՝ Ծոցի երկրներում, որտեղ աղաստան գտած բավական մեծ թվով քրիստոնյաները ծագումով Ֆիլիպիններից են, Հնդկաս-

տանից, Յարավային Ամերիկայից, Եվրոպայից ու Լիբանանից:

Ըստ ժամանակագրության, սփյուռքի ասորի ուղղափառ վերջին Եկեղեցին օծվել է Բահրեյնում, 2018-ի նոյեմբերին [66], իսկ ամենախիստ ու ամենաքաղաքացի Կատարի Պետությունը 2008-ին թույլատրեց Երկրի առաջին կաթոլիկական հոյակերտ տաճարի՝ Վարդապահի Տիրամայր Եկեղեցու կառուցումը, որին ամբողջ ուղղությունը տրամադրվել է առաջին մասուն խաչ կամ քրիստոնեական որևէ խորհրդանշան շտեղադրվի [67]: Սա հիշատակության արժանի խրախուսական քայլ է, մկանի ունենալով հատկապես հարևան Սաուդյան Արաբիան, որն իր ամբողջ տարածքը խևամի «սրբազն հող» հոչակելով, արգելել է Եկեղեցիների կամ սինագոգների կառուցումը, որտեղ (հևամից քացի) որևէ այլ դաշտամունքի արարողություն դատվում է ձերբակալությանք կամ Երկրից արտաքսումով: Իրավիճակը նույնը չէ Քովեյթում, Օմանի Սուլթանությունում, Արաբական Միացյալ Էմիրություններում, որտեղ, ըստ դաշտոնեական տվյալների, քրիստոնյամերը բնակչության շուրջ 13%-ը են կազմում: Այդ Երկրներում Արևելքի քրիստոնեական հիմնական համայնքները կազմված են հայերից, ղղուհերից, ասորիներից ու Յանկաստանի Մալակարա Ուղղափառ Եկեղեցու [68] հավատայլներից: Ծոցի Երկրներում՝ սերմնե-սերունդ այնտեղ աղորող սիրիացի ու լիբանանցի քրիստոնյամերին հանդուրժում են, բայց նրանց քաղաքացիություն չեն շնորհում:

Առաջնորդվելով ամորագային տրամարանությամբ՝ Արևելյան Եկեղեցիները օգտվում են նոր ցանցերից, որոնք հյուսվում են գաղթականների առաջին ժամանողների կենսունակության և դատախանատու դիրքերի հասնելու շնորհիվ: Սփյուռքի տարածքը հարափոփոխ է, մշտական շարժման մեջ է գտնվում: Նման նոր իրավիճակը վերածվում է ինքնությունը վերահաստատելու մի ամբողջ փոր-

ձարանի, նոյնն է թե՝ խառնասերման: Մակայն հաճաշխարհայնացած ցանցում գործող Արևելյան Եկեղեցիներին բնորոշող հիմնական առանձնահատկությունը մնում է ծայրահետ մասնատվածությունը: Սուրյա կանոնակարգային հարցերի կամ սովորույթների դահլանձան Վերաբերյալ Ենթարկեն անվերջանալի վիճաբանությունները, հենց թեկուզ Եգիպտոսի քրիստոնյամերի անհատական վարքի միասնական՝ ուղղորդող կանոնակարգի բացակայությունը, լուրջ խնդիր են դառնում սփյուռքի՝ դաշտամունքի ավելի ազատական ավանդույթ ունեցող հավատացյալների համար: Սփյուռքի համայնքների անհանդադասախանությունը տեղի իրականության հետ՝ մտահոգում է հոգևոր վերին մարմիններին: 2019-ի փետրվարի շրջաբերականում քաղդեացիների դատրիարք Լոի Ռաֆայել Սակո Ա-ն իր հոտին հորոդում էր նստել արդիականության զնացքը և հոգեբանորեն նախադատրաստվել փոփոխություններին: Ինչդեմ, սակայն, փոփոխել դարերով արմատացած, տարածություն-ձամանակի մեջ բարացած ավանդույթը: Յարցումի դատախանաներից մեկը կարող է լինել քաղդեական դատարագի շարադրանքը թարգմանելը արաբերենի, քրեթերենի, անգլերենի, ֆրանսերենի, գերմաներենի կամ սփյուռքի այն դետությունների լեզուներով, որտեղ վերջին տասնամյակների ընթացքուն քաղդեական նոր համայնքներ են կազմավորվել [69]:

Բանի որ արտերկրում հաստատված լինելը ավելի է խթանում էկումենիզմը [70], դա և խառն, հաճախ մեծամասնականության ներկայացուցչի հետ կնքված անուսությունը մղում են մտահոգության փոփոխության՝ ավելի բաց Երկխոսության:

Միջավայրից ոչ թե մեկուսանալը, այլ քրիստոնեա-արաբական ըմբռնումով վերափոխվելն այլևս դատրանք չէ, ենթադրում է քաղաքական զորահավաք նոյն ընդհանուր նորատակի շուրջը: Այդ առումով նշանակալի է Յուսիսային

Ամերիկայի դղտի հաճայնքի փորձը: Չովման հետ հաճակերտված հուսահատների ենթադրյալ իմբնարդարացմանը զուգորդվում է սփյուռքի կենսունակությունը, որն անընդհատ բարեփոխվում է ու ինքն իրենով նորանում: Միմյանց հաջորդող ճգնաժամերից (1967 և 1973 թթ. արար-իսրայելական դատերազմներ, Լիբանանյան դատերազմ, Իրանական հեղափոխություն և այլն) անընդհատ ցնցվող իրենց երկրները լրելով, Սիցի Արևելի հայերը տասնյակ տարիներ դարձան իրենց լեզուն ու մշակույթը սփյուռքի հաճայնքներին տանող գլխավոր դերակատարները: Նրանք Արևմտաքրում անենուր զանգվածաբար իհմնեցին իրենց ավանդական կառույցները, վարժարանները, ինչորս նաև քաղաքական կուսակցությունները՝ «թարմ արյուն» մատակարարելով ինքնությունը կորցնող հայրենակիցներին:

Ներկայություն լինելով Հատինական Ամերիկայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Եվրոպայում ու Ավստրալիայում, Մարունի Եկեղեցու հավատացյալները 19-րդ և 20-րդ դարերում զանգվածային արտագաղթի բազմաթիվ ալիքներ ունեցան: Սփյուռքում նրանց թիվն այժմ, նոտավոր հաշվարկներով, հասնում է 5-8 միլիոնի՝ այս դեռքում, երբ Լիբանանում 1,5 միլիոնից չի անցնում: Այդ ճանադարիով նրանք, իրեաների ու հայերի կողքին, աշխարհի ամենակարևոր կրոնական ու ազգային սփյուռքներից մեկն են կազմում: Մարունիների մեկտեղումը կատարվում է որոշակի ուղղվածությամբ, օրինակ՝ Սուրբ Աթոռի՝ 2012-ին Ֆրանսիայում մարունիական հաճայնքի թեմ կազմակորելու որոշմանը (լիբանանյան գաղթօջախի 120 հազար հոգուց նոտավորացես 85 հազարը մարոնի հավատացյալներ են): 2000-ական թվականների առաջին տասնամյակի սկզբում մարոնիների շահախմբական գործունեությունը ԱՄՆ-ում տվեց իր դտությունները, երբ հարցը վերաբերվեց Լիբանանում իր գործերը տեղակայած Սիրիայի դեմ դատժամիջոցներ կիրառելուն:

Հվեռիան իր հերթին ընդունել է Ասորի Ուղղափառ Եկեղեցու չափազանց մեծ թվով հավատացյալների, որոնց ընդհանուր քանակը սփյուռքում արդեն հասնում է 150 հազարի: Դա հավասար է Արևելի այդ Եկեղեցու՝ Երկրում նացած հավատացյալների թվին՝ եթե ավելի չե: Ասորի ուղղափառները սփյուռք են բազմաթիվ Երկրներում, նրանց կարելի է հանդիպել Գերմանիայում, Շվեյչայրում, Ավստրալիայում ու Նոր Զելանդիայում: Ականդինավան թագավորությունը իրաքի, արևելյան Սիրիայի և Թուրքիայի քրիստոնեական սփյուռքի ամենազարգացած կառույցներն ունեցող երկիրն է հաճարվում: Երկրում հաշվվում է իրաքի ու Սիրիայից գաղթած շուրջ 150 հազար աշուրիքաղեցին ու ասորի: Առաջին հաստատվողները եկել են Լիբանանից՝ 1967-ին: Յաճայնքը համախմբվել է Սոուկիումի կոնսուլյումում: Եվրոպայի ասորիների դաշտունական ոստանը հաճարվում է Սյոդերտելիեն: Քաղաքը մեծ թվով աշուրիքաղեցին փախստականներ է ընդունել: Սյոդերտելիեն ունի «Սյուրյոյ» և «Սյուրյոյ Սատ»՝ աշուրական, քաղենական, ասորական, արամեական արքանյակային հեռուստաալիքներ, որոնք հաղորդումներ են սփյուռք Եվրոպայով մեկ՝ հիմնականում ասորերեն, բայց նաև արաբերեն, քրետեն, թուրքերեն, անգամ այդ սփյուռքան հաճայնքները որդեգրած երկների լեզուներով (գերմաներեն, շվեյչերեն, հինդերլանդերեն, անգլերեն...): Հվեռիայի ասորիները հղարտ են, որ ունեն իրենց ֆուտրույին թիմերը՝ «Ասիրսկա ՖՖ»-ը ու «Սիրիանկա ՖՎ»-ը: Արևելյան Անատոլիայում՝ Թուր Արդիինի մի գյուղում ծնված, ծագունվ ասորի, Հվեռիայի քաղաքացի իբրահիմ Բայլանը բազմաթիվ անգամ՝ 2005-ին ու 2006-ին, առաջ՝ 2014-ից նախարար է նշանակվել:

Ամեն դեռքում այս հաճայնքները տարբեր բնույթի բազմատեսակ դառակտումների միջով են անցնում: Ասորի Ուղղափառ Եկեղեցու հավատացյալների դառակտունան

դատման կարող են դառնալ արամեական կամ աշուրական անվանումները: Իրենք իրենց աշուրի համարողները գտնում են, որ առաջնայինը նախաքրիստոնեական ժառանգությունն է: «Արամեական ժողովրդավարական կազմակերպության» նման շարժումները երթենն քաղաքական հասունություն հանդիս չեն բերում համայնքի դեկավարների մեծ մասի սերած Սիրիայի նկատմամբ իրենց առավելագույն դահանջատիրությամբ ու առանձնահատուկ դիրքորոշումով: Սիրիայի բնիկներ հայտարարելով իրենց, նրանք գտնում են, որ արամերենը ազգային-դետական մակարդակի դետք է բարձրացվի արաբերենից հետո: Բացահայտորեն դահանջելով Լիբանանից սիրիական զորքերի հեռացումը, այս շարժումը թշնամական դիրք որդեգրեց Դամասկոսի դեմ՝ ձգտելով դետական լեզվի կարգավիճակ աղափովել ասորերենի համար [71]:

Ֆրանսիայում աշուրի-քաղեական համայնքի ժողովրդագրական կշիռը միջին կարևորություն ունի: Աղաստան տալով 1970-ականներին Թուրքիայից փախած 8 հազար աշուրի-քաղեացիների, Փարիզի մերձակա Սարսել (Sarcelles) քաղաքը դարձել է նրանց հիմնական կենտրոնը Ֆրանսիայում: Վալ-դ'Ուազում [72] հաշվվում է մոտավորաբես 12 հազար, ամբողջ Ֆրանսիայում՝ 30 հազար աշուրի-քաղեացի: Դիմնականում արտագաղթած լինելով Թուրքիայի հարավ-արևելքից, ավելի ծշգրիտ՝ Դակվարիի լեռնադարից ու Իրաքի հյուսիսից, նրանց հայրենալքումը սաստկացավ 1984-ից գործող Բուրդիստանի բանվորական կուսակցության՝ PKK-ի գինյաների բռնարարների դատմառով:

2004-ին օծված Ս. Թովմաս Եկեղեցին Եվրոպայի ամենամեծ քաղեական Եկեղեցին է: Սարսելը Ֆրանսիայում առաջին քաղաքն է, որտեղ հուշայուն կառուցվեց «Հիշատակ աշուրի-քաղեացի նահատակների»: Բազմա-

թիվ հանայնքներ հետևեցին այդ օրինակին: Իրոք՝ Ֆրանսիայի հայկական համայնքի նախաձեռնությունը հետևողներ է ունենում, հաճախ նաև հուսախարության դատման դառնում, որովհետև ամեն տարի նշվող հայերի ցեղասպանության օրը՝ ապրիլի 24-ը 2019-ից ի վեր տեղ է գտնում երկրի դաշտոնական օրացույցում, մինչդեռ աշուրի-քաղեացիների բնաջնումն առայժմ անտեսվում է:

Դայոց ցեղասպանության առկա օրենքին հետևելով, Սարսելի ընկերվարական դատգանավոր, քաղաքաբետ Ֆրանսուա Պուլուսին (François Pupponi) հանդիս է գալիս նոյնանձան առաջարկով՝ դատավարութել աշուրի-քաղեացիների մոռացված ցեղասպանության ժխտումը, բայց առայժմ ցանկալի արդյունքի չի հասնում [73]:

ԱՆԴՐԱՉԳԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻԶՈՑՆԵՐԻ ԿԱՐԵՒՌՈՒԹՅՈՒՆԸ

Սփյուռքյան տարածքներում գործող հանաշխարհայնացած Եկեղեցիները նոր միջավայրում գործունեություն են ծավալում հովվական այցելություններով, ընտանեկան կալերով, բայց նաև հաղորդակցության ու լրատվության նոր միջոցներով: Խոսքը հատկապես համացանցի ու 2000-ականներին քրիստոնյա արաբների ստեղծած արբանյակային ալիքների մասին է:

2007-ից գործող «Coptic TV»-ն Ղուտի Ուղղափառ Եկեղեցու դաշտոնական հեռուստակայանն է, որն արբանյակային կարով արաբերեն հաղորդումներ է սփռում աշխարհի տարբեր տարածքներում հաստատված եգիպտացի ակնդիրների համար: Դեղերի արտադրության հանրահայտ ծեռնարկատեր, Շնուշա Գ դատրիարքի անմիջա-

կան խորհրդական, գործարար Սարուատ Բասիլին վճռողութեր է խաղացել այս հեռուատավիքի կայացման գործում:

«Ishtar TV»-ն աշուրի-քաղեական ու ասորական հեռուատատեսային արբանյակային ալիք է, որի կենտրոնը գտնվում է Իրաքյան Քուրդիստանում՝ Երբիում ու կարգված է քարզանիական «Քուրդիստանի ժողովրդավարական կուսակցության» անդամ Սարգիս Աղաջանի «Աշուրա-ասորարաղեական ժորիրդի» հետ:

Մյուս կողմից, ԱԱՆ-ի աշուրի-քաղեական համայնքի երկու դաշտավայրերի՝ Ֆիրաս Ժատուի ու Փիթեր Բետ-Բասուի 2005-ին հիմնած Աշուրական միջազգային լրատվական գործակալությունը (Assyrian International News Agency, AINA) դատկանում է Նինվեի համակարգչային ծրագրավորման ընկերությանը (Nineveh Software Corporation) [74]: Դամացանցի կայքը գրանցված է ԱԱՆ-ի ասորիների ամենակարևոր համայնքի կենտրոն, Աշուրական Սոսքելական Եկեղեցու նախկին աթոռանիստ քաղաք Չիկագոյի հասցեով: Գործակալության ճեղագրերը հաճախ փոխ են առնում ամերիկյան այնիսի խոշոր լրատվականիցներ, ինչորիս են «Ուոլ սթրիթ ջընջըլ» (The Wall Street Journal), «Նյու Յորք թայմզը» (The New York Times), Սի Էն Էն-ը (CNN) և այլն:

Իր հերթին կաթոլիկական արբանյակային «Télé Lumière» կայանը 1991-ից ի վեր հաղորդումներ է սփռում Լիբանանի ու արտերկի համար: Քրիստոնյա քաղաքական գործիչների հիմնած հեռուատակայանը շահույթ չի ետաղմող ընկերակցություն է ու, ի տարբերություն «Coptic TV»-ի, հոգևոր առաքելություն ունի: Յաղորդումների վերահսկիչ խորհուրդը կազմված է կաթոլիկ դատրիարքների համախմբությունից և լիբանանցի կաթոլիկ՝ հիմնականում մարոնի Եղիսկոռոսներից: 2015-ին կազմավորվել է Երբիլի «Ուաղի սալամ»-ը [75], որի նյութականը հոգում է «Արևելյան

առաքելությունը»: Նա մի այլ հաճախականությամբ հաղորդումներ է սփռում Քուրդիստանում աղաստանած քրիստոնյա փախստականների համար՝ ձայնագործելուն խոսքի հնարավորություն տալու նղատակով:

Բացի սուկ աստվածային դատգամբ փոխանցելուց՝ այս լրատվամիջոցները սփյուռքի տարբեր կղզյակների ու մայր հայրենիքի միջև կատ են հանդիսանում: Շնորհիվ իրենց շարժունակության, նրանք երեքն փոփոխուն են անդրազգային հեռարձակումների հաճախականությունը՝ միմյանցից հազարավոր կիլոմետրերով տարանջատված համայնքներին ճակատագրի ընդհանրության դատրանը հաղորդելով:

ՀԱՐԱԽՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՆԵՐՈՒՄ

Ղղտիական սփյուռքի առանձնահատկություններից են գործնականությունն ու շահախմբական ժրաշանությունը: Յուսիսային Ամերիկայի ղղտիաները չափազանց անհանդուրժողական են իրենց բնօրբանում չդադարող կրոնական հալածանքների նկատմամբ: Դա հատկապես Վերաբերում է Եգիպտոսից ԱԱՆ գաղթած, Յանրադետական կուսակցության անդամ Միքայել Սենների (Michael Meunier) 1996-ին հիմնադրած «Ամերիկայի ղղտիական համագումարին» (Coptic Assembly of America, CAA): Բացի «Ամերիկայի ղղտիական համագումարից», Եգիպտոսում հալածվող ղղտիաների դատը դաշտում է ան «Ազատ ղղտիաները» (Free Copts), «Ղղտիական համերաշխությունը» (Coptic Solidarity), ինչորեւ նաև «Եգիպտական համերաշխությունը» (Egyptian Solidarity): Կանադայում ղղտիաները հիմնադրել են «Ղղտիական ընկերակցությունը» (Coptic Association) 1969-ին և «Մարդու իրավունքների կանադական-Եգիպտական կազմակերպությունը» (Canadian Egyptian Organization for Human Rights) 1996-ին:

Ավստրալիայում հանգրվանածներն ստեղծել են «Ավստրալիացի դղտիմների ընկերակցությունը» (Australian Coptic Association) 1969-ին [76]:

Հաղորդումների մեծ մասը տագնադահարուց տեղեկատվություններ են Եգիպտոսի դղտիմների ծանր վիճակի մասին, որոնք ընկալվում են իրեն իւլամ արմատականության դատանդներ՝ Եգիպտական դետության լուր օժանդակությամբ:

Որոշ շահախմբայիններ օգտվում են ԱՄՆ-ի Պետական քարտուղարության սատարումից և աջակցության ծրագրերից: Դա հատկանիս վերաբերում է «Սփյուռքի միջազգային հանձնառության դաշինքին» (International Diaspora Engagement Alliance, IDEA) [77], որը համագործակցության, ծրագրերի ֆինանսավորման և զարգացման աջակցության կազմակերպությունն է: Բարեսիրական գործունեությանը զուգահեռ, կազմակերպությունը անձնորոշում ու կազմավորում է աղաքա հայցվորներին և սփյուռքի մերքած կառերին:

Իրենց նորատակին հասնելու համար դղտի շահախմբայինները օգտվում են Ճնշնան զանազան լծակներից, սկսած ԱՄՆ-ի Եգիպտոսին հատկացրած տնտեսական ու ռազմական ծանրակշիռ օգնությունից: Խսրայելի հետ խաղաղություն կմքելու դահից Եգիպտոսը ԱՄՆ-ից տարեկան ստանում էր 1,2 միլիարդ դոլար օժանդակություն, որը մասնավորապես նորատում էր ամերիկյան գենը գնելուն: Պատրվակելով, որ «Եգիպտոսում մարդու իրավունքների դաշտում առաջնաթագավորության ուղղությունը առաջընթաց չի նկատվում», ոչ վաղ անցյալում՝ 2017-ին, Վաշինգտոնը, ի մեծ դժբախտություն Կահիրեի, այդ մասնան նվազեցրեց: Եվրոպական գործընկերության ամդամ Եգիպտոսը մի շարք հանձնառություններ է ստանձնել մարդու իրավունքները հարգելու ուղղությամբ: Սա է այն գործունեության բնույթը, որ Ֆրան-

սիայի ու Եվրոպայի դղտիմները սահմանափակ հնարավորությունների շրջանակում ձգտում են իրականացնել: Սփյուռքի դղտիմները նման ծեղմարկմերում հաճախ ընդորինակում են ավելի հին ու արմատացած հանայնքների՝ հովների և հայերի փորձը:

ԱՄՆ-ում հաստատված աշուրի-քաղդեացի շահախմբայինները նոյնպես ձգտում են գործունեություն ծավալել իրենց հնարավորությունների ու համայնքի ժողովորագրական կշիռ շրջանակներում: Ծոյն դատերազմի [78] ամենալարված դահին՝ 1991-ին Սան Ֆրանցիսկոյում հիմնված «Ամերիկայի աշուրիհական օգնության միությունը» (Assyrian Aid Society in America) [79] միահամանակ գործուն է բազմաթիվ ոլորտներում՝ նարդասիրական, մշակութային և քաղաքական: Միությունը հանգանակությունների կամ տեղական գործընկերային կառերի միջոցով նորադիմություն օժանդակում է հասարակական-տնտեսական ծրագրերի զարգացմանն ու աջակցում է Իրաքի քրիստոնյա փախստականներին: Ունի նաև արբանյակային հեռուստաալիք՝ «Աշուրիների օգնության միություն - Իրաք»-ը (Assyrian Aid Society - Iraq): Նշեմը 1983-ին ստեղծված «Արամեացիների համաշխարհային խորհրդի» (World Council of Arameans) [80] նորատակամետ գործունեությունը: Կազմակերպությունը տեղական մասնաճյուղերի միջոցով տարածում է ասորետենն ու ասորական մշակույթը սփյուռքի նոր սերնդի միջավայրում՝ Շվեյչայում, Նիդերլանդներում, Շվեյցարիայում, Բելգիայում, Ավստրիայում, Ավստրիայում, Գերմանիայում, Միացյալ Թագավորությունում ու ԱՄՆ-ում:

«Իրաքի կայուն ժողովրդավարության ծրագրի» (Iraq Sustainable Democracy Project, ISDP), «Ամերիկայի քաղդեական դաշնության» (Chaldean Federation of America, CFA) և «Քաղդեացիների ազգային կոնգրեսի» (Chaldean National Congress, CNC) շահախմբերի դրոշի ներք հանախմբված, ԱՄՆ-ի աշուրի-քաղդեացիները ԱՄՆ-ի կոնգ-

րեսի՝ քրիստոնյամերին տրանադրվող հատուկ հատկացնով, 2007-ի դեկտեմբերին տասը միլիոն դոլարի նորաստ ստացան Նինվեի հովտում աղաստանած կրոնական փոքրամասնությունների փախստականների համար՝ կիզակետում ունենալով քրիստոնյամերին:

ԱՄՆ-ի սփյուռքի միջավայրում ծագումով իրաքի քաղդեացի գործիչները կարողացան արժանանալ արաբականության հետ իրենց կատերը խզած լիբանանցի մարուի և եգիպտացի դղտի գործիչների հավանությանը ու նոյատավոր արձագանքին: Իրենց «ստիտակ» հայտարարելով՝ շատ-շատերը հրաճարվեցին «Ամերիկայի արարական ինստիտուտի» (Arab American Institute, AAI) վիճակագրերում հաշվարկվելով՝ վկայակոչելով իրենց նախախլամական՝ միջազետքյան, փյունիկյան, փարավոնական և այլն անցյալը:

Իրաքում նվազող քրիստոնյամերի սատարման ծրագրին եռանդով դաշտողանց «Միջին Արևելքում ազատության ու ժողովրդավարության ամերիկյան միջինարևելյան դաշնությունը» (Middle Eastern American Convention for Freedom and Democracy in the Middle East, MEAC), որը 2004-ից գործում է ջանքերով Կաշինգտոնում՝ մարուի, դղտի, աշուրի-քաղդեացի նախանձախնդիրների և սփյուռքի այնոինի կառույցների [81]. Ինչուսիք են «Ամերիկայի լիբանանյան համաձայնությունը» (American Lebanese Coalition), «ԱՄՆ-ի դղտիները» (US Copts) և «Աշուրական ամերիկյան ազգային դաշնությունը» (Assyrian American National Federation, AANF): Ամենածայրահեղականները միավորված են 2014-ին նայրաքաղաք Կաշինգտոնում հիմնադրված «Ի դաշտանություն քրիստոնյամերի» (In Defense of Christians, IDC) միության մեջ: Այս կառույցը զոհի կարգավիճակում հանդես է գալիս իսլամաատյացությունը իրահրոդ ելույթներով ու ճգնում է շահել նորահեղամութական հոսանքների, նրանց միջոցով՝ խրայե-

լացի դեկավարների ղաշտղանությունը, ինչի վկայություն է կառույցի սերտ առնչությունը խրայելանետ որոշ շահախմբային կազմակերպությունների հետ [82]:

Դետրոյտում ու նրա մերձակա ավաններում վերջին տարիներին հաճախակիացել են իրեա ու քաղդեացի համայնքների հաճատեղ նախաձեռնությունները: Աստվածաշնչում հիշատակվող Նինվեի հովտի ու Ավետյաց Երկրի գուգահեռը՝ «արարա-խլամական միջավայրի թշնամքից տառաղածների միաբանություն» փրկչական շրջատույթը ստեղծել է մի դաշնություն, որը սփյուռքից բացի որևէ այլ միջավայրում անընդունելի է:

Այնոինի սիոնիստական շահախմբեր, ինչուսիք են «Հրեա Անրազարյալների օգնության միությունը» (Hebrew Immigrant Aid Society, HIAS) կամ «Հրեական համայնքի կատերի խորհուրդը» (Jewish Community Relations Council, JCRC/AJC) հետաքրքրվում են ինչորեւ Իրաքի, այնորեւ է Իրամի աշուրի-քաղդեացիներով, հատկանես նոյատում են, որ «գրին քարտի» միջոցով նրանք իրենց բնակած Երկրներից հեռանան ու հաստատվեն ԱՄՆ-ում: Զանալով Իրամը դարմել հայ, աշուրի-քաղդեացի ու իրեա համերկրացիներից՝ այդ սիոնիստական շահախմբերն իրենց թույլ են տալիս մոլլաների վարչակարգը ներկայացնել որդես ոչ-քրիստոնյա փոքրամասնություններին նվաստացնող իշխանություն: Իրամի աշուրիական համայնքի դատգանավորի՝ Յոնաթան Բետկոլիայի (Yonathan Betkolia) միջոցով դատաղարտվող նման ժողովութագրական խաղերն անհետևանը չեն մնում [83]: Իրաքի քրիստոնյամերի այս շահախմբայինները հայտնվում են դժվարին իրավիճակում, քանի որ ավելի ընդիանություններ են գտնում համրադետականների թվի, քան դեմոկրատների մոտ, որոնց «մուտքամանանետ» են համարում: Սատարելով Դոնալդ Թրամփի թեկնածությանը՝ նրանք հոսախար եղան նախագահից՝ հատկանես Միջին Արև-

ելքից գաղթականների հոսքը դադարեցմելու նրա որոշման դատձառով:

Արյունոտ իրականությունից, «Խոլանական ղետության» շիհադականների ոճիրներից ցնցված վերոհիշյալ կառույցներն իրենք իրենց զորաշարժի ենթարկեցին, ստիդված եղան դիմել միջազգային կազմակերպություններին, ընդհույս ՍՍԿ-ի Սարդու իրավունքների դաշտումնության խորհրդին, Եվրոպայի խորհրդին, Եվրոխորհրդարանին:

Ֆրանսիայում համեմատաբար վերջերս կազմակորված արևելաքաղաքացիները փորձում են նմանօրինակել «Ֆրանսիայի իրեական հաստատությունների ներկայացուցչական խորհրդին» (CRIF, ՖՐՇՆ), ինչողև նաև հայկական շահախմբությանը: Վերջինս իր մեծագույն հաջողությանը հասավ 2000-ի վերջերին՝ շնորհիվ 2001-ին ստեղծված և Ֆրանսիայի հանրային իշխանությունների ընդունած ներկայացուցչական միակ կազմակերպության՝ «Հայկական ընկերակցությունների համակարգող խորհրդի» (CCAF, ՀՀԿՆ) նոյատակամետ գործունեության:

Շահախմբայինների այս գործնականությունը Հիմ աշխարհանատում ի վերջո տվեց իր դտուրները, որի վկայությունը 2010-ի ճարտին Շվեյցարիայի խորհրդարանի՝ հայերի, աշուրիքաղեացիների ու դրանտացի հոյների ցեղաստանությունը ընդունելու որոշումն էր... Ֆրանսիայի անվերաբան ընդունումից ինը տարի անց: Եվրոպայում 2016-ին ստեղծված «Աշուրիների Եվրոպական համադաշնությունը» 2018-ին Բրյուսելում գրասենյակ բացեց՝ այդ կերպ արտահայտելով վերագգային ճակարդակով շահախմբության անրադարձման նոր փուլի անցնելու միտումը: Նոյատակը Եվրոպայում հաստատված աշուրիքաղեացիների կես միջին հետորդների խոսափող դառնալը է:

Ֆրանսիայում, այնոինի կառույցներ, ինչողիսից են «Աշուրիքաղեական ընկերամշակութային կենտրոնն» ու «Ֆրան-

սիայի աշուրիքաղեացիների միությունը» ջամում են արգելակել ծովում՝ խրախուսելով հանդերձ մերվելը իրենց տեղի հանրույթներին, նոյն ծագմամբ ֆրանսիացիների նոր սերնդին: Ահա՝ այդ դատձառով Անուվիլի, Սարսելի, Վիլե-լը-Բելի նման քաղաքներից յուրաքանչյուրի քաղաքացւարաբանում աշուրիքաղեացի կա: Մերվելու ընթացքն իր արտահայտությունն է գտնում նաև հուշավարերի բացման արարողություններով ու շահախմբական ջանքերով, որոնց հիմնական ուղղորդողներն են դատգանավոր, Սարսելի քաղաքացւարաբան ֆրանսուա Պուտելոնին, Իլ-դը-Ֆրանսի շրջանի [84] փոխնախագահ Ժերոն Շարտիեն, ինչողև նաև այլ բարձրաստիճան դաշտումյաներ:

Թոթափելով թմբիրը, արտասահման՝ Եվրոպա ու Յուսիսային Ամերիկա գաղթած եզրիները իրենց շահախմբային կառույցներն են ստեղծում՝ 2014-ի ցեղաստանական ոճի բացահայտումը հետապնդելու համար: ԱԱՀ-ում հաստատված «Յազդա» հասարակական կազմակերպությունը [85] կաղեր ունի եզրիական համայնքներ ունեցող երկրների մեծ մասի հետ: Այնչարդի 2014-ի նախճիրները շոշադարձային եղան այն ինաստով, որ եզրիներին դրդեցին աստղական երկրներում համախմբվել, իրենց ծայնը լսելի դարձնել: Լիբանանյան ծագությով բրիտանացի փաստաբան Անալ Քլունիի ջանքերով միջազգային հանրությանը հղած նրանց կոչը նոյատակառության մասնավորացես ԴԱԻՇ-ի զոհ եզրիներին սատարելուն, «Խոլանական ղետության» ոճիրները փաստագրելուն, նյութերը ՍՍԿ-ի անդամ երկրների դատվիրակներին ուղարկելուն:

Աշուրիքաղեական և եզրիական շահախմբային ամենանշանակալի ձեռքբերումը նախագահ Թրամփի՝ «Իրաքում և Աշուրիայում խոլանական ղետության»՝ եզրիների ու քրիստոնյաների դեմ գործադրված բռնությունները «ցեղաստանություն» կոչելու 2018-ի դեկտեմբերի 12-ի որոշումն էր: Աշուրիքաղեական և եզրիական շահախմ-

բայինների բուն նղատակը իրաքում ու Սիրիայում ԴԱԻՇ-ին զոհ զնացած կրոնական ու էթնիկ խմբերին օգնելն է: Միաժամանակ նրանք ջամում են, որ ԱՄՆ-ի կառավարությունը ոժրագործության կազմակերպիչների ու հեղինակների մասին ծշմարտությունը ներկայացնի [86]:

Ինչ վերաբերում է հայկական սփյուռքին, որի քաղաքական կառույցները դատմականորեն ձևավորված հայության երեք կուսակցություններն են, անդրազգային իիմնական հարցը Միջին Արևելքի հայերի աճբողջությանն սղառնացող Վտանգի դիմագրավումն է: Սփյուռքի շնչառությունն եղած երկրի՝ Լիբանանի դատերազմը փութացրեց ամբողջ աշխարհի հայության մարդասիրական ու տնտեսական օգնությունը: Համեմատաբար վերջերս Սիրիայի հայկական գաղութը է ծովան դատահանով նորացած սփյուռքի մտահոգության կիզակետում: 2014-ի մարտին, Թուրքիայի անմիջական աջակցությամբ, շիհադական հրոսակախմբերի կողմից Ալեքսանդրետի սանչակին հարող թեսադ պահի ու նույնանուն գավառակի գրավումը ամբողջ աշխարհում ընդվզման լայնածավալ ալիք առաջացրեց:

2013-ի սեպտեմբերին ստեղծված «Արևելքի Վտանգված քրիստոնյաների համագործակցությունը» (Coordination pour les chrétiens d’Orient en danger, CHREDO, ԱՎՔՅ) Ֆրանսիայում ճամաչված միակ շահախմբային կառույցն է, որը բացեմբաց քաղաքական ու իրավական դայերը է մղում ի դաշտում տարածաշրջանի հալածվող փոքրանասությունների: Նախագահը՝ Պատրիկ Կարամ (Patrick Karam) մարդու իրավունքների անխոնչ դաշտում է: Նա արմատներով լիբանանցի է, մարոնի քահանայի ծոռ, աղբեկ է Գվատելուտում [87], երկար տարիների գործունեության շնորհիվ քաղաքական փորձ է ձեռք բերել: Լինելով Արևելքի քրիստոնյա փոքրանասությունների դաշտում անհանգամ դահանջներին քավա-

րարող ֆրանսիական միակ շահախմբային կառույցը, ԱՎՔՅ-ն հատկապես առանձնանում է այս հարցն աշխարհիկացնելու իր սկզբունքայնությամբ: Դրա վկայությունն է Միջին Արևելքի փոքրանասությունների՝ թե քրիստոնյաների և թե եզրիների իրավունքների դաշտում անությունը, որին հետամտում է իր ամբողջ գործունեության ընթացքում՝ ճգնաժամ աշխարհիկացնել իր դայքարը: Պատրիկ Կարամի դատգամ-դատվիրանը, որը յուրովի է արձագանքում Ֆրանցիսկոս Պատրիկ դատգամ-դատվիրանին, Սուրբ Աթոռի Արևելյան Եկեղեցիների Միարանության նասին է՝ այն Եկեղեցիների, որոնք չեն ճգնաժամ արդի իրադրությունն առավել դավանաբանական դարձնել:

ԱՎՔՅ-ն ազդակ դարձավ, որովազի Ֆրանսիայի Ազգային ժողովում 2014-ի հունիսին ստեղծվի Արևելքի քրիստոնյաների հիմնահարցը ընող հատուկ խումբ, որի համանախագահներն են Նիկոլա Սարկոզի (Nicolas Sarkozy) [88] բյուզեի նախկին նախարար Վալերի Պեկրես (Valérie Pécresse) ու Ֆիլիպ դը Վիլիեր (Philippe de Villiers) [89] մերձավոր Վերոնիկ Բեսս (Véronique Besse):

Պատգամավոր Կլոդ Գոասգենի (Claude Goasguen) նախագահած այդ մշտական հանձնաժողովն ունի իր առաքելության սեփական դատախանակատում, քարտուղարությունն ու նյութական միջոցները: Հանձնաժողովը միավորել է ամենատարելի քաղաքական ուղղությունների դատգամավորների: Իր հերթին, Սենատը 2015-ի ապրիլին, Վանդեայից սենատոր Բրուն Ռետայե (Bruno Retailleau) գլխավորությամբ ստեղծել է «Արևելքի քրիստոնյաների հետ կառի, մտքերի փոխանակության, դիտարկման ու համերաշխության խումբ»:

Այս բոլոր գործիչների համար Միջարի ու Նիկեի 2014-ի նախարարները ընդիհանուր տագնարի ազդակ դարձան, եթե մինչև անգամ «Անհաղող դաշտանել Արևելքի

քրիստոնյաներին» կոչը քաղաքական տարածայնություն-ների տեղիք տվեց: Ինչ խոսք՝ տարբեր մտայնությունները իրականությունը չեն փոխում: Միշին Արևելի փոքրամաս-նությունները ներկայացվում են որպես հաշտության կո-վան, խաղաղության ու կայունության գրավական՝ այն- դիմսի տարածաշրջանում, որի բազմազանությանը վտանգ էր սղանում: 2018-ի դեկտեմբերի 15-ին ԱՎՀՀ-ն Փա- րիզում իրավիրեց միջազգային խորհրդաժողով, որը հաճախմբեց ծագումով տարածաշրջանի երկրներից քրիստոնյա և մուսլիման 17 բարձրաստիճան հոգևորա- կանների, նախարարների ու քաղաքական դատավախ- անությունների, ինչպես նաև այդ ասդարեզում գործուն հա- սարակական կազմակերպությունների անդամների: Դա առիթ եղավ ներկայացնելու հեծող տարածաշրջանի ընդ- հանուր վիճակը, միաժամանակ արծարծելու քրիստոնյա- ների ու մյուս փոքրամասնությունների, այդ թվում եղի- ների նկատմամբ գործադրվող խորականությունները ու մյուս բոնությունները կանխարգելելու մտահոգությունը: Բացի դրանց, խորհրդաժողովը հանձնարարեց, որ մաս- նակիցները որոշակի միջոցառումների դիմեն և դարտա- կանություններ ստանձնեն: Եզրափակիչ Ընսուում հրաժա- րակվեց «Փարիզի հոչակագիրը», որին հավանություն տվին բոլոր մասնակիցները, այդ թվում՝ ներկայացուցիչ- ները ալ-Ազիարի [90], այն հաստատության, որտեղ ամեն տարի ամբողջ աշխարհից հազարավոր ուսանողներ և իմամներ են կրթություն ստանում:

Միաժամանակ, ԱՎՀՀ-ն քաղաքական ու կրոնական դա- տավախանատունների ստանձնած դարտավորությունների կատարմանը հետևող աշխատանքային մի խումբ ընտ- րեց: Նոյնիսկ հնարավոր համարեց ավելին անել՝ ուղ- ղակի ճնշում գործադրել կառավարությունների վրա: Չի բացառվում տեղաշարժը խնդրո առարկա տարածքնե- րում՝ Եգիպտոսում, Իրաքում, այլուր: Ինչ խոսք, հոգող

հիմնախնդիրների շարունակական հետամիտնամբ հան- դերձ, աշխատանքային խնդիր հնարավորությունները սահ- մանափակ են, որի վկայությունը Եգիպտոսի խորհրդա- րանի՝ Դայոն ցեղասպանության օրենքն ընդունելու նախա- գծի քննարկման հետաձգումն է:

ԱՎՀՀ-ին գրադարձնող մեկ ուրիշ հարց է փախստական- ների վերադարձին նորաստելը: Ֆրանսիայի նախաձեռնու- թյամբ, 2015-ի մարտի 27-ին իրավիրվեց ՄԱԿ-ի Ան- վլուանգության խորհրդի հատուկ նիստ, ու Պատրիկ Կա- րամը շանաց այդ ժամանակվա արտաքին գործերի նա- խարար Լորան Ֆաբրիուս (Laurent Fabius) միջոցով ձեռք բերել վերականգնման միջազգային օգնության հատուկ հիմնադրամ, որի միջոցներով վերակառուցվեին տները, եկեղեցներն ու կրթական հաստատությունները՝ «բնօր- ուրաններ քրիստոնյաների և փոքրամասնությունների վե- րադարձը հնարավոր դարձնելու համար»:

Շահախնբային գործունեության առանձնահատկություն- ներից մեկն է դատմի ոլորտն է: Ենդաստանության ոքրա- գործության համար ԱՎՀՀ-ն 2014-ի սեպտեմբերին «Խս- լամական դետություն» կազմակերպության դեմ հայցով դիմեց միջազգային դատարանին: Երեք տարի անց, ԱՎՀՀ- ն «մարդկության դեմ գործած հանցագործության համար» նոր հայտ ներկայացրեց՝ այս անգամ ցեմենտ արդյունա- բերող Լաֆարժի (Lafarge) դեմ՝ Սիրիայի ջիհադական մարտախնդերին, այդ թվում «Խսլամական դետության» անողջակի ֆինանսավորելու համար: Որքան էլ անհա- կանալի թվա՝ դատաիրավական այս գործընթացները բավականաչափ չլուսաբանվեցին լրատվամիջոցներում: Անշուշտ՝ անհամեմատ եական է արդյունքը:

Բոլորովին այլ ասդարեզում, ամերիկյան ավետարանա- կան շահախնբերի գործունեությունն ավելի համակարգ- ված է, նրանք հաճախ հասնում են իրենց ներդրած ծիգե-

ոին համարձեք արդյունքի: Յասարակական կազմակերպությունների ջանքերով, ԱՄՆ-ի օրենսդրության 51-րդ հոդվածի 3-րդ կետի սահմանած կարգով ստեղծված այդ ընկերակցությունները հարկերից ազատված են: «Ուժուժ վիճըն» [91], օրինակ, տարեկան ներդնում է դրամական ահոելի միջոցներ՝ 1,5 միլիարդ դոլար, որը հնարավորություն է ընձեռում ամրադրելու ՄԱԿ-ում խորհրդատուի իր կարգավիճակը և դիվանագիտական արդյունավետ գործունեություն ծավալել: Այդ կերպ «Ուժուժ վիճըն» հանդես է գալիս թե՛ Արևելի բնիկ քրիստոնյաների և թե՛ Սաղոթերի [92] դավանափոխների դաշտումությամբ, իսկ կրոնական ազատության համար դեսությունների վրա ճնշում է գործադրում հատկացնելու ՄԱԿ-ի Մարդու իրավունքների դաշտումության խորհրդի միջոցով: Հիմնադրամի շահախմբային գործունեության շնորհիվ ծեռք բերվեցին որոշակի հաջողություններ, ինչուս, օրինակ, Եգիղտոսում 2011-ին եկեղեցիների կառուցման օրենսդրության ֆլունցում՝ ի դատասխան ԱՄՆ-ի Պետական քարտուղարության՝ Եգիղտոսը կրոնական ազատությունները սահմանափակող երկրների սև ցուցակում գրանցելու որոշման:

Վաշինգտոնում հաստատված և նվիրատվությունների շնորհիվ տասնյակ միլիոնավոր դոլարների ֆինանսավորում ունեցող «Կլարիոն որոշեկտօ» (Clarion Project) շահույթ չհետադրող կազմակերպություն է, որը հասարակության ուշադրությունը հրավիրում է «արմատական իսլամի վտանգի վրա»:

Կազմակերպության շահախմբային գործունեությունը ներառնում է տարածումը քարոզչական վավերագրական շարժանկարների, որոնցից մի քանիսը մրցանակների են արժանացել: Այս հասարակական կազմակերպությունը համացանցի իր կայքեջում փաստարկված ցուցադրում է, թե ինչուս են արմատական իսլանականները դիմում ահաբեկչությամ, սղանդի, կանանց առևանգման, երեխաների

բոնի դավանափոխման, կրոնական հայածանքի, փոքրանասնությունների կոտորածների, մարդու իրավունքների համբռնդիանուր ուժանահարման, անգամ «Արևուտքին սղառնացող միջուկային ու ճշակութային ջիհատի» [93]: Շահախումքը տարածում է նաև լրատվություն, «փորձագիտական վերլուծություն», արմատական իսլամի մասին տեսաերիզներ ու կարծիքներ, ծայրահեղականությունը մերժելու համար ամրիոն և տրամադրում «չափավորական մուսուլմաններին» և մարդու իրավունքների դաշտումներին: Շնորհիվ «Կլարիոն որոշեկտօ» ջանքերի ու ծավալած գործունեությամ՝ ԱՄՆ-ը հարմար համարեց անմիջական օգնություն հատկացնել Միջին Արևելի քրիստոնյաների՝ Նինվեի հովտում կազմավորած ինքնադաշտումական ջոկատներին ու զինված աշխարհագրայիններին: «Կլարիոն որոշեկտօ» ջանքերով ԱՄՆ-ի օրենսդրության 2018-ին ընդունված մի բարեփոխմանը՝ վերահսկողություն է սահմանվում հրաքում, անեն ինչ արվում է, որ դաշտումական միջոցները և նյութեր հասնեն սունի, քորդ և քրիստոնյա մարտախմբերին, այդ թվում՝ Նինվեի հովտի քրիստոնյաներին:

2018-ի վերջին ԱՄՆ-ի բյուջեում մոտ 1,3 միլիարդ դոլար էր նախատեսված հրաքի ռազմական օգնության համար՝ նկատի ունենալով նաև Քուրդիստանի շրջանային կառավարության ու քրիստոնյա մարտախմբերին: «Կլարիոն որոշեկտօ» հաստատում է, որ նոյաստել է օրենքի նախագծի բարեփոխմանը, որը ներկայացվել է նախագահ Թրամփի ստորագրությամբ: Դրան գրահետ՝ նոյն 2018-ի նոյեմբերի 21-ին ՄԱԿ-ում ԱՄՆ-ի ճշտական ներկայացուցիչ Նիկի Հալեյ (Nikki Haley) կազմակերպության ընդհանուր քարտուղար Անտոնիո Գուտերրես (Antonio Guterres) են հանդիդան ժամանակ հավաստել է ԱՄՆ-ի կառավարության՝ հրաքի քրիստոնյաներին, եղինակներին, կրոնական նյութ փոքրանափոխուներին օգնելու մտադրությունը [94]:

Ակնհայտ են նաև հասարակության ուշադրությունը տարբեր համայնքների վրա հրավիրելու, քաղաքական աշխուժությունն ավելացնելու, հնամենի համարվող Եկեղեցիները վերակազմացնալու, համաշխարհայնացնան դերակատարներ դառնալու, արդիականացնանը համընթաց առաջանալու ծիգերը: Այս վերափոխումները վկայում են կրոնական առաջընթացի նասին՝ ամերիկյան չափորոշիչների անվիճելի ուղղորդումով կրկնարատկված:

Ըստ ներդրված մարդումի ու զանազան այլ միջոցների՝ սփյուռքի համայնքների աշխուժությունը Եվրոպական ու ամերիկյան քաղաքական դատախանատումների նակարդակներում երթեմն շոշափելի արդյունքների է հասնում:

Նշանակալի է, որ Արևմուտքում այս նոր կազմավորվող սփյուռքամ համայնքների ամրագգային ոլորտում ծավալած գործունեությունն ինքնության ձևավորման նոր խթան է ի հայտ բերում: Անխոսափելի համարվող ծովանակարկածին սկզբունքորեն հակասող այս երևույթը դեռևս վատ է ուսումնասիրված: Ավելին՝ ակնկալվում է ինքնության վերահաստատում, նաևնավորաբես աշուրի-քաղդեացիների դեղքում արաբականության մոռացություն՝ ի նոյաստ արամեական ու ասորական նախահայրենիքի վերահայտնագործման [95]:

Սփյուռքի համայնքների հետզետեւ անող հեղինակության մի այլ վկայությունն է բնօրրաներում ընտրական քվեարկություններին նաևնակցելը, որը քաղաքական կյանքի վրա ազդելու ու հարաբերական հավասարակշռության համելու միջոց է: Լիբանանյան քաղաքական համակարգի փոփոխությունը թույլ է տալիս իրենց նախկին բնակավայրի քվեացանկերում արձանագրված արտագաղթածներին նաևնակցել քվեարկությանը: Մինչև սփյուռքի լիբանանցիների՝ աստղական Երկրների (լիբանանյան) հյուրատոսարաններում քվեարկելու իրավունք ստանալը,

նրանց՝ քվեարկության համար երկիր գնալը վերածվում էր մի տեսակ ընտրական գրոսաշրջության, որն առատորեն ֆինանսավորում էր իշխող քաղաքական ուժերը: Եվրոպա կամ Ամերիկա արտագաղթած լիբանանցիների երկրորդ, հաջախ երրորդ սերնդի զավակները օգտվում են քվեաթերթիկը տուփի մեջ սահեցնելու հնարավորությունից, որուստի համարատասխան քաղաքական կուսակցության նյութական միջոցներով այցելեն իրենց հարազատներին:

2005-ին, ԱՄՆ-ում աշուրի-քաղդեացիների հիմնական բնակավայրում՝ Midwest-ում՝ միջին-արևմտյան նահանգներում համայնքային ծավալուն գործընթաց սկսվեց: 113 հազար քաղդեացիների առնվազն կեսը նաևնակցեց իրարի խորհրդարանի 2005-ի հունվարի ընտրություններին ու դրանով աղահովեց հաղթանակը ալ-Շաֆիհայի դաշինքի միակ թեկնածուի, որի ծայների մեկ երրորդ նաևն աղահովեց սփյուռքը [96]:

Նանուն Արևելիք քրիստոնյաների ծավալված գործունեությունն ու հասցված օգնությունը ուղղակիորեն առնչվում են նաև Ֆրանսիայի՝ հատկանշես կաթոլիկական միջավայրում արմատացած քաղաքականությանը, եթե անզամ ի նոյաստ Եկեղեցու շարժումը ներառնում է ավելի լայն շոշանակներ: Հետաքրքիր է, որ եթե Արևելիք քրիստոնյաների ավանդաբար գոյություն ունեցող դաշտանությունը հիմնականում առնչվում է իրն վարչակարգից ննացած ժառանգությանը, մեր օրերին համարատասխանեցումը ավելի ու ավելի է վեճեր հարուցում:

ՖՐԱՆՍԻՎՆ ՈՒ ՎՐԵԿԵԼԵԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՎՆԵՐԸ. ԴԵՄ ՎՈ ԴԵՄ ԽՈՍՎԿՇՈՒԹՅՈՒՆ

2019-ի փետրվարին Մյունիստնում տեղի է ունենում անվտանգության 55-րդ միջազգային խորհրդաժողովը: Ելույթներից հետո ճայն են խնդրում Արևելքից ժամանած երկու դատրիարք՝ Քաղեացիների Բաբելոնի դատրիարք նորին ամենալատվություն Լոկ Շաֆայել Սակո Ա-ն և ասորի ուղղափառների Անտիոքի դատրիարք նորին ամենալատվություն Իգնատիոս Աֆրամ Բ-ն: Առաջինը ժամանել էր Բաղրամից, երկրորդը՝ Դամասկոսից: Կառուինալ Սակոն հիշեցրեց այն արմատական դատօնները, որոնք հատկապես վերջին մեկ դարի ընթացքում անհամեմատ անկայուն են դարձրել Մերձավոր ու Միջին Արևելքի բնիկ քրիստոնեական համայնքների գոյությունը: Օսմանյան Պետության փլուզումից հետո Արևմուտքի գերիզոր տերությունները տիրեցին տարածաշրջանին, քայլ որու կերպ չղրսնորեցին իրավական դետություններ ստեղծելուն նոյաստելու, առավել ևս՝ բոլոր քաղաքացիներին հավասար իրավասություններով օժտելու միտում:

«Տարածաշրջանի հակամարտությունը ավելի լարող, քան թե ժողովրդավարությանը ու ազատությանը նոյաստող արևմտյան քաղաքականության դատօնով Մերձավոր Արևելքի անկայունությունը քրիստոնյաներին դժվարին կացության է մատնել: Այլ կերպ ասած՝ արևմտյան դատախանատություններն իրենց հնարավորության սահմաններում ամեն ինչ արեցին իրենց տնտեսական շահերին հետամուտ լինելու համար՝ ի վճաս մեր երկրների, օրինակ՝ վերահսկել քարյուղն ու մյուս քնական դաշտները, իմշտես մաս գենքի առևտուրը [...]», – հայտարարեց քաղեացիների դատրիարքը:

Եթե անզամ անունով չի էլ հիշատակվում՝ Ֆրանսիան Արևելքի Եկեղեցիների ներկայացուցիչների ոչ մի հայտարարություն մեջ անուշադրության չի մատնվում: Անցյալ ու ներկա քաղում օրինակներ վկայում են այն երկվությունը, որ Ֆրանսիան դրսուղում է «Արևելյան նոր հարցի» մկանմամբ: Դիրավի, հաշվեկշոի դեղքում, մի բուռ քրիստոնյաներ կարո՞ղ էին որևէ արժեք ներկայացնել դիվանագիտական այն խարդավանքների համեմատությամբ, որոնցով գերտերությունները երեկ հակադրվում էին նոր ծնվող ԽՄՀՄ-ին, իսկ այսօր, Ծոցի քարյուղային միացետական երկրների ազդեցությամբ՝ Սաուդյան Արաբիայի և Կատարի գլխավորությամբ:

Դուանցիկ գեղումներով ընթիշվող խորհրդանշներ ու բարեկիրթ անտարբերություն մշակելով, Ֆրանսիական դիվանագիտությունը, իենց որ առիթը ներկայանում է, ծածանում է Լոկ Թ-ի՝ նարոնիներին հասցեազրած ուղերձը, աղա կասկածելի մի վկայագիր, որով իբր Ֆրանսուա Ա-ն Բարձր Դուռից [97] «կատարույասիններն» [98] է կորցել: Չեն մոռացվում նաև Երուսաղեմում Ֆրանսիայի ընդհանուր իյուլատոսի ծեռք բերած առանձնաշնորհումները Սուրբ Վայրերի մկանմամբ: Այս ամենի համեմատությամբ, «Սիրիական հարցը» անշան մանրուք չէ՞ր, որդեսզի Արևելքի Եկեղեցիների տագնադի ճայնը հասներ Ֆրանսիական դիվանագիտությամբ:

Երբ այսու կոչված «Արաբական գարնան» առաջին կայծերը փայլատակեցին՝ Արևելքի Եկեղեցիներն ու Սուրբ Աթոռոց իսկույն հասկացան, որ քրիստոնյաները ենթակվելու են իրենց ճակատագրին լրվելու վտանգին, որ նրանց աղահովությունը բնակ է Արևմուտքի առաջնահերթությունը չէ, որ Արևմուտքն զբաղված է Միջին Արևելքի քարտեզը վերածնելով, ընդ որում՝ գլխավոր մտահոգությունը նոր դաշտարների յուրացումն է: 2011-ի սեպտեմբերին Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի ընդունելու

թան ժամանակ, երբ Մարոնի Եկեղեցու դատրիարք նորին ամենալատվություն Բշարա Ռային արծարծեց տարածաշրջանի քրիստոնյաների աղաքայի կենսական խնդիրը, որուն դատասխան արժանացավ սիրիական ճգնաժամի ամբողջովին հակառակ մեկնարարանության: Արևոտքի դիվանագիտական ներկայացուցիչներին նորին ամենալատվության հղած շարունակական աղերսագրերը (որոնցում նա խնդրում էր «այդքան հաղթե՞ն ջխախուսե՞լ» արաբական աշխարհի բռնկումները) նատնվուական քարտական, անարձագանք մնում: Ինչո՞ւ Փարիզը անհետևանք թողեց Մարոնի Եկեղեցու՝ նոյնինքն դատրիարքի տագնադի երեք դրսուրումները՝ շատ լավ գիտակցելով, որ տարածաշրջանի յուրաքանչյուր քաղաքական անկայունության համար փորբանասնությունները են վճարելու: Ահա դատրիարքական տագնադի երեք դրսուրումները, առկա վարչակարգը ավելի դաժան վարչակարգով փոխարինելու տագնադ, դավանական հիմքի վրա քաղաքացիական դատերազմ ծագելու տագնադ՝ ինչեւս իրաքում, վերջապես՝ «նոր» Սիրիա Արևելի ամոթայի ծրագրի իրականացման տագնադ, ծրագիր, որն արաբական աշխարհը փոքրիկ, անկենսունակ, նշտարես հականարտության մեջ եղող դավանական դեսությունների դիմութիւնը:

Այդ ժամանակներից ի վեր, ամենանիեթեք արտարկումներն են ի հայտ գալիս վատթարագույն սցենարներով: Քաղաքակրթությունների ճգնաժամի ծիրում, քրիստոնյաներին այլևս տեղ չի մնում: Նախընտրելի չ' լինի Լիբանանի 1.300.000 քրիստոնյաներին, ինչեւս նաև Սիրիայի նրանց 1.500.000 դավանակիցներին Եվորդա տարագրել: Վերջապես կարգավորել Մերձավոր Արևելի թնջուկը, հասնել նրան, որ Խորայելը Սիրիայում իշխող «Սուսովան Եղբայրների», առա նաև Լիբանանի հետ խաղաղության դաշինք կնքի, ու Լիբանան կամ այլուր աղաստանած

դադեստինցի փախստականները մնան այնտեղ, որտեղ գտնվում են:

Լիբանանում լույս տեսնող ֆրանսալեզու «լ'Օրիան - լը ծոլը» (*l'Orient-le Jour*) օրաթերթի 2012-ի փետրվարի 29-ի համարում Ֆրանսիայի այդ ժամանակվա արտաքին գործերի նախարար Ալեն Ժյուրեն (*Alain Juuppé*) փորձեց գոտեղնելի քրիստոնյաներին նրանց հորդորելով կամացել աղստամբների շարքերը:

«Ամբողջ սրտով կոչ եմ անում քրիստոնյաներին, ինչուս մնացած բոլոր համայնքներին, նաև ակցել նոր ու ժողովրդավարական Սիրիայի ստեղծմանը, որտեղ բոլոր քաղաքացիները կունենան նոյն իրավունքներն ու դարտականությունները [...]։ Ո՞վ կարող է հավատալ, որ փոքրամասնությունների իրավունքները արյունուշտ բռնատեղեն ավելի լավ կուշտողամեն, քան ժողովրդավարական վարչակարգերը: Եթե աղաքայում Արևելի քրիստոնյաների վրա հարցականներ ծանրանան, կարող եք վստահ լինել, որ Ֆրանսիան երեք չի լրի նրանց՝ լինեն ինթվարկած երկրներում, թե այլուր»:

Մեջբերելով այս տողերը, աշխարհագույն ու Սիրիայի նասնագետ Ֆաբրիս Բալանշը (*Fabrice Balanche*) շատ դիմուկ նկատում է, որ «2012-ի Ֆրանսիան այլևս Նաուրեն Գ-ի Ֆրանսիան չէ, որը 1860-ին իր մարտանավերն էր ուղարկում Լիբանանի քրիստոնյաներին ջարդերից դաշտութանելու համար» [99], ոչ է քրիստոնյաներին աղաստան տված նանդատաներ Ֆրանսիան [100]: Եվ եթե Փարիզը 1982-ին վճռեց միջամտել Լիբանանի իրադարձություններին, նղատակն ավելի շատ Բեյրութը դադեստինցիներից մաքրագործելու էր, քան քրիստոնյաներին դաշտամելը [101]:

2013-ի հոկտեմբերին, երբ Սիրիայի ճգնաժամի բնույթի մասին ֆրանսիացի գիտահետազոտողների ու մտա-

Վորականների բանավեճը հասնում էր գործեն ջղագարության՝ «Ֆամիլի Կրետիեն» (*Famille Chrétienne*, «Քրիստոնյա ընտանիք») շաբաթաթերթի ընթերցողները կարող էին կարդալ այն ժամանակվա արտաքին գործերի նախարարի կրոնական հարցերի գծով խորհրդական Ռոլան Դյուբերտրանի (Roland Dubertrand) հարցազրույցը, որտեղ նա նաև ավորապես ասում էր.

«Արևելի քրիստոնյաները 10-12 միլիոն են ու ըստ երկրների՝ շատ տարբեր կարգավիճակ ունեն: Ես չեմ խոսում հայածանքների, այլ, ավելի շատ, մարդու իրավունքների կողիտ խախտումների մասին: Դայլածանքի համար, հիրավի, հարկ կլիներ, որ մի դետություն (կամ մի խումբ) կամսամտածված ու կամոնակառգված հետևողականությամբ բռնաձնշնան քաղաքականություն վարեր մի ամբողջական կրոնական համայնքի նկատմամբ: Սա այդ դեռքք չէ»:

Ոոլան Դյուբերտրանը այն դիվանագետն է, ով երկու տարի անց մի խորհրդաժողովի ժամանակ դրվագելու էր Ֆրանսիայի արդյունավետ դերը ՍՍԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահության 2010 թվականի նոյեմբերի, առաջ Եվրոպական Միության Արտաքին գործերի խորհրդի՝ 2011-ի փետրվարի հայտարարագրերի ընդունման գործում, որոնք դատաղարտում էին քրիստոնեական փոքրանամությունների դեմ բռնությունները:

Եթե անգամ նման դրվատանը ոգևորում է ամենա Ֆրանսամետ ճտայնությունները, թե դ'Օրսեի (Quai d'Orsay) [102] դիրքորոշումներում հստակության բացակայությունը որևէ հաստատամտություն չի՝ արտահայտում: Քչերը, ենելով մարդու իրավունքների դաշտումանության սկզբունքներից ու աշխարհում փոքրանամություններին վերադարձական ճակատագրից, հենց թեկուզ սաունցի դաշնակցի Եմեմին դատառած նարդկային կորուստներից,

խորունկ ցավ կաղրեն: Խոսք իսկ չի կարող լինել ուզմավարական գործընկերների ու Ֆրանսիայի ուզմարդյունաբերության խոշոր դատվիրատունների միջև հարաբերությունները խգելու մասին:

2014-ի գարնանը «Խոլանական դետություն» կազմակերպության կողմից Մուսուլի ցուցադրական գրավումը լուսարձակները սևեռեց քաղաքից փախչելու ստիլված հազարավոր քրիստոնյաների վրա: Այդ դահից, Ֆրանսիայի նախագահական ընտրություններում Արևելի քրիստոնյա հաճայնքների դաշտումանությունը արտաքին քաղաքականության առաջնահերթություն դարձավ: Քաղաքական դատասխանատու դաշտոնյաները փոշուտ դահարանից հանեցին ինն, դատրաստի կարգախոսները: 2014-ի օգոստոսի 13-ին, Ֆրանսուա Օլանդին (François Hollande) [103] ուղղված բաց նամակում, նախագահի դաշտումից հանրապետական կուսակցության աղազաթեկնածուները՝ Ֆրանսուա Ֆիլյոնն (François Fillon) ու Ալեն Ժյուլեն, ինչպես նաև նախկին վարչապետ Ժան-Պիեր Ռաֆարին (Jean-Pierre Raffarin) Ֆրանսիայի նախագահին հորդորում էին միջամտել Մերձավոր Արևելքում՝ «անդատվությունից խուս տալու» համար, ահազանգելով այն «ահապոր հետևանքների մասին, որ սումնիների ու շիաների հակամարտությունը կարող էր ունենալ Արևելի քրիստոնյա փոքրանամությունների ճակատագրի վրա» [104]: «Միջամտելը Եվրոպայի միայն դարտականությունը չէ, շահն էլ է: Արդեն իննգ դար է մենք ումենք Արևելի քրիստոնյաներին դաշտումանելու առաքելություն, որը դեւոր է կատարենք հավատարմորեն», – գրում էին նրանք՝ նկատի ունենալով որոյն «Եկեղեցու ավագ դուստր» Ֆրանսիայի խաղացած դատանական դերը:

Մեկ տարի էլ շանցած՝ 2015-ի հունիսի 23-ին, Դանրապետական կուսակցության թեկնածու Ֆրանսուա Ֆիլյոնը Փարիզում, կրկեսի ծմեռային՝ լեկիեցուն դահիճում, հան-

րահավաքի ընթացքում, դարձյալ համեստ եկավ ի դաշտութանություն Արևելքի քրիստոնյաների: Նախկին վարչապետի համար հարմար առիթ էր սրտառուչ ելույթ ունենալու՝ ի նոյաստ ամեն օր «Խվանական ղետության» հետևողական կեղեցումներին ու կտտանքներին ենթարկվողների: «Փարիզից հինգ ժամ հեռու սրտառում են քրիստոնյաներին» [105], – ծայնեց նախկին վարչապետը և ինչուս Ֆրանսիային, այնուև է համայն Եվրոպային կոչ արեց ԴԱԻՇ-ի դեմ մղվող դայրարում «վիշտել ուզմակարությունը»:

Արևելքի քրիստոնյաների դաշտությունը երկար ժամանակ եղել է աջակողմյան, ավելի որոշակի՝ ծայրահեղ աջակողմյան ֆրանսիացիների մենաշնորհը, քանի որ «Ազգային ճակատի» (իհմա արդեն «Ազգային համախմբման») շատ ջատագովներ լիբանանի դատերազմի ժամանակ գգայուն էին փաղանգավորների [106] ճակատագրի նկատմամբ, շատերը մինչև անգամ գնում, կովում էին նրանց շարքերուն: Դա չեղ խանգարում, իհարկե, որ նախակողմյան գործիչները ևս դարբերաբար անդրադառնան նույն թեմային, իրենց մտահոգությունը հայտնեն Սիրիայի, Իրաքի, մասամբ նաև Եգիպտոսի այդ համայնքները խարիսխող ժողովրդագրական արնահոսության կադակցությամբ: 2006-ի ամռանը Ֆրանսիայի Ազգային ժողովին ներկայացրած իր տեղեկագրում, 2017-ի նախագահական ընտրության Ընկերվարական կուսակցության ձախորդ թեկնածու Բենուա Ռամոն (Benoît Hamon) վկայակույուն է «մի դատմություն և մի ընդհանրություն, որը դարտադրում է» լինել մարոնի քրիստոնյաների հետ, այսինքն՝ «այնտեղ, որտեղ Ֆրանսիան ավանդաբար «գուրգուրող մայրիկ» է համարվել» [107]:

Երկու ամիս շամցած, Ֆրանսիան Լորան Ֆարիուսի ու Ֆրանսիական դիվանագիտության անձնակազմի նախաձեռնությանը դահանջեց իրավիրել ՄԱԿ-ի Առվտանգութ-

յան խորհրդի հատուկ նիստ՝ քննելու համար «Արևելքի քրիստոնյաներին» սղառացող ցեղաստանության վտանգը ու ալ-Քայիդայի սիրիական թեր՝ «ալ-Նուսրա» ճակատը ընդգրկել ահարեկչական կազմակերպությունների ցանկում: Նոյն Լորան Ֆարիուսը 2015-ի մարտի 27-ին «Լա Քրուա» (La Croix) օրաթերթին տված հարցազրոյցում հիմնավորում էր Արևելքի քրիստոնյաներին սատարելու սկզբունքը՝ որդես «մեր դատմության, անգամ մեր, բայց, իհարկե, նաև Միջին Արևելքի հնքնության հիմնարար ավանդույթ»:

Իր հերթին անդրադառնալով նոյն խնդրին, նախագահ Էմանուել Սակրոնն անձանք երկու անգամ անդրադարձել է Արևելքի քրիստոնյաների նկատմամբ Ֆրանսիայի հովանավորչական դիրքորոշմանը, նախ՝ 2017-ի սեպտեմբերին, «Արաբական աշխարհի հնստիտուտում» (Institut du monde arabe) և առաջ, 2018-ի ապրիլին, Բենմարոյան միաբանության հայրերի բոլեցում: «Պատմականորեն, մենք ժառանգել ենք նրանց դաշտումներու դարտականությունը» [108]: Զգոր հայտարարություններ, ազդեցիկ դատգամներ, որոնք հաճախ բախվել են իրականության դատին, անարձագանք ննացել: Իսկ եթե Ֆրանսիական երկվույտունը երկիրնության արդյոյնը է: Ֆրանսիան մերժ դաշտության առաջանարդի՞կ է, մերժ է անմիջական շահերով ու զայթակիղի ակնկալիքներով հնայված երկի՞ր, որոնց համար դատրաստ է մոռանալ փրկիչ-փրկարարի իր դերը: Երկվույտուն, որտեղ սերտածում են վերլուծական եզրահանգումների սխալներն ու նորդահյանողական գաղափարները: Հիմնախնդիրը հենց այդ կերպ է դիտարկվում է: Պատճառն այն չէ, որ դարձյալ դիվանագետներն ու հոգևորականներն են գերիշխում Մաշրեկի փոքրամասնությունների հարցի քննարկման բանավեճերում: Մաշրեկի ճակատագրի անդրադարձներում մենաշնորհ ունենալով՝ մեծ մասամբ նրանք են թելադրում որ-

դեգրվելիք քաղաքականությունը: Եվ, այնուամենայնիվ, շնայած երկարամյա ավանդույթին, արևելագիտական հիմնարար դղրոցին, Մադրեի ու Մաջրեկի հասարակությունների փորձաքննական ինացությանը, Ֆրանսիայի ձայնը լսելի չէ սիրիական ճգնաժամի սկզբից ի վեր: Դա ի՞նչ է՝ «գաղափարական» սկզբո՞ւմը, նորդականութականության ու ատլանտյանականության թանձրուկով համեմված մարդուիրավունքյան դաշտուանության համահարթեցո՞ւմ: Ինչ է որ լինի՝ Դանասկրսի հետ դիվանագիտական բոլոր հարաբերությունները խցելու որոշումը ծանր հետևանքներ կումենա երկու կրակի միջև հայտնված սիրիակի քրիստոնյաների համար: Մի կողմից՝ դրսից ու ներսից հովանավորվող ընդունության, մյուս կողմից՝ Աստմերի իշխանության միջև խևական միջնորդի դերն ստանձնելու դատմական դահի կորուստ: Ֆրանսիան վերջնականացե՞ս է զլացել կատարել, չասելու համար «ուրացել», Արևելի քրիստոնյաների դաշտուանի իր դերը: Այդիսին է առնվազն Պատրիկ Կարամի՝ «Արևելի Վտանգված քրիստոնյաների համագործակցության» նախագահի ու Ի-Ռ-Ֆրանսի շրջանի փոխնախագահի համոզումը [109]:

ԱՐԵՍՏԱԿԱՆՈՐԵԼ ՊԱՐՊԱՆՎՈՐ ԱՎԱՆԴՈՒՅԹ

Ժամանակի ընթացքում այս ավանդույթը մասսամբ իրականության վերածվեց խնդրո առարկա համայնքների երևակայության մեջ: Այնուամենայնիվ, ավանդույթը չղետը է խոչընդոտի տարբեր հավակնություններ ու որոշակի նոյատակներ ունեցող կառույցի գործունեությանը: Ֆրանսիայի՝ «Արևելի քրիստոնյաների դաշտուանի» ավանդական հորչորչումը, որը Ֆրանսիական դիվանագիտությունը հարկ եղած դեղբում շահարկում է, ծևակերպել է 1536-ին՝ Ֆրանսուա Ա-ի և Սուլյեյնան Կանունիի [110] կնքած Ֆրանս-օսմանյան դաշնագրում: Այդ դաշնագրով, Բարձր

Դուռը առանձնահատուկ կարգավիճակ շնորհեց Ֆրանսիայի թագավորի հղատակներին. թուրք սուլթանի տիրույթներում հաստատվածները՝ «Կատյիտուկասիոններ», արտոնյալ իրավասություններ էին ստանում, Ֆրանսիական դրոշ ծածանող նավերով կարող էին առևտուր անել օսմանյան բոլոր նավահանգիստներում, ունեցվածք ձեռք բերել, դատվել միմիայն Ֆրանսիայի թագավորի նշանակած հյուտատուսների օրենսդրական կանոնակարգով: Մարտելը բարգավաճեց իրեն «Կատյիտուկասիոնների» շնորհիվ: «Կատյիտուկասիոններն» իրենց ուժը դադարեցին մինչև առաջին աշխարհամարտը:

Իհարկե, Ֆրանսիայի թագավորի նման քայլը դետք է բացատրել նախ և առաջ ազգային շահերի հետաղնդմամբ. նա ամեն կերպ ձգտում էր առավելության հասնել իր հակառակորդի՝ Կարլ Ե կայսեր [111] նկատմամբ: Ֆրանսուա Ա-ի հեռավոր ու նշանավոր հաջորդը՝ Նապոլեոն Բոնապարտը 1798-ին, եգիպտական արշավանքը ծեռնարկելիս, ավելի աշխարհագրական-ուազնավարական նոյատակ էր հետաղնդուն. նա ցանկանում էր բրիտանացի հակառակորդների առաջ արգելափակել Յնոկաստան տանող ծամփան: Յանում դրա նաև չերկմտեց, իրեն իսլամական կայսրության գլուխ հոչակեց:

Ճզորությունը հավաստելու նման ձգտումը վեր է նմացած բոլոր նկատառումներից: Դու հետ համեմատած, ինչ խոսք, Օսմանյան Պետության ճնշված քրիստոնյաների հետ համերաշխությունը ամհամեմատ թեթև է կշռում: Միշտ էլ կարևորվում էն գերտերությունների առևտուական ու քաղաքական շահերը: Նոյն տրամաբանությունը գործում է մեր օրերում: Ֆրանսիան շիադադեց թուրքերի հետ դաշինքի խաղաթուղթը գործածելուց ուստեղի դեմ 1856-ին, Դրիմի դատերազմի [112] ընթացքում՝ այն նոյն թվականին, երբ ստեղծվեց «Արևելյան առաքելությունը»: Այնուհետև, դարեր շարունակ, որմես փոխհատուցում, Ֆրանսի-

ան ստացավ Միջին Արևելքի՝ մասնավորաբես Լեհնա-լիբանանի կաթոլիկների, ինչղես նաև որոշ սրբավայրերի հովանավորության իրավունքը: Նախորդելով Եվրոպական այլ տերությունների՝ Փարիզը կարողացավ իր հովանին տարածել Օսմանյան Պետության քրիստոնյաների ու հրեաների վրա: Պետք էր, սակայն, սղասել 19-րդ դարի վիճակաշտ ճանաղարհորդների ուղեգործությունների տողավորությամն ու հատկանես հզոր գերտերությունների աճող թշնամությամբ, որովս գիտական հանդես գար Արևելքի իր հավատակիցների սկզբունքային դաշտանությամբ: Ակզրուն աշակողմյանները մտահոգված էին միայն կաթոլիկներով, բայց հետզհետեւ ձախակողմյանների մի մասը միավորվեց ու հանդես եկավ Օսմանյան Պետության բոլոր քրիստոնյա փորբանանությունների, մասնավորաբես հայ ազգաբնակչության դաշտանությամբ: Անատոլ Ֆրանսի (Anatole France), Ֆրանսի ոյ Պրեսսենսե (Francis de Pressensé), ժան Ժորեսի (Jean Jaurès), ժորժ Կլեմանսոնի (Georges Clemenceau) արժեքավոր ստորագրությունները հայտնվեցին Հայ Ճեղափոխական Դաշնակցության հիմնադրած ֆրանսերեն դարբերականի՝ «Պրո Արմենիայի» սյունակներում: «Պրո Արմենիայի» խմբագիրը խորհրդադաշտ բանաստեղծ, թատրոնագիր, հումարենից թարգմանիչ, լրագրող Պիեռ Քիյյարն (Pierre Quillard, 1864-1912թթ.) էր: Անիշխանական ու դրեժուսական լինելով՝ նա Օսմանյան Պետությունում բռնաճնշվող հայերի առաջին դաշտանությունը դարձավ: Այս բոլոր նշանավոր անձինք իրենց վրդովնունքը դողորկացին 1894-ի ջարդերի կալակցությամբ, որոնց մոտ 300.000 հոգի գոհ գնաց երկու տարվա ընթացքում: Հունամետ շարժումից հետո ասդարեւ ելավ հայամետ շարժումը: Ժամանակից շուտ դառնալով շահախմբայիններ՝ 19-րդ դարի մայրամուտի հայամետներն ունեին մի առանձնահատկություն՝ նրանց մեծ մասը ձախակողմյան ու հակակերական էր: Սա, չնչին բացառությամբ, մեր օրերում եղածի ծիշտ հակառակն է:

Այսպես, թե դ'Օրսեի ընդհանուր քարտուղարը՝ Ալեքսիս Լետեն (Alexis Léger), - բանաստեղծ Սեն-Ջոն Պերս (Saint-John Perse), - 1934-ին չվարանեց դահանջել, որ այն ժամանակ դեռևս ֆրանսիական մանդատի ներք գտնվող Սիրիայում աղաստան տան իրարի ջարդերից խոյս տված աշուրիներին [113]: 20-րդ դարի երկրորդ կեսից՝ Արևելքի քրիստոնյաներին Ֆրանսիայի աջակցությունը ավելի խորհրդանշական, երբեմն ընդհույս ծիծաղելի բնույթ ստացավ:

Ակսած 1920-ից, թե դ'Օրսեն կրոնական գործերի գծով խորհրդական ունի հատկանես Ֆրանսիայի ու Վատիկանի դիվանագիտական հարաբերությունները կանոնավորելու նորատակով: Շատ ավելի ուշ, 2009-ի հունիսից, եթք նախարարությունը գլխավորեց Բեննար Կուշները (Bernard Kouchner), իսկական «կրոնական ընեղացում» տեղի ունեցավ: Սակայն հարկ է նշել, որ եթե այսօր «Արևելքի քրիստոնյաների դաշտանության» ավանդությունը մի այլ դարի հուշ է թվում, արտաքին երևույթը դահուանվում է: Արևելյան Եկեղեցիների դատրիարքները միշտ ել քարձր ընդունելության են արժանանում Ֆրանսիայում, որտեղ նրանց ուկանություն են անտարեր քարեկրթությամբ: Արդյո՞ք նրանք նշտագրադ դետական դաշտունյաների երիտասարդ սերնդին արդի ժամանակի արժեքների ու իրականության հետ առնչություն չունեցող բանահյուսական հնարանություններ չեն թվում:

Համենայն դեռևս, ստավորիչ թվական Ֆրանսիայի նախագահների մի շարք ուղևորություններ, ինչղես 1996-ի հոկտեմբերին նախագահ Ժակ Շիրակի (Jacques Chirac) այցելությունը Սուլը Երևան ու նորա Երևան Երևանադեմի Ս. Աննա Եկեղեցում:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐՍԻՆ ԳՐԵԼ

Կայուն, հաստատում, կարելի է ասել՝ ավանդություն դարձած Շշմարտություն է՝ հանուն Արևելքի Ծննդված փոքրա-

նասնությունների դաշտում յուրաքանչյուր քայլ նախ և առաջ ծառայում է, որի ծառայի «դաշտումող» երկու ազգային, աշխարհաբարձրական ու տնտեսական շահերին: Ավելիմ՝ «աշխարհաբարձրական դաշտերագմի միջոցներոց» (ժոր Կորմ), որոնց հզոր լծակները, ինչողիս բնույթի էլ լինեին, իբր որի առաջնային յուրաքանչյուր շահագրգիռ խճի անվտանգությունը բռնաճնշողներից, առանձին դեղորում, դիցուք՝ օրինակ Օսմանյան Պետության ու նրանից տարանջատված երկուների փոքրամասնություններին ավելի վճար են դատձառել, քան դաշտումների: Պատահական չէ, որ եվլողական տերությունները խոստովանում են իրենց ունեցած ազդեցությունը փլուզվող Օսմանյան Պետության մեջ՝ դատրաստվելով նրա նախատմանը:

Ըստ այդ տերությունների տեսակետի՝ ամեն միջամտություն դեռև է դաշնութեական լինի երևակայական ակնկալիքներով, քայլ իրականում բնի տվյալ դահի իրենց շահերից ու նրատակներից: Ամեն դեղբում, ինչողիս էլ որ եղած լինի տվյալ դահի հարաբերությունների բնույթը (նտավորական, տնտեսական, քաղաքական), նոյնիսկ խաչակիրների, Լուի ԺԴ-ի ժամանակները չեն կարող համեմատվել այն ամենի հետ, ինչ տեղի ունեցավ 19-րդ դարում:

Արևելի քիչստոնյաններին դաշտումներու առասպելը նախ և առաջ դայմանավորվեց մինչյանց հանդեղ գերիզող տերությունների ունեցած թշնամանքով ու Արևելյան հարցի առաջնահերթությամբ: Ժամանակը ավելի քան քարեղատեի եր թվում, որուստի հավաստեր դատմական երևակայական հարաբերությունների այն խորությունը, որոնք իբր Ֆրանսիային կաղում էին Արևելի քիչստոնեական նախնական համայնքներին: Դեռ միայն հայտնաբերվեց (թերևս մինչև իսկ հորինվեց) սուրբ Լուի Շ արքային վերագրվող հրովարտակը, որն իբր 1250-ին Աքքայում [114] նա տվել է մարոնիներին՝ նրանց շնորհակալություն հայտնելով:

Խաչակիրներին սատարելու համար: Այս իրովարտակը տեղ չի գտել Լամարտինի «Ուղևորություն դեղի Արևելիք» առաջին իրատարակության (1835) մեջ, քայլ անքացաւրելի առեղծվածով հայտնվել է երկրորդում (1849): Այս վավերաթուղթը, որի արժանահավատությունը վեճեր է հարուցում, այսպես թե այնուև մնում է ֆրանսիայի ու Արևելիք քիչստոնյանների դատմական կաղերը հավաստիացնող ամենահայտնի ծեռագրերից մեկը: Այն միայն մի խնդիր ունի՝ հավատացնել, որ սուրբ Լուիի հանդիպումը մարտիների հետ եղել է խաչակրաց այդ արշավանքի գլխավոր դրվագը: 400 տարի անց՝ 1649-ի առրիյ 28-ին Լուի ԺԴ-ի հոդա է հովանավորչական նոյնօքան հոչակավոր մի նամակ «Քրիստոնյա մարոնիների նորին ամենադատվողայուն դատորիարքին, բոլոր հոգևոր առաջնորդներին, Եկեղեցականներին ու աշխարհականներին, հատկապես Լեռնայիրամանում արտողներին»: Որոշ ուկեզօծված առասպեկտեր ավելի հեռում՝ դատմության խորեն են գնում՝ վկայակոչելով Փարիզի դահաղան սրբուի ժմկիսի և սուրբ Սիմեոն Սյունակյացի [115] նամակագրությունը 5-րդ դարում:

Ու չնայած Լիոնի մետաքսագործներն իրենց հատուկ գործառություններով դարբերաբար հասնում էին Լևանտ [116], ընդհուպ երկու դատերազմների միջև ընկած ժամանակաշրջանի քաղաքական-դիվանագիտական խայտակալությունը՝ Ֆրանսիան օսմանյան նախնին տարածքի քիչստոնյանը կաղող դատմությունը միանշանակ չէ: Այն մշուշված է երկդիմությամբ, ծախսոված հանդիպումներով, հուսախարություններով, *realpolitik-ով* [117], որոնցից ոչ մեկը մինչև այսօր դավաճանություն կամ անջնջելի խահան չի համարվում:

Ինչողես նկատել է մարոնիներին ավանդաբար ֆրանսիային միավորող կաղերի վերլուծաբան Բեռնար Շեյբերգը՝ հարցը միայն ու միայն ներկայացուցչականությունն է [118]: Այս նախընտրության արժանացած կաղողը,

սակայն, դատերազմից հետո, ժամանակի ընթացքում թուլանում է: Ֆրանսիական հասարակության արագընթաց աղաքրիստոնեացման դատձառով, հովանավորչության թեման վերանում է նոյն չափով, ինչ չափով որ նվազում է Ֆրանսիայի ազդեցությունը Մերձավոր Արևելքում: Ինչ վերաբերում է Ֆրանսիայի հանդեմ գոյություն ունեցող հաճակրանքի դրանագլխին՝ այն անդառնալիութեն արժեզրկվեց՝ նանավանդ 1956-ին Սուեծի ջրանցքի ազգայնացման դեմ եղած միջամտությունից հետո [119]: Դեռևս բուն հակագեցություն Սիրիայում, որտեղ Ֆրանսիական վարժարանները ժողովրդական ցասման թիրախ դարձան: Արևելքի քրիստոնեական միջավայրում Ֆրանսիայի ազդեցության վերելքն սկսվեց «Արևելյան առաքելության» ստեղծումից մի քանի տարի անց՝ 1860-ին, արյունահեղ այն դասին, երբ Նարուեն Գ-ը դուրզիների սանձագերծած՝ մարոնիների նախօրին վերջ տալու համար վծուց գործ ուղարկել Լեռնալիբանան, - ու շարունակվեց մինչև 1914՝ առաջին աշխարհամարտի սկիզբը: Դա՝ դարձավ *French Doctors*-ի [120] նախերգանքը: Լամարտիններից (Lamartine) ու շատորիաններից (Chateaubriand) մնացած այլասիրությունն ու ոռմանտիզմը հաշտ մեկտեղվեցին դասի շահերի հետ:

Զգտելով օգտվել Օսմանյան Պետության կառուցվածքի թուլությունից, Ֆրանսիայի՝ լսանու ուժը դնելու մտադրությունն ուղեկցվում է Արևելքի քրիստոնյաներին դաշտունակությունուն ուղղվում է Արևելքի քրիստոնյաներին դաշտունական մկրտումները հրատուրիչ ներկայացնելու ծիգը հասնում է ընդհուպ խաչակիրների արշավանքներն ու մարոնիներին դարձնում Ֆրանկների հետմորդներ, այսինքն փորձ է արվում մարոնիական շինուազում ստեղծել, միաժամանակ գաղութատենչ Ֆրանսիային ներկայացնել ա-

զատարարի դափնելոսակով: Սարդկային իրավունքները դաշտունակություն ու դատրվակով, Ֆրանսիան ներխուժում է Լսանու ու անզիջում դայթար նղում բրիտանացիների դեմ, որոնք չկարողանալով շահել մարոնիների հաճակրանքը, սատարում են նի այլ «շահառու համայնքի»՝ դուրզիներին:

Որպես «գուրգուրող մայրիկի» հետ վաղնջական առնչությունների վկայություն, Լիբանանի մարոնի եկեղեցները տարին երկու անգամ՝ Չատիկին հաջորդող երկուշաբթի-ին՝ դատրիարքարանում, իսկ Վերափոխման տոնին՝ օգոստոսի 15-ի ամենամոտ կիրակին, Բեյրութի արքեպիսկոպոսարանում, դատարագ են մատուցում «Ֆրանսիայի հանար»՝ ծայր աստիճան աշխարհիկ Ֆրանսիայի Յանրաբետության դեսպանի ներկայությամբ:

«Պաշտոնական դատմագրությունը» լուս է, չի նշում, որ Ֆրանսիայի հովանավորությունն իրականացել է երկու գործունուկ՝ «քաղաքակրթական առաքելության» միտող Ֆրանսիայի ամբողջատիրական քաղաքականությամբ ու «օսմանյան զնդանից» դուստ որթնել և կայուն կենսակերպ վայելել տեսնչացող ու դրան զգողող փոքրամասնությունների շահագրգուվածությամբ: Սակայն վիղական ազնվականներով (Շատորիան, Լամարտին) սնվելը, սուրբ Լուիի, Լուի Ժ-ի ժամանակներին՝ այսինքն ակունքներին վերադառնալու միտումն ու իին վարչակարգի կարոտը, հակասում էին Լուսավորիչների գաղափարներին: Նշանակոր Շանաղարհորդ Վոլնեյը (Volney) 1787-ին իրատարակում է իր հոչակավոր «նամաղարհորդություն Եգիպտոսում ու Սիրիայում», գիրքը, որը գրական դրուց է դառնում: Նեղմանակը ոգեկոչում է միջնադարի խաչակիրներին, բացահայտում մարոնիների հոգևորությունը, որոնք ընկալվում էին որպես Ֆրանկների հետնորդներ՝ հայտնված թուրքերի լին տակ: Օսմանցիների բարբարոսության դեմ դայթարելու քրիստոնեական անհրաժեշտ դաշնություն:

1811-ին հրատարակած իր «Փարիզից Երուսաղեմ ճգվող ուղի» ծամփորդական նոթերում Շատոքրիանը նկարագրում է 1806-ի հոլիսից 1807-ի հունիս Արևելյա կատարած իր ուղևորությունը: Գրողը վերապրում, վերաշարադրում է խաչակիրների առաքելությունը, նրան հիացնում են հանդիդած քրիստոնյաների «ազնվությունն» ու «վեհանձնությունն»: Սարոնիների և դուլգիների միջամայնքային առակատումները, որոնք 1840-ականներին դառակտեցին լեռը [121], եվրոպական դիվանատներում բռնը անդրադարձներ, իսկ Ֆրանսիայի խորհրդարանում կրօնու վիճականություններ հարուցեցին:

«Արևելյան առաքելությունում» այժմ մնացել են միայն մարոնի հոգևորականները, ծամանակից շուտ «շահախմբային» դարձածները, որոնք, իմանադրամներ հայթայթելու, իրենց դատին համակիրներ համախմբելու միտումով, ֆրանսիական համրային կարծիքին ուղղված գրքովկներ ու հոդվածներ են հրադարակում: Այս «ազդեցության գործակալներ» կարողացան մինչև իսկ հասնել Հռոմ, լիազորագրեր կորզել, այնուհետև շրջանառել կաթոլիկ երկրներում: Սովորաբար նրանք ճգտում են իսլամական հայածնի մշտական զոհ ներկայացնել Արևելիք քրիստոնյաներին, որոնց միակ փրկությունը, իբր, եվրոպական քրիստոնության առատաձեռնությունն ու գործնական միջամտությունը կարող է լինել: Այս երևույթը Բենար Շեյքրգերը հակված է կոչել «ֆրանսիական ավանդույթ» կամ «մարոնիական ավանդույթ»՝ նկատի ունենալով մարոնիները Ֆրանսիային կարող դատնական առնչությունները, որոնք մի կարծ դահ կարող են մարոնիական համայնքի շահերը դաշտողանել, բայց մեծ հաշվով վճռորոշ չինել: Ֆրանսիայի հետ դատնական կամերի շարունակումն ինչ-որ տեղ ինքնամերկացնան է վերածվում: Կատթարագույն դեմքում կարելի կարծել, թե մարոնիները շահագործվել են Ֆրանսիական միջամտությունն առահովելու

հաճար: Դամենայն դեղու, չափազանց հակակդերական ծախակողմյան հանրապետականները, արմատական ընկերվարականները, ինչողև նաև Գամբետտայի [122] գլխավորած Երրորդ Հանրապետության մյուս երեխի դեմքերով չեն դադարել քննել իրենց մարոնի շահառութերին՝ աշխարհառազնավարական չափազանց կարևոր տարածաշրջանում իրենց ծրագրերն իրականացնելու համար: Ավելի ուշ, «մարոնիական շահախմբի» շանքերը կտան իրենց դտուղները Սեծ Լիբանանի դետության ստեղծմանը՝ ի վճառ Սիրիայի:

ՈՂԻՍԱՍՏԱԸ ՌԻԴԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԸ

Ողիսաստանը դատմականորեն Արևելիք քրիստոնյաների մի այլ գերղացտղան և ներկայանում: Սովորանի քրիստոնյա հոգատակների քրիստոնյա գորեղ տերության հիվանավորության առաջին դաշտոնական հիշատակմանը հանդիդում ենք Քյուչուկ-Կայնարջիի հաշտության դայմանգրում (1774), որը ճանաչում է Օսմանյան Պետության ուղղափառների նկատմամբ Ողիսաստանի դաշտումնության իրավունքը: Բայց միայն հաջորդ դարում, մանավանդ 1840-ից հետո, Օսմանյան Պետությունը մասնաւութեատի մրցակցության ծիրում, «խնամակալության» թեման արդիական դարձավ, նաև՝ Օսմանյան Պետության ներքին գործերին միջամտելու դատրվակ հանդիսացավ: Ցարական Ողիսաստանը, ճգտելով մուտք ունենալ դեմի տաք չրեք, Բեոյինի վեհաճողովում (որի որոշումները մեռած տաք մնացին) օսմանահոգատակ հայերի համար ամծնական իրավունքների առահովում ու հաղուկ կարգավիճակ դահանջեց: Այս դիրքորոշման մեջ Օսմանյան Պետության տարածքային ամբողջականության նկատմամբ հատկապես ողիսական վտանգ նկատ-

վեց, որն էլ ավելի բորբոքեց թուրքական ազգայնամոլությունն ու սաստկացրեց հակարդիստոնեական հալածանքները:

Ուսաստանի, Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի անգիշում մրցակցությունն ի հայտ եկավ նաև կրթական աստարեզում: 1860-ից սկսած, ֆրանսիական կառավարության զգալի հատկացումներով, օսմանյան Պետությունում սկսեցին քազմանալ ֆրանսերենի դասավանդումով կաթոլիկական դղորոցները՝ լարված հականարտության մեջ մտնելով ամերիկյան ավետարանական և ոուսական ուղղափառ դղորոցների հետ: Ու մինչ «ֆրանսիական քաղաքակրթական առաքելություն» կարգախոսի ներքո ֆրանսախոսներն ու ֆրանսաներերը տարածվում էին, ոուսական ազդեցությունը սահմանափակված էր մնում Լիբանանով:

Ուկրաինայից դուրս մղվելը ուազմավարական լուրջ դարտություն հանարելով՝ Վլադիմիր Պուտինի Ռուսաստանը շրջվեց դեղի Սիրիա՝ հայտարարելով ուղղափառ դավանանքի քաղաքացիներին դաշտողանելու իր միտումը: Այդ դաշտողանությունը դաշտողական հայտարարությանը շատ արագ դիտի տարածվելու բոլոր քրիստոնյաների վրա: Դրանով Սոսկվան վերստանձնեց այն առաքելությունը, որը «կատիտուպասիոններ» անվան տակ ստանձնել էր Եկատերինա Բ-Ա 18-րդ դարի վերջում: Սուաքելությունը գուգակցվեց արևելյան Սիչերկարականում ոուսական ներկայության ամրադրմամբ, այսինքն Տարտուաում և Սիրիայի մնացյալ ծովափին ուազմական նավատորմի տեղակայմամբ:

Հետկայսերական Ռուսաստանն ամեն շամք թափում է վերահաստատելու համար այն հարաբերությունները, որոնք Մոսկվայի դատորիաքությունը կաղում էին տարածաշրջանի ուղղափառ տարբեր Աթոռներին: Դա առավել ակն-

հայտ է հետևյալ օրինակում. Սիրիայում ոուսական ուազմական ներերի միջամտության ծիրում, Անտիոքի և համայն Արևելի հոյն ուղղափառ դատորիարք Յուհաննա ժ Յագիմ (ում աթոռամիտը գտնվում է Դամասկոսում) հետեւղականորեն սերտացնում է կապերը Ռուսաստանի ու Սերբիայի քոյլ Եկեղեցիների դատորիաքնների հետ: Լրատվամիջոցներին ցցցել էին Ռուսական Ուղղափառ Եկեղեցու դատորիարք Կիրիլի նկարները առաջին օդային հարվածները հասցնելու համար Սիրիա թռչող Սովորյներին օրինելիս և նրա հայտարարությունները, հատկապես՝ «Դամուն արդարացի աշխարհի ու ահարեկչությունից տուծած մարդկանց արժանադատվության» ահարեկչության դեմ դայրարք քարոյական և, եթե կուգեք, սրբազն դայրար և՝ արտահայտությունը, որն ուղղակի կարելի է «սրբազն դատերազմ» թարգմանել [123]:

ՀԵՏԵՎՈՐՎԿՎԱԾ ԺԽՏՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՐԴԿՎՈՐ «ՎԿՎԱՆՐՈՒՅԹ»

Սայրս-Դիկոյի 1916-ի գաղտնի համաձայնագրի դրույթները որոշակիացնում էին Սիշին Արևելքի աղաքա սահմանները, միաժամանակ Մերձավոր ու Սիշին Արևելքում Ֆրանսիային ընձեռում իր ներուժը ծավալելու անկաշկանդ հնարավորություններ։ Միջոցների, ռազմավարական որոշակի հեռամկարի բացակայության, ինչողևս նաև ազգային շահը հաշվի չառնելու դատճառով (այդ շահը կարող էր տարածաշրջանի ժողովուրդների ազատագրմանը հասցնել), ամեն ինչ իր կործանարար հետևանքներով տաղալվեց անխոհեմ բաղաքանության խորացին։ Սուանց ամենաշնչին երաշխավորությունն իսկ ունեալու՝ ֆրանսիացիներն ու բրիտանացիները հավատացին կամ ուզեցին հավատալ իրենց հետ բանակցող թուրքերին, որոնց հետ երկողմանի անհավասար համաձայնագրեր կնքեցին՝ արհամարհելով վստահությունը իրենց դաշտուանել հավակնած բնակչության։

Կիլիկիայի, Արևելքի տարածքների [124] և Ալեքսանդրետի սանչակի նման տարածքների Ֆրանսիայի կողմից լքումը, իսկ բրիտանացիների կողմից Հակկարիի լքումը վերքի խոր սովոր են թողել տեղի բրիտանյա համայնքների ու նրանց սփյուռքների հիշողության մեջ։

Կիլիկիայում՝ Արևելյան լեգենդի շարքերում ծառայած ֆրանսիացի սոված Պոլ Ռյու Վենու իր հուշերում վկայակոչում է Ֆրանսիայի՝ ամբիոններից հնչող ձայնը։

«Հայաստանը հոգնարի մեջ է, ասում է Անատոլ Ֆրանսը, բայց հարություն կառնի։ Արդարության ու ազատության համար մարտնչող մեր զորաքանակների հաղթանակից հետո, Համաձայնականները կատարելիք բազում դար-

տականություններ կունենան։ Այդ դարտականություններից սրբազնագոյնը նահատակ ժողովուրդներին՝ Բեղային ու Սերբիային հարություն տալը կիմի։ Այնուամ նրանք կատահովեն Հայաստանի ազատությունն ու անկախությունը։ Հայաստանի վրա են հակվում ու ասում՝ «Քոյլ իմ, վեր կաց»։ Դեշանելը, Բրիտանը, Կրեմանսոն, Պուակարեն, Սիլերանը կիրականացնեն իրենց ջերմ խոստումը»։ [...]»

Նա մեջբերում է Արիստիդ Բրիտանին [125].

«Սուաջին անգամ մեր երկիրն անզոր գտնվեց՝ չկարողացավ թուրքիայում իրագործել իր քաղաքակրթական առաքելությունն ու կանխել կառավարողների բարբարոսությունը, սակայն, երբ հնչի օրինական հասուցումների ժամը, չի մոռանա հայ ժողովողի ողբերգական փորձություններն, ու իր դաշնակիցների հետ համագործակցելով՝ անհրաժեշտ ամեն միշոց կճենարկի խաղաղ կեցություն ու առաջադիմություն աղահովելու նրանց համար» [126]։

Ողբերգության երկորդ արարը խաղարկվեց դատերազմից անմիջապես հետո։ Քեմալականների հզորացման հետ՝ նոր մտայնություն ծնավորվեց, Վճռվեց օստարեկոյա զորախմբերին մեկընդիշտ վոնդել Անատոլիայից (Սուաստաֆա Քեմալի զինյաները այն համարում էին «թրբության» սրբություն սրբոցը)։ Բոլշևիկների հետ դաշնակցելու վախը, տարածաշրջանում ֆրանսիական ու բրիտանական զորամահավորումների մրցակցության խաղերը իրավիճակը վատթարացրին։ «Միություն և առաջադիմություն» կոմիտեի (ՄԱԿ) ցեղասպան գործիչներին ծերբակալելուց ու Սալյա աքսորելով բանտարկելուց հետո, բրիտանացիները հայերի բնաշնչնամ համար դատադրատված այդ դետական դաշտոնյաներին անդատիծ ազատ արձակեցին 1922-ին։

Ցեղասպանության արհավիրքները վերաբերած աստվա-

ծարան Գրիգորիս ծայրագույն վարդապետ Բալաջյանը ստանդից հազիվ մի քանի տարի անց շարադրած հուշերում հետևյալ դառը տողերն է գրում բրիտանացիների կտիության մասին.

«Ո՞վ կրնար յանդգնի խորիի թէ օրեր ողիտի գային, որ անգլիական դարլամենտին մէջ հայասէր երեսփոխանի մը հարցադրման դատավախանելով, Անգլիոյ վարչադրետը՝ Պոնար Լօ (Bonar Law) [128] ողիտի ըստը. «Ո՞վ ըսաւ, որ մենք աշխարհի ոստիկաններն ենք...» » [129]:

Նոյնքան խայթող են Ֆրանսիայի հեռանալու մասին տողերը.

«Ո՞վ կրնար մտքն անցընել որ ոչ միայն մեզ չղիտի ազատագրեն, այլ՝ արդեն ազատագրուած երկիրներ, ինչդեռ արեւելան Թրակիան ու մանաւանդ Կիլիկիան ֆրամսացիք կրկին թուրքերուն ողիտի յանձնին 1921-ի Դեկտեմբերին՝ 120 000 հայ ժողովուրդ ձմրան խստութեանց եւ 15 օրուան մէջ արտագաղթի բռնադրատելով՝ միմիայն Սուրբիան աժան կերպով իրենց ծեռքը դահելու համար:

Ո՞վ ողիտի կրնար երեակայել, որ «Ժողովք Երողողայէն ողիտի Վտարուի» ըստո դետական մեծ մարդիկ, դարտուած թուրքը կրկին Երողողա ողիտի հրահրէին՝ անոր ախործակը այնքան սրելով որ մինչեւ 1913-ի ճախաղալքանեան դատերազմի սահմանները դահանջեր... » » [130]:

1922-ն ավարտվում է արևմտյան Անատոլիայուն ոչ-մուսուլման տարրի հետևողական, ծրագրավորված վերացմանը. թուրք ազգայնականները գրավում են Զմյունիան ու քարավուն Շոնկող 28 մարտանավեր ունեցող Հաճածայնականների անվորով հայացքի ներքո կոտորում հայ և հոյն բնակչությանը: Բալաջյանը հիշում է.

«Ո՞ր հայը կրնար խորիի թէ «Հայոց այս կոտորածը վեր-

ցինն է» ըստո մեր Դաշնակից մեծ դետութիւններուն 28 հոկտեմբերը դարձ հանդիսատեսք ողիտի ըլլային Զմյունիոյ մեծ եղեննին ու հրդեհին, 1922 Սեպտեմբերին, եւ Զմյունիոյ քարավին վրայ խոնուած հարիր հազարաւոր հայ եւ յոյն գաղթականներուն ջարդը, առեւանգումները, ծովը թափիլը դիտելով ողիտի քաւականացին կամ սինեմայի ֆիլմեր ողիտի քաշէին իրենց մարտանաւերին...» [131]:

«[...] Ո՞ր յողութես մարդը ողիտի կրնար իր յողութեսութեան այնչափ թափ ու թեւ տալ, որ փորձուեր խորիի, թէ 1918-ի աշնան յաղթանակած Դաշնակից դետութիւններու կողմէ Սուտրոսի դաշնագրով գինաթափ եղած թուրք դետութիւնը 200 միլիոնի արժեքով գենք, իրասայլեր ու օդանաւեր ողիտի ստանար քաղաքակրթութեան ուսիվորայ աստետական Ֆրանսայէն՝ Կիլիկիայէն մեկնած դահուն, որդեսզի թուրքը կարենար յոյնը Զմյունիայէն դուրս վոնտել ու ծովը թափել» [132]:

Այլ վկայություններ հաճմելմում են Հայտնության այս տեսարանին: Մարդիկ լողում են դեղի նավերը: Լուսարձակները սկեռված են նրանց վրա: Նրանց վանում են: Լողալով փրկվել ուզողուների ուղղությամբ անգլիական նավերից ջրի շիթեր են բաց թողնում, մինչ ուրիշներ գործի են դնում իրենց լուսանկարող սարքերը:

Մինչեւ Օսմանյան Պետության փոքրանանությունների՝ հազար անգամ կրկնված, Հավատո հանգանակ դարձած անվտանգության ու արդարության անձեռնմխելի իրավունքն իր արժանի տեղն էր գրավել առաջին աշխարհամարտից անմիջապես հետո ստորագրված դայմանագրում:

«Ո՞վ կրնար մտքովն իսկ անցընել, որ համաշխարհային դատերազմէն վերջ կնքուած թուրք դաշնագիրներուն մէջ իբր հաւատոյ հանգանակ միշտ յիշուած **Քիսունեանց փոքրամասնութեանց դաշտուանութեան**, արդարու-

թեան եւ իրատոնի անժիսելի դատը թոյլատու մեղսակցութեամբ ովհի փոխութը քրիստոնեայ բոլոր տարրերու մնացորդներուն Փոքր Ասիային Վտարումին: Ի՞նչու քրիստոնեայ փոքրամասնութեանց դաշտոյան Ղաշնակից մեծ տեսութիւնները փոխեցին յանկարծ իրենց լեզուն ու ըսին. «Ի՞նչ ընենք, ուրիշ ճար չկայ, թուրքին հետ ձեր դրացնութիւնը շարունակել այլեւ անհնար է. հեռացե՛ք թուրք տեսութեամ սահմաններէն» » [133]:

ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱՆՎԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՐՈՒԽԸԸ

Գտնվելով Միջերկրականի հյուսիս-արևելյան մասում, հարավային Անատոլիայի դատմական տարածաշրջանը բնական սահմաններ ունի՝ հարավում՝ Եգերող Միջերկրական ծովը, հյուսիսում՝ Տավրոսյան, արևելքում՝ Ամանոսի լեռնաշթաններն ստեղծում են յուրօրինակ եռամկյուն: Կիլիկիայի հովիտը բնականորեն բեղուն է, ունի ընդարձակածավալ հողատարածքներ, որոնք առատորեն ոռոգող երկու հորդահոս գետերը սկիզբ են առնում ջրի անսուր դաշտարներ ունեցող Տավրոսյան լեռնաշղթայից: Լեռնաշղթան նաև Կիլիկիայի ու Անատոլիայի միջև բնական սահման է փաստորեն:

Միջնադարի հայկական հին թագավորությունը՝ Կիլիկիան 20-րդ դարի սկզբին իր վրա է սևեռում ծավալաղաշտների ուշադրությունը: Կիլիկիայով անցնող Բեոլին-Բաղդադ երկաթուղին (Bagdadbahn) [134] ուազնավարական կարեւորություն է հաղորդում տարածաշրջանին: Գերմանացիները դա շատ լավ էին գիտակցուն, հավակնում էին Կիլիկիան թուրքական վասալական տեսության հարևան գաղութ դարձնել, իրենց անհագ ընչափրությանը հագուրդ տալ: Յենց այդ նոյատակով է կառուցել էին Բեոլին-Բաղդադ երկաթուղին, որա երկարությամբ գտնվող կայարանների շուրջը փոքրիկ բնակավայրեր ստեղծել: Քանի

դեռ հորիզոնում դատերազմը չէր ուրվագծվել՝ տարածաշրջանի հայ (իիմնականում երկրամասի խորքում) ու հոյս (իիմնականում՝ ծովեղերքում) բնակչներն այդ կայսերադաշտական ծրագրի իրականացմանը խոչընդոտ էին համդիսանում:

Յայկական հիմավոր թագավորության հետմորդները, որոնք արնաքամ էին եղել նախաեղեղումյան՝ 1895-1896 թթ., աղա՝ Աղանայի՝ 1909-ի կոտորածներից, այնուհետև՝ բում՝ 1915-ի ազգասումանությունից, իրենց հոյսը կատել էին Յանաձայնականների հաղթանակի հետ: Սայս-Պիկոյի համաձայնագիրը վավերացրել էր Սիրիայի ու Սիջագետքի հաշվարկված քածանությը. Ֆրանսիայի անձիշական ազդեցության տակ էին անցնում Կիլիկիան, ծովափնյա Սիրիան, Յալեմի ու Դամասկոսի շրջանները: Սիա այդ դահին աստղաբեր է ելնում հայկական Ազգային դատվություն նախագահ Պողոս Նուբար փաշան (1851-1930)՝ Եգիպտոսի նախկին վարչապետ Նուբար փաշայի (1825-1899) որդին: Մեծ դատերազմի ընթացքում, մինչ հայ ժողովուրդը բնաշնչվում էր, նա, քանի որ բնակվում էր Փարիզում, հայկական զորամիավորում կազմավորելու առաջարկով բանակցում է Յանաձայնականների քաղաքական դատախանատունների հետ: Այդուն ծևավորվեց Արևելյան լեգենը, որը հետագայում հայտնի դարձավ Յայկական լեգեն անվանք: Նշատակը հստակ սահմանված էր՝ նա հայկական աղաքա բանակի կարծը կորիզը ուստի դառնար: Տեղաստանությունից վերադրածներից ու սփյուռքի կամավորներից կազմված չորս հազարուոց լեգենի մարտիկներին Կիորոսում մարզում էին ֆրանսիացի սղանները: Լեգենն 1918-ի դեկտեմբերին հասավ Կիլիկիա: Ընդառաջելով Ֆրանսիայի՝ տվյալ իրավիճակում Լևանուում, հատկապես Կիլիկիայում ամրադրման վելու անհրաժեշտությանը, միաժամանակ, մարտախումբն արտահայտում էր ազգային ազատագրության

մասնակցելու կամքը և հաստատում Հաճածայնականների կողքին հայկական ներկայությունը՝ դատերազմի ավարտից հետո ձայնի իրավունք ունենալու համար:

Կիլիկիայի աղագայի հեռանկարը կանխորոշված էր երկրագործության ու ճարտարագիտության ասղարեզմերում Պողոս Նուբար փաշայի փորձառությամբ: Հատկապես ատամնանիվների նրա մասնագիտական իմացությունները, որ հայտնություն եղան փարիզյան ու լոնդոնյան շրջանակներում, դայնանավորված էին Եգիպտոսի երկաթուղային ընկերության նախկին տնօրենի իր անցյալով: Պողոս Նուբար փաշան ճարտարագետի ու արոյունաբերողի բարձրագույն կրթություն էր ստացել Փարիզում, բելգիացի գործարար բարոն Ամրենի (Baron Empain) հետ Կահիրեի մերձակայքում հիմնադրել էր Յելիողոլիս նոր քաղաքը: Քաղաքաշինության ու փոխադրամիջոցների ոլորտմերում տարիների հմացությունը դրդեցին հուշել Հաճածայնականներին, որ կրկնադատկեն Բաղդադի երկաթուղու երկարությունը, այն հասցնեն «ազատ տարածաշրջան»՝ Կիլիկիա, ընդհույ փոխադրումների համար միշտ բաց մի նավահանգիստ, օրինակ՝ Սերսին:

Ամենայն հավանականությամբ Կիլիկիան ոյսի լիներ ցեղասումնության վերաբրոդների համար ազգային օչախ՝ «մեծ, միացյալ Հայաստանի» վերականգնման ձախողումից հետո հայերի վերջին աղաստարամը: Այս ոյսի դառնար կիլիկյան ինքնավար Հայաստան, որը ոյսի դաշտումներին մարզված հազարավոր լեգեննականները: Ավելի՞ զինադադարից հետո Հաճածայնականներն աղահովելու էին ցեղասումնությունը վերաբրած հարյուր հազարավորների ներզագայթը: Այսինքն՝ դահիճներն ու զոհերի հարազատները կողը-կողը էին աղբելու:

Հատ յակ հասկանալով հանդերձ Փարիզի ու Լոնդոնի նողատակները՝ Պողոս Նուբար փաշան տեղի տվեց Ֆրան-

քիտամական լույ մրցակցությանը: Նա զոհ գնաց հատկաղես *realepolitik*-ի խարդավաններին: Յնդկաստան տանող ճանադարիի վրա իր հայացքը հառած Մեծ Բրիտանիան Սիրիայի տարածքում անցուղու կարիք ուներ: Հաճածայնականների ճարտավարական խաղերը, Ֆրանս-բրիտանական մրցակցությունը հասցրին նրան, որ Լոնդոնը հենվեց Հաշիմյանների [135] վրա՝ Ֆրանսիացիներին Սուեզի ջրանցքից հնարավորինս հեռու մղելու միտումով:

Չնայած ուազմական անհամենատ ծանրակշիռ ուժ ներկայացնելուն, բրիտանացիները, 1919-ի գարնանը, դեռևս մինչև Ֆրանսիացիների վարչական տեղակայումը, տարածքը գիշեցին: Երբ Ֆրանսիան ստացավ Կիլիկիայի մանդատը, մեծ դատերազմից արմաքամ էր եղել արդեն: Լիովին թուլացած երկիրը հայտնվել էր Սիրիայում մի կողմից Զեբել Դրոզի ու արաբական միացյալ թագավորության կողմնակից ազգայնականների, մյուս կողմից՝ Կիլիկիայում բենալական գինյալների միջև, որոնք արդեն ներխուսել էին և Ալեքսանդրոստից մինչև Սուսով հասնող տարածաշրջանն էին դահանջում:

Հաճածայնականների փոխադարձ թշնամանքից օգտվելով, տարածաշրջանում բնակվող, դեռևս ոչ այնքան ինքնավստահ թուրք ազգայնականները դիվանագիտական ճարողկություն դրսնորեցին ու իրենց մերենայություններով ի վերջո կարողացան ուազմական դարտությունները քաղաքական հաղթանակների վերափոխել: Խուսափելով Անատոլիայի արևոնութքում հույների վրա հարձակվելուց՝ բենալականները նախ շրջվեցին դեռի շրթայի թույլ օղակը՝ այսինքն Կիլիկիա, որտեղ բրիտանացիները, նախքան տարածաշրջանը վատ մարզված Ֆրանսիական քանակին գիշելը, թուրք դաշտոնյանների միջոցով անուղղակի կառավարում էին ստեղծել: Ակսվում են 1919-ի նոյեմբերից Բեյրութում դաշտոնավարող, և անտում Ֆրանսիայի բարձր համանակատար, չափազանց թուրքամետ

գեներալ Գուրոյի և օրենքից դուրս համարվող քեմալականների գաղտնի բանակցությունները: Իրականում հաղորդակցական կամք սկզբանափորել էր Գուրոյի նախորդը՝ ժործ Պիկոն, որ թուրք ազգայնական առաջնորդների հետ հանդիպումներ էր ունեցել Կոմիտյում ու Սեբաստիայում:

Ֆրանսիացիներին վկանելու համար, Մուստաֆա Քենալը, հենվելով իր գինյալների վրա, մշակել էր հոգեբանական դատերազմով ուղեցվող ուազմական հալածանքի մարտավարություն: Մարտավարությունն իրեն արդարացրեց նաև Ֆրանսիացիների՝ դատերազմից հոգնած լինելու դատձառով:

1920-ի սկզբին գրոհի ենթարկվեց Մարաշը: Ֆրանսիացիները գեներալ Բերերի հրամանով լրեցին քաղաքը՝ երկու հազար հայերի թողնելով ճակատագրի բնահանույթին: Նրանց մի մասը կկոտորվի, մյուս մասն էլ դաժան ծնելովա հմվարին դայմաններում կմեռնի նահանջի ճանապարհին: Դայաստանի (հետո՝ 1919-ի հունվարից 1920-ի սեպտեմբերը՝ Կիլիկիայի) վարչական հանձնակատար Բրեմոնն իր հուշերում Ֆրանսիայի հետինակրությունը վարկաբեկող կիամարի «այդ ահավոր քայլը»: Շլացած իրենց անակնկալ հաղթանակով, մասամբ էլ Ֆրանսիացիների անմարտունակությամբ, քեմալականները հարձակման անցան կրկնակի ոգևորությամբ: Այնթաղ քաղաքը մի տարվա՝ 314 օրվա ընթացքում, չորս անգամ դաշարվեց: Իրենց թաղերը քաշված հայերը հանգիստ, անաղնուկ սղասում էին մինչև Ֆրանսիական բանակը հայտնվում էր ու կարգուկանոնը վերականգնում: Այնինչ, քեմալականների՝ գեներերը հանձնելուց և անձնատուր լինելուց մեկ ամիս անց, 1921-ի փետրվարի 9-ին, Ֆրանսիան, որ Այնթառը և Կիլիկիայի ամբողջ արևելյան տարածաշրջանը վերահսկում էր Լոնդոնի 1921-ի մարտի 15-ի դաշնագրով, Այնթառը զիշեց հակառակորդին: Փոխանդադես Անդրեան իր հուշերում «Անատոլիայի Վերդեռն» կիամարի

դիվանագիտական այդ շրջադարձը: Մեկ տարվա մարտական լարված գործողություններն ի շիր դարձան, բնօրությունները լրել չհասցրած հայերը հետևողականորեն կոտորվեցին:

Անենաւականը՝ վերջնականացես դարձվեց, որ Փարիզում հովերը հակառակ ուղղությամբ են փշում. Ֆրանսիացիները թուրքերի հետ արդեն բացեիրաց էին բանակցում: Այդ երկողմանի բանակցությունները զայրացնում էին բրիտանացիներին, քանի որ 1920-ի ամռանը թուրքերի ուազմական դրությունը բնավ փայլում չէր: 1921-ին Լոնդոնի խորհրդառողությունը վերանայեց Սկրի դայմանագիրը, որը, անկախ, բայց շրջափակված Բուրդիստանի կողքին նախատեսել էր հայկական դետության ստեղծել:

Վարչադես Արխստիդ Բրիանը, որ մի տարի առաջ խորհրդարանում կրթուտ դաշտում էր հայերի դատը, բոլորովին այլ դիրքորոշում էր որդեգրել: Նա բոլոր ճակատներում զիշեց, սահմանը տեղափոխեց Բեղլին-Բաղդադ երկարգծի երկարությամբ, սիրիական մանդատին թողնվեց միայն Ալեքսանդրետի սանչակը: Պատմական Սիրիայի անբաժան մաս Այնթառը 1921-ի մարտին մի անգամ ևս հանձնվեց: Այս կարականությամբ Ֆրանսիական բանակի լեյտենանտ Սորիս Աբադին (Maurice Abadie) իր հուշերում կպի: «Այլևս ոչինչ չինք հասկանում: Մենք գրավել ենք Դալետի տատվարը՝ Այնթառը: Դետու կորցրինք, հետո նորից գրավեցինք, նորից կորցրինք, վեց ամսվա մարտական գործողություններից հետո վերանվածեցինք: Բայց դարոն Բրիանը այն հանձնեց թուրքերին» [136]:

Թե՛ Այնթառում և թե՛ Մարաշում իրադարձությունները կրկնվում են. Ֆրանսիական բանակը միջամտում է, դաշտում վերացնում, հասնում է թուրքերի անձնատվությամբ, որին հաջորդում է իրավիճակի կտրուկ փոփոխությունը շնորհիվ թուրքական դիվանագիտության գերակայության:

Ֆրանս-հայկական մի այլ ողբերգություն տեղի ունեցավ 1920-ի ապրիլին՝ հնադարյան Եղեսիայի՝ Ուրֆայի դարդումով։ Ամիսների դաշտառում հետո Ֆրանսիական կայազոր հանձնվում է։ Ի հետոև թուրքերի աղափոխության խոստումների՝ քաղաքը թողմելիս ֆրանսիացի գինվորները, ինչդեռ նաև ժամանակին փախուստի հնարավորություն չունեցած հայերը ծուղակն են ընկնում, դաժանորեն կոտորվում։

Դարձյալ նոյն՝ 1920-ի ապրիլին, Սամ Ռեմնի խորհրդադուով վերջնականացես որոշակիացնում է Սիրիայի ու Թուրքիայի սահմանը՝ այն իշեցնելով ավելի հարավ։ Մարշը վերջնականացես հանձնվում է։ Նոյնը տեղի է ունենում Չելյումի հետ, որի հայերը հերոսական դիմադրությունից հետո 1921-ի օգոստոսին կոտորվում են։ Արևիտիդ Բրիտանի հանձնարարականով, իր քարեկամ, դատավագոր ու նախկին նախարար Անդր Ֆրանկլին-Բույյոնը 1921-ի հոկտեմբերին կը բռում է Անգլորայի դայնանագիրը, որը վավերացնում է ֆրանսիական անհեռատեսությունը։ Դիվանագիտական բանակցությունների բավականաշահ փորձ չունեցող, Մուատաֆա Քեմալի անձով հնայված Ֆրանկլին-Բույյոնը բացարձակացես անհավասար բանակցություններ և վարում, վավերացնում Կիլիկիայի լրումը։ Ֆրանս-թուրքական այս բանակցություններն ընթանում են գաղտնի՝ առանց բրիտանական կողմին իրազեկ դարձնելու։ Այն նաև հոյների կոնակին հասցված դաշույնի հարված էր։ Մինչ հոյները արևմտյան Անատոլիայում մարտնչում էին ի նորաստ Հաճաճայնականների, ֆրանսիացիները ծրի ուազմանթերք էին տրամադրում քեմալականներին, տեղեկություններ հաղորդում հելլենական բանակի դիրքերի, ուազմավարության մասին...»

Չենք մի ուսից նյուսին նետելով՝ Ֆրանսիան իրենց բախտին է թողնում հայերին, հոյներին ու ասորիներին, մի փաստ, որը գնդաղետ Բրենոնին ասել կտա՝ Կիլիկիան

լրելը «արժանի շարունակությունն է այն դավաճանության, որի հետևանքով Ֆրանսիան կորցրեց Հնդկաստանը, Կանադան ու Եգիպտոսը» [137]։ Ֆրանսիացի սղաներին չին տեղեկացնում քաղաքական փոփոխամտության դաշնաների մասին։ Ըստն շնորհակալություն էին հայտնում ու տարհանում։ Ֆրանսիան, առանց կամ համարյա առանց շնչին իսկ հատուցման, լրում է տարածքը։ Աղա, որդես հեռանալու փոխարժեք, արժանանում է ուազնավարի։ Ալեքսանդրետի տարածքի համար «հատուկ կառավարման վարչակարգ» է ստեղծվում, Փարիզի նշած մի խումբ դրանատերերի համար Բոզամտի-Նուայերին երկաթգծում առանձնաշնորհումներ են սահմանվում։ Պետական շահերը դաշտամելու հարց անգամ չի ծագում. Թուրքիայի ազգայնացումից օգտվում են միայն թուրք դրանատերերի արևմտանետ որոշակի խմբեր։ Ֆրանսիայի տնտեսական գործընկերները՝ Պայմանագիրը նախադեմ է ստեղծում միայն մի առումով՝ օրինականացնում է դեռևս երերուն վկիրակում գտնվող աղստամբ իշխանությանը ու աղահովում մրա նուտքը միշագգային համակարգ։

Գոհ չիմելով հանդերձ բոնատիրական, աղստամբ ու այլախոհ իշխանությանը սատարելու հանար՝ Փարիզը աչք է փակում սեփական կորուստների վրա։ Ֆրանսիան բավարարվում է առևտորական ու մշակութային ակնկալվող հաճագործակցության հեռանկարով, տնտեսական սուսկ մի բանի անորոշ դայմանագրերով, փոքրանանություններին դաշտամելու խոստումներով, որոնց երեսութունն ձևացնում է, թե հավատում է։

Իրականում, Կիլիկիայից Ֆրանսիական գորամիավորումների հեռանալը հարուցում է խուճաղահար փախուստը 175 հազար հայերի, որոնք իմանականում աղաստանում են Սիրիայում, Լիբանանում ու Ֆրանսիայում։

Դայկական լեգենդի սղա Վահան Փորթուգալյանը իր նա-

մակագրության մեջ հետևյալն է գրում Ֆրանսիացիների 1921 թվականի տարհանման մասին:

«Այսինքն ուրեմն, Ֆրանսիան հեռանում է միլիոններ անդատակ մսխելուց, այս հողմ իր լավագույն զավակների արյամբ կարմրացնելուց հետո: Հեռանում է՝ հետևում թողնելով մի մոռայ գերեզմանոց, փլատակված երկիր ու վրդոված ազգաբնակչություն, որը նրան ուղեկցում է անեծքով: Հեռանում է դարտված: Ուրֆան, Մարաշը, Բոզանին, Սիսը նրա փառքի տեղանունները չեն այլևս: Մինթարություն է գոնե, որ մեր քաջարի զինվորներն ու հիանալի ստաները չեն Ֆրանսիական դրոշի այստիսի նվատացման մեղավորները:

Զինվորներն ու ստաները, որքան է անձնվեր լինեն, նարդիկ են, որ կարող են գրիվել, իրաշագործության ի վիճակի չինել: Ասում էի՝ Ֆրանսիան հեռանում է անեծքովը քրիստոնյաների ու մուսուլմանների, որոնք հավատացին նրա խոստումներին ու ահա խարկեցին: «Դուք Կիլիկիա եք եկել, – մեզ հանդիմանում էին նրանք, – որդեսզի մեզ նստացնեք, թշվառացնեք, վերջում է մեր ոխերին թշնամու վրեժնողությանը հանձնեք: Եթե դուք եկած շլմեկը, մենք թերևս կարողանայնք արդել այնուես, իմշտես առաջ էինք առրում: Բայց սրանից հետո Կիլիկիայում տեղ չունենք»: Ու նրանք իրավացի են: [...] Ֆրանսիան փոքրամասնությունների անվտանգությունը, ունեցվածքը, անձը դաշտանելու մանդատ ստացավ: Բոլորովին վերջերս՝ հունիսի 11-ին, Բրիտանը ամբողջ Եվրոպայի առջև հավաստիացնում էր, որ դա արժանադատատիկ առաքելություն է, հանձին Համաձայնական բոլոր ուժերի՝ դատվու առաքելություն: Իսկ հինա Ֆրանսիան հեռանում է լրելով Մարաշի, Չելթունի, Ուրֆայի, Ջաջրմի, Տավրոսից հարավ ամբողջ Վիլայեթի, ամբողջ Ամանոսի քրիստոնյաներին, որոնք արմատախիլ եղած, դեգերում են աքսորի անորոշ ծամփաներին: Նեգերում են վերջին մնացորդները, որովհետև

կովող զանգվածը հեռացավ, չկարողացավ նրանց դաշտումնել, չկարողացավ փլուզված տները վերադարձնել: Կովող զանգվածը նրանց լքում է, հեռանում: Հեռանում է՝ անորոշ աղահովության մեջ թողնելով իր ոչ այնքան վաղուց գրաված երկաթուղու վերջին գորանցներում աղաստանած քրիստոնյա փախստականներին: Ճիշտ է՝ Ֆրանկլին-Բույյոնը նրանց խոստանում է այն բոլոր իրավունքները, որ փոքրամասնությունները ձեռք են բերել Եթեաստանում ու Բալկաններում, բայց իր խոստումը հաստատելու համար վկայակորչում է թուղթերի խոսքը: Այդ դայնամագիրը կնքուները կամ միամիտ են, կամ՝ հանցագործ: Թուղթերի խուրը: Այդ ողբակի դիվանագետները, բացի Լոթիի [138] գրքերից, դատմության ուրիշ գրքեր կարողացե՞ն են [...]» [139]:

Գեներալ Գուրոն ծափողջուններով է դիմավորում 1922-ի նոյեմբերի 20-ին բացված Լոզանի խորհրդաժողովը, որը վավերացնում է Ֆրանս-թուրքական մեղրամիսը: 1923-ի հունիսի 26-ին կնքված դայնամագիրը նույնիսկ չի հիշատակում հայերին ու նրանց տառադանքը, այն դեռքում, եթե Ֆրանսիան չափազանց խստ վերաբերվեց Գերմանիայի նկատմամբ՝ նրան դարտադրելով Վերսալի դայնագրի «թելադրված խաղաղությունը» և ծանր ու ազգատուցներ... Ճիշտ հակառակը թեմալական Թուրքիայի նկատմամբ՝ վերաբերմունքի կտրուկ փոփոխության, որը նթագնեց հետոտատերազմյան՝ հաղթանակած Ֆրանսիայի լուսադաշտը:

Զգացնությանությունը թռթափելու դարագայում ակնհայտ է դառնում, որ Ֆրանսիայի թուրքական քաղաքականությունը ամենավայրէ է հաղթանակածի չէ. Անգորայի համաձայնագիրը արտահայտում է ազգային ու մասնավոր շահերի միջև շփոթը:

Դարյուր տարի անց էլ համադատասխան դասերը քաղ-

ված չեն: Ֆրանսիան թուրքական կառավարության համար ավելին արեց, քանի օրինականության շնորհումը այդ կառավարության, քանի որ թույլ տվեց, առնվազն ոյուրացնեց թեմայական հեղափոխության որոշակիացումը [140]: Սակայն, շոյելով հանդերձ թեմայական ազգայնակաների ինքնասիրությունը, Ֆրանսիացիներն ամեն առումներով տանու տվին: Ֆրանսիական հանդուրժողականությունը թուրքերին թվաց դարտվողականություն ու քաղաքական թուլություն և չծառայեց բուն նոյատակին: Ամենաանսուսելին այն էր, որ 1922-ից սկսած՝ Ֆրանսիական շահերը թուրքիայում դարբերաբար թիրախավորվեցին: Անաստիլիայում փակվում էին վարժարանները, հիվանդանոցները, հոգուր հաստատությունները, բոնարավվում էր ֆրանսիական ունեցվածքը, ամեն ինչ արվում էր ծագումով ֆրանսիացիների մեկնումն արագացնելու համար՝ ահաբեկումներ, եկամուտների սառեցում...: Սիածամանակ, թուրքերը անկայունացման քաղաքականություն էին վարում հարևան Սիրիայում՝ խոռվության մղելով տեղի ժողովրդին: «1918-ին թուրքերը իլու էին ու հնազանդ», – գորում է Զնյունիայում Ֆրանսիայի հյուլատոսը: Երկու տարի էլ չանցած՝ իրավիճակը կտրուկ փոխվեց: Այդքան ժամանակը լիովին բավական էր «Համաձայնականներին նոյատապիր» հիմքերի վրա դեսություն ստեղծելու համար, բայց ոչ վարչապետ Արիստիդ Բրիանի խորհրդի հիմքի վրա:

Կրելով բարոյական ճնշող դարտություն՝ Ֆրանսիան չհարգեց մանդատային համաձառնության դատախանատվությունը, և, 1919-ին փախստականների վերադարձ կազմակերպելուց հետո, անտեսելով փոքրամանությունների դաշտուղանությունը, դրժեց Կիլիկիայում հայկական դեսություն հիմնելու խոստումը: Առանց աղահովելու անվտանգությունը՝ Ֆրանսիան լրեց նաև Մարաշի հայերի մեծ մասին, ինչողև նաև լեռնաբնակ (Շաճընի, Չեյթունի,

Ուրֆայի...) բոլոր հայերին, իսկ տարագիրներին հարկադրաբար ընդունեց Սիրիայում ու Լիբանանում:

Միամտորեն հավատալով ֆրանս-թուրքական մերձեցման հեռանկարին՝ Ֆրանսիան վիճեցրեց Կիլիկիայի հայկական վերածննդի հնարավորությունը: Եթե 19-րդ դարի վերջում հայերը կազմում էին Կիլիկիայի ազգաբնակչության 20-25%-ը, քրիստոնյա հոգներն ու ասորիները, ինչողև նաև մյուս փոքրամասնությունները միասնաբար կարող էին հարաբերական մեծամասնություն կազմել:

Ֆրանսիայի դիրքորոշման ընտրության մեջ ներ խաղացին երեք գլխավոր գործոններ՝ թուրք-խորհրդային մերձեցման վախը, Լևանտի բանակին հատկացվող փոխառվությանը լուրջ հարվածներ հասցնող ու ֆրանսիական նոյատակների իրագործումը դժվարացնող տնտեսական սահմանափակ միջոցները, և վերջաղես՝ Ֆրանսիայի հասարակության, ինչողև նաև լրագրերի մեծ մասի անոյատ կարծիքը Կիլիկիայում ծավալվող ուազմական գործողությունների նկատմամբ, ինչը շտաբեցնում էր թուրքերի հետ հաշտության կնքումը: Նախագահ Պոլ Դեշանելի (Paul Deschanel)՝ Էլգաս-Լոթարինգիան ու Շայաստանը նոյն հարթության վրա դիտարկող խոսքերը նշանակություն չունեցան:

Ֆրանսիայի՝ տասնյակ տարիների շանթերի արդյունք եղող ազդեցությունը գրեթե ամենուր փոշիացավ, բայց Ստամբուլից: Բրիստոնյաները շնչվեցին երկրի քարտեզից, Ֆրանսիան այժմ թուրքիայում հենարան համարյա չունի: Ողբերգության վերջին արարը խաղացվեց 1938-ին, երբ Փարիզը զիջեց Ալեքսանդրետի սանչակը: Նա դա արեց առանց դոյզն իսկ փոխառուցման, ունենալով սուս մշուշոտ խոստում, որ թուրքիան ծեղնոյահ կմնա վերահս հակամարտությունից: Բնակչների մեծ մասը արար (սուսմիներ, ալկիներ) և միայն 38%-ը թուրք եղող սիրի-

ական այդ տարածքի բոնակցումը տեղի ունեցավ 1939-ին՝ ծևական հանրաքվեի հիման վրա: Դրանով ավարտվեց զիջումների անվերջանալի գործընթացը:

Սիրիակիներն այսօր ևս այդ անդամահատումը ընկալում են իրեն նվաստացում: Սանչալի քրիստոնյաների համար (հիմնականում՝ հայեր), բոնակցումը իրենց «ղաշտղանդահաղանի» նոր դավաճանությունն էր, որով իրենք գրկվեցին քրիստոնյության օրրանը՝ Անտիոքը ղահղանելու ամեն հնարավորությունից: Ալսվեց նոր արտագաղթ՝ այս անգամ դեռի Սիրիա ու Լիբանան:

Մուտքը (որը Սայքս-Պիկոյի համաձայնագրի դրույթներով սկզբում նախատեսված էր՝ ոժիտի գտնվեր ֆրանսիական ազգեցության գոտում) ու նրա քարյուղը զիջելուց, Կիլիկիան, Արևելյան տարածքները, Ալեքսանդրետի սանչալը, Անտիոքը... լրելուց հետո Ֆրանսիան, ակամա, բնիկ ազգարնակչությանը՝ ալսիներին ու քրիստոնյաներին թողեց բոնի արմատախիլ լինելու ընտրությունը: Օսմանյան Պետությունից սերող հայերը ըստ եռթյան երբեք չհամակերպվեցին այդ կորստի հետ: Կիլիկիայում ազգային օջախ ստեղծելու երազի հետ նրանք կորցրին ոչ միայն հայկական մշակույթի կարևորագույն մի օրուան, այլ նաև այդ ժառանգությունը ղահղանելու հնարավորությունը սփյուռքում, որտեղ ծովում հարյուր տարի շարունակ անում է իր սև գործը:

Եթե Մերձավոր Արևելքում՝ Լիբանանին ու Կիլիկիան մոտիկ, Կիլիկիան որոշես քաղաքական իրողություն գոյություն ունենար՝ Սիրիայի հարևանությամբ մի տեսակ քախարգել (tambon) դեսպություն, արևելյան Միջերկրականի քարավաճան ու կայունության օրրան կղառնար, երկրորդ Լիբանան՝ ավելի ընդարձակ ու տնտեսապես ավելի կենսունակ, աղաստան կիանարվեր տարածաշրջանի հալածված փոքրամասնությունների համար: Կիլիկիայում

ֆրանսիական նանդատը հավանաբար կմղաստեր տնտեսադես կենսունակ ոյետության գոյառմանը՝ մասնավորաբես բամբակի և գյուղատնտեսական արտադրությանը, իսկ տեղի ժրաշան ու ֆրանսամետ բնակչությունը տարածաշրջանում Ֆրանսիայի կարևորագույն հաշնակցի կվերածվեր:

1920-ից ընդիուդ 2011-ը՝ Հակեմ քաղաքը, որտեղ մշակութային ու անգամ խոհանոցային դարավոր ավանդույթների ղահղանմամբ հայկական կարևոր համայնք էր գոյացել, «վոքր Կիլիկիայի» տղավորություն էր թողնում: Սիրիական անվերջանալի ղատերազմը այդ վերածնունդը ծվեների վերածեց:

ԴԱՎԱԲԱՆՎԱԾ ԱՇՈՒՐԻՒԵՐԸ

Մի այլ ողբերգություն է 1922-ի սեղտեմբերի Զմյուռնիայի աղետը. այդ շեն ու շենշող, բազմազգ ոստանը գոհ գնաց հաղթողների արյունոտ մոլոցքին: Զամանայնականների գինվորները գենքերն ուսերից չիշեցրին. հրամանը հստակ էր՝ չմիջամտել: Ազգային ուրիշ փոքրամասնություններ և տուժեցին Արևմտաթի խոստումների դրժումից: Ֆրանսիան միակ կղոր երկիրը չէր, որ կրեց այն համայնքները լրելու նախատինքի խարանը, որոնց ղաշտղանությունն ստանձնել էր՝ չմայած շարութեց վերաբրողները ֆրանսիական համազգեստով էին մարտնչել, կրկնակին վճարել իրենց արյամբ: Ինչ վերաբերում է աշուրիներին, նրանց դժբախտությունում քրիստոնացիներն ել ղատախանաւության իրենց բաժինն ունեն:

1916-ի մայիսին, մինչ ցեղաստանությունը գրեթե բնաշնչում էր Անատոլիայի հայերին, աթոռանիստը Յակարիի լեռնաղարում գտնվող աշուրիների ղատրիարք Մար Շիմոն Հիմուն Ժթ Բենիամինը (Mar Shimun XIX Beniamin) փորձեց

աշուրի կամավորականների մարտախումբ կազմավորել։ Բուն դատրվակն, իհարկե, իմբնադաշտությունն էր, քայլ որդես հեռավոր նորատակ, աշուրիները ծգտում էին ազգային օջախ ձեռք բերել բրիտանացիների հովանու ներք, ճանավանդ որ բրիտանացիները, ինչդես նաև ուսաները, խոստումներ էին շոյայուն։ Աշուրիների այդ փորձիկ բանակը մի քանի հաղթանակ տարավ, քայլ աղետը կանխել չկարողացավ։

1917-ին Ռուսական Կայսրությունը փլուզվեց, բոլշևիկները գերմանացիների հետ զինադադարի դայմանագիր ստորագրեցին։ Պարսկաստանի կողմ խոյս տված աշուրիները ենթարկվեցին քուր հրոսակների հալածանքներին։ 1915-1918 թվականների նախօնիների ընթացքում աշուրիների կեսը բնաշնչվեց։ Ամենահամեստ հաշվումներով՝ նրանք 250.000 զոհ տվեցին։

Դայերի և աշուրի-քաղդեացիների ողբերգության ընդհանությունն այն էր, որ Արևոտքի գերիզորները նրանց նախ օժանդակ միջոց դարձրին, շացրին անկախ կամ ինքնավար դետության տեսլականով, աղա ստույգ ճահվան մատնեցին։ Չկարողանալով հենվել շիա արաբների թշնամաբար տրամադրված մեծամասնության վրա, բրիտանացիները մերձեցան քուր ու ճանավանդ բրիտանյա փոքրամասնություններին։ *Iraqi Levies* [141]-ի ճախողման հաջորդեց *Assyrian Levies*-ի կազմավորումը։

1924-ի օգոստոսին թուրքերի զանգվածային ներխուժումը Դակվարի ուղեկցվում էր աշուրիական գյուղերի կողղուտով։ 8000 աշուրիներ փախան իրաք։ Աշուրի մարտիներն իսկույն փութացին դաշտումնելու իրաքի դեռևս չորշակիացած հյուսիսային սահմանը։

Նրանց շնորհիկ կանխվեց թուրքերի՝ Մուսուլ հասնելու փորձը։ Բրիտանացիները շնորհավորում են կամավորականներին, իտու, մի տարի անց, հաջորդում է դադ ցնու-

ղը։ 1925-ի անգլո-թուրքական համաձայնագիրը Դակվարին զիջում է թուրքերին՝ փշրելով ազգային օջախ ունենալու աշուրիների հոյսերը, որոնք հաստատվել են այս լեռնադարում ու տարութերվում էին Օսմանյան Պետության փլատակների վրա գոյառած երկու ազգ-դետությունների՝ Իրաքի ու Թուրքիայի միջև [142]։ Կրկնվում է Դայկական լեգենդի ճակատագիրը. բրիտանական հրածկացմը դաշտանում է *Assyrian Levies*-ին, մարտիկներին որդես օժանդակ ուժ օգտագործելուց հետո՝ լրաց նրանց։ «Դովանավորների» ու ոխերին թշնամիների կարծառն համաձայնությունը աշուրիներին թողնում է անորոշ վիճակում։

Դարյուր տարի անց, 2003-ին, ամերիկացիների իրաքում հայտնվելը կրկնում է նոյն տխուր սցենարը։ Բրիտաններական դաշտանորի հրացեցիների ներառնումը գրավման կառավարման գորախմբեր նրանց դարձնում է հիանալի, անհամեստ խոցելի թիրախ, քանի որ «խաչակիր» կամ 5-րդ գորասյուն են համարվում։

Օսմանյան Պետության փլատակների վրա ծևավորվող նոր դետություններին զուգընթաց՝ աշուրի-քաղդեացիների քաղաքական ինքնավարությունը Բաղդադի հանարշարունակում է հիմնահարց մնալ։ Ըստ Շիշազից Վտարված Շաշինյանների տոհմական նոր՝ արաբա-սուննիական իշխանության, այս փախստականները ծովան ենթակա չեն։ Իրավիճակը դրամատիկ շրջադարձ ունեցավ. Երբ Աշուրական եկեղեցու դատրիարք Մար Շիմոն Ի՛ Էշային (Mar Shimun Eshai XXI), ակնկալելով Լոնդրոնի աջակցությունը, ինքնավարության դահանջ ներկայացրեց Ազգերի Լիգային։ Ըստ դատրիարքի՝ Մեծ Բրիտանիան դարտավոր էր աշակեր, քանի որ իր հավատացյալներին զինվորագրել էր *Assyrian Levies*-ի շարքերում, որն ամենայն հավանականությամբ իրաքի հյուսիսում հաստատված աշուրիական կղզյակի աղագա բանակի սաղմը

ոյսի լիներ: Ինքնավարության դահանջի դահից՝ աշուրիների, քրդերի ու արաբների միջև հարաբերությունը չափազանց լարվում է: 1933-ի հունիսին Մարտ Շիմոն դատրիարքին հրավիրում են Բաղդադ՝ իր Յիբաթ Սուլեյմանի կառավարության հետ բանակցելու համար: Սակայն, նրան նախ ծերակալում են, աղա Կիլրոս արտաքսում: Իրաքում անբաղձայի անձ (*Persona non grata*) հաճարվող դատրիարքը դատապարտվում է աքսորի ու նախնիների բնօրրանում վերահաստատվելու անհաջող փորձերից հետո, նա Արևելի Աշուրիական Առաքելական Եկեղեցու աթոռանիստը փոխադրում է Զիկագո, որտեղ արդեն կարևոր հաճայնը էր գոյացել, մինչդեռ Իրաքում քրիստոնյաների ջարդերը շարունակվում էին փակ դոմերի հետևում: 1930-ականներին՝ Ասորեստանին հարություն տալու ցնորական ծրագիրը մեռած տառ մնաց:

ԵՐԻՍՈՆՅՎՆԵՐԸ՝ ԻՐԵՆՀ ԴԺԲԱՆՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂՎԱՎՊԱՎՏՎԱԽՎԱԾՈՒ

Արևմուտքի անվիճելի ու ավելի քան դատաղարտելի բարոյական մեղքի կողմբն, այդ ժամանակաշրջանն ուսումնասիրած դատմարանները, չնշին բացառությամբ, շատ թիշ են անդրադարձում չափազանց զգայուն, անտեսված նի թեմայի՝ փոքրամասնությունների վերնախավի դատախանատվությանը իրենց ժողովուրդների ողբերգական ճակատագրում: Յիրավի, 1915-ին գլխատված հայ մտավորականության ընտրանոց հազվագյուտ վերադրությունը ոճանք ինքնան ինքնարնադատաբար վերլուծել են ողբերգության դատախաններն ու դատախանատվությունները, իեղափոխական շարժումների արկածախնդրությունը, քրիստոնեական վերնախավի միամտությունը, ընդհանուր շահի գիտակցության բացակայությունը, քաղաքական անհեռատեսությունը... Վերադրությունների սերունդները ևս չեն շտաղում հաճածողովրդական նահատակության դատմության վերանայումը անհրաժեշտություն համարել:

ՄԱՐԱՑՈՒՄԻՍՏՈՒԹՅՈՒՆ

– 1915-ի առաջին ամիսներին, երբ Յամաձայնականների ծովայինների հրանոթների որոտը դեռևս Դարդանելի կողմից էր լսվում, – նշում է Գրիգորիս ծայրագոյն վարդապետ Բալաբյանը իր հուշերում, – Կոստանդնուպոլիսի հայկական լուագրերն արդեն ցնծում ու խոշոր տառերով ավետում էին ֆրան-բրիտանական հայթանակը: Այդ նույն դահին, Վանում թուրքերը թաքրու շարունակում էին հայկական ջարդերը, իսկ Կոստանդնուպոլիսի հայերը, զաղվածություն դրսուրելու փոխարեն, տրվում էին «ցն-

րային դատրանքներից հառնող անհիմն խանդավառության», մոռանալով, որ այդ կայսերական բանակը, չնայած նվազել էր Յինալայների գագաթները, ըստ բրիտանացի մի սղայի խոստովանության՝ «Անգլիական նավատորմը, ցավոք, չի կարող Արարատ քարձրանալ», – շարունակում է Բալաբյանն ու հավելում հետևյալ ընկճող հաստատումը.

«Մենք յանցաւոր ենք. Արեւելիք քրիստոնեայ բոլոր փոքրամասնութիւններէն մասնաւրարար հայերս, հակառակ արթուն ցեղ մը ըլլալնուա, տիղար աղուշութեամբ մը եւ գիտացիներու յատուկ դարձամտութեամբ մը կը հաւատայինք Եկողողացիներու՝ արդարութեան եւ իրաւունքի համար մղած դայքարին, կեղծ բառերուն եւ խարեւութեանց, առանց անդրադառնալու, որ միջինաւոր քրիստոնեայ ժողովուրդներու գոյութենն աւելի Մուսուլի քարիները կը ճնշէին արդարութեան նժարին վրայ...» [143]:

Երբեմն կուրության հասնող նման դյուրահավատությունը անհիմն չէր և հետևանքն էր մասամբ իրականությունը Ժխտելուն, մասամբ էլ՝ Լուսավորիչների գաղափարների ու «ասիական խավարանտության» միջն խարխափելուն: Դյուրահավատությունը հիմնված էր նաև ցեղասղանությամբ նախորդած տարիների՝ հայկական քաղաքական կուսակցությունների ու «Միություն և առաջադիմություն» կոմիտեի դեկավարների կամերի վրա: Տարագրությունում սերտացած Ծեղանձնական հարաբերությունները, փոխադարձ հիացմունքի հասնող անկեղծ հանակրանքը, մասոնական ընդհանուր օրյակների դատկանելությունն արեցին մնացածը: 1909-ին, երբ երիտրուրքերի իշխանությունը սովորան Արդուլ Համիլի մերձավոր դահլունողականների դետական հեղաշրջման փորձի առջև մի դահ ընկրկեց, ընդհատակ անցած իթթիհադականներին, որոնց թվուն հայկական ցեղասղանությունը կազմակերպած ու իրագործած գլխավոր դատասխանատուններից թալեաթին թաքցրին հայ ընկերները:

Թերևս արծարծվող թենան հոռետեսական խորհրդածությունների, ընդհուտ վատթարագույն՝ մեղսակցության ընդհանրացման հանգեցներ, եթե որիշ փաստեր չվկայեին, որ երիտրուրքերի ու Օսմանյան Պետության փոքրամասնությունների ընտրախավի ներկայացուցիչները նասոնական միմնոյն օթյակներն են հաճախել, Լուսավորիչների նոյն առաջադիմական գաղափարներով սնվել: Երևոյթն սկիզբ էր առել դեռև 19-րդ դարի կեսերին, երբ «ազատական հայրենասերների» առաջին սերունդը տարվեց Լուսավորիչներով ու խանդավառվեց Ֆրանսիական հեղափոխության գաղափարներով: Իրենք՝ Կոստանդնուպոլիսի հայերը մասնակցեցին օսմանցի հայերի «միլլեթի» [144] կանոնադրության՝ 1863-ի «Ազգային սահմանադրության» խմբագրմամբ: Երրորդ Հանրապետության սկզբնական տարիների ֆրանսիական քաղաքական ազգեցությունն այնքան մեծ էր Կոստանդնուպոլիսի հայ դատասխանատունների ու մտավորականների վրա (մեծ մասը կրթությունը Ծվեյցարիայում ու Ֆրանսիայում էր ստացել), որ նոյնիսկ փորձեցին արհանարհանքով դատաղարտել իրենց ծևավորած հասարակական-մշակութային միջավայրը: Հանրապետական աշխարհիկության այս ջատագովները մոռանում էին, որ Ֆրանսիայում Եկեղեցու և դետության անջատման գործընթացը հարյուր տարուց ավելի էր տևել:

Օսմանյան Պետությունում հոգևոր գործոնի գերիշխող դերի չինացություն, Անատոլիայի հասարակական իրավիճակի ու բարքերի անտեղյակություն, ինչորեւ նաև վերոհիշյալ դատասխանատունների կողմից՝ վեց դար շարունակվող հանակեցության ու «դաշտողանված» քրիստոնյաների նկատմամբ մուտքման տարրի գերակայության անտեսում: 1908-ին նրանք կայսրության բոլոր հայտակների համար նոյն իրավունքները դահանջեցին խանդավառությամբ: Այս թե ինչու Հայ հեղափոխական դաշնակցության

ղեկավարներն ու իթթիհաղական երիտթուրքերը 1908-ի «հեղափոխության» հաղթերթում, Թուրքիայի բոլոր բնակչութերն լիակատար (իրավական) հավասարություն խստացան՝ թղթի վրա: «Մեր ընդհանուր կրոնը ազատությունն է», – ասում էր փաստաբան, գրող ու խորհրդարանի անդամ Գրիգոր Չոհրանը՝ երիտթուրքերի՝ իշխանությունը վերցնելու, Արդուլ Չամիդի կախակայած 1876 թվականի սահմանադրությունը վերականգնելու երանության մեջ: Չամելի խոսքեր, մտքի փայլատակումներ: Բայց նա ու նրա նման շատ ուրիշներ իրո՞ք հավատում էին, որ իրենց ստրկության դատապարտած թուրք ու քոլոր հարևանները, ավելի ճիշտ՝ տերերը, մեկ օրից մյուսը ազատագրվելու են ու իրենք զիմնիի [145] կարգավիճակից անցնելու են քաղաքացու կարգավիճակի: Իրո՞ք կարծում էին, թե հնարավոր էր նոյնությամբ կրկնօրինակել Եվրոպական անկրկնելի ձևաննուշը, ու նարդիկ բարեփոխվելու են վերսների որոշումներով: Նոյն կերպ 1876-ի օսմանյան սահմանադրությունը ժողովրդի գերիշխանությունը չէ՞ր հոչակել՝ այն չափով, ինչ չափով որ այդ գերիշխանությունը կենթարկվեր սովորանի կամ խսլանի խալիֆի վերին հեղինակությանը: 1908-ի երիտթուրքերի հեղափոխության հոչակած ազգային գերիշխանության հայեցակարգը, - որով օսմանյան հղատակը համարադարձի էր դառնում՝ թղթի վրա, - հակասում էր կրոնական առանձնաշնորհումներին, տվյալ միջավայրում հավասարության ընդունումներին: Խսլանը շարունակում էր մնալ ղետական կրոն (սահմանադրության 11-րդ հոդվածը) և նրանից էր կախված մյուս կրոնների դաշտամունքի ազատության ընձեռումը:

Դասարակության ընտրախավը այդքան վե՞ր էր շրջակա միջավայրից, որ չէր տեսնում «ոտքի տակի հողը»՝ որ օսմանյան հասարակության բացարձակ ու միաժամանակ սահմանակարգված հիմքը խսլանական կրոնն էր: «Միութ-

յուն և առաջադիմություն» կոմիտեի անդամները չհամարձակվեցին այդ կրոնը շահարկել, ինչողևս վարպետին Լուսավորիչների գաղափարների հետ: Ավելին՝ 1914-ի նոյեմբերին կայսրության քրիստոնյա ազգաբնակչության բնաջնջելու ծրագիրը հեշտությամբ իրագործելու համար «սրբազն դատերազմ» կոչ արեցին: «Ժողովրդավարությունը հանրակառիք ունի է. եթե հասնում ես վերջին կանգառին՝ ուստի իշնես»՝ Ուշեւի Թայյիփ Էրդողանի 1990-ականներին արտաքրեած այս խորհրդանշական ձևակերպումը բացառիկ հնչեղ արձագանք է գտնում այսօրվա թուրքիայում:

Բուն իրականության անտեսումը, զուգակցված անհեռատեսության ու միամտության, հենց սկզբից՝ իշխանությունը վերցնելու դահից, կամ խորոշեցին երիտթուրքերի՝ կայսրության քրիստոնյաների աղաքա բնաջնջողների դիրքորոշումը: Չավելվեց ճանավանդ ու հատկանշեց՝ այլազգի համայնքային դատապահնատումների՝ դետության բնութի ու նրա գործառույթների վերաբերյալ քաղաքական դատկերացումների ճանակի կամ խորա բացակայությունը, նի հատկանիշ, որն ավա՞ն, իր շարունակությունն ունեցավ Արևելքի փոքրանամությունների վերախսավերի ու նրանց սփյուռքների հետևողդժերի մեջ:

ԼԻԲԱՆԱՆԻՄ ԵՐԱՅՐԱՍՊՈՍ ՊԱՏԵՐԱՎՄԵՐԸ

Լիբանանի դատերազմը բազմաթիվ երեսակներով բացահայտում է քրիստոնյա առաջնորդների անձեռնիհասությունը: 20-րդ դարավերջը բոլորովին այլ ծիրում է հնչենում Լիբանանի ճարոնի ավանդական վերնախսավի տիրապետության մահազանգը: Պատերազմի քրիստոնյա առաջնորդների գործունեությունը կարելի է համեմատել խմբակային ինքնասղանության հետ. դատերազմի վերջին փուլում տեսմուն ենք, որ քրիստոնեական համախմ-

բումն ինքն իրեն է հոշոտում: Հակամարտող ուժերի սխալ ուղղմավարությունը քրիստոնյաներին ի վերջո հասցրեց դարտության ու արտագաղթը արագացրեց: Քառսն իրեն զգացնել տվեց հատկապես դատերազմի վերջում՝ 1990-ին, երբ գեներալ Միշել Ալունի ու Սամիր Ժաաֆաայի Լիբանանյան ուժերի կողմնակիցների միջև միջքրիստոնեական բախումները շարունակվեցին չորս ամիս և 740 սղանված, 2400 վիրավոր տվեցին:

Այս կորուստներին ավելացան վերթերի խոր սոյները, որոնք ձառանգություն էին մնացել մարտնիական ընտանիքների ու տոհմերի (հյուսիսում՝ Ֆրանժեների, Լեռնալիբանում ու ճրա Շուֆի գավառում՝ Չենայեների ու Շամուների) փոխադարձ թշնանանքից: Այս առումով դեռևս թարմ է եղենի 1978-ի սղանդը, երբ փաղանգավորների մի մարտախումբ, լիբանանյան ուժերի աղազա հրամանատար Սամիր Ժաաֆաայի առաջնորդությամբ, գլխատեց Ֆրանժեների ընտանիքը և 28 հաճազուղացների՝ շնորհանալով նաև Շամուն ընտանիքի անդամների սղանությունը 1990-ին [146]:

Հոգեցնցված իրենց դատկառագդու առաջնորդների ինքնագլխատումից, քրիստոնյա՝ իիմնականում մարոնի դեկավարները, հետագայում երթեր ըստ եղթյան չանդուադան այս եղբայրաստան դատերազմին: Պատերազմի ավարտից հետո մարոնի ընտրախավը, լիբանանյան քաղաքական խաղատախտակի տարթեր ծշգրտումների ընթացքում, ասես աղջած սուննի-շիա տարակարծությունների հակասականությունից, հետևողականորեն լուց:

Եթե Արևելի քրիստոնյաները հետպատերազմյան լիբանանի «հիշողության կորստի» դատձառով երկար ժամանակ խոսափում էին խոսել իրենց դժբախտության համար իրենց իսկ դատախանատվության ճասին, հետագայում, հատկապես այժմ, դրան ավելի ու ավելի հաճախ են ամդ-

րադառնում: Ուշագրավ էր, օրինակ, Սեն ժողեֆ Իանալսարանում 2013-ին կայացած «Մերձավոր Արևելքի քրիստոնյա համայնքները զգնածամի ընթացքում» թեմայով գիտաժողովը, որի մասնակիցները լիբանանյան դառակտումների մեջ որևէ դրական միտուու չտեսան: Եմելով ընդհանուր շահը դաշտուանելու անհրաժեշտությունից՝ Մաշրեկի քրիստոնյաներն ստիլված եղան դիմագրավել բազում ու դժվարագրու հակառակորների, որոնցից ոնանք «ամենայն հավանականությամբ իրենց իսկ դավանակիցներն էն»՝ գիտաժողովում նշեց Հորդանանի արտաքին գործերի նախկին նախարար Բամել Արու Զաքերը: Հորդանանից բարձրաստիճան դաշտոնյան անդրադարձավ հատկապես միասնականության բացակայությանը, որով աչքի էն ընկնում քրիստոնյա համայնքների հարաբերությունները, խոսափողական հոգեբանությանը, արտագաղթի արտոնությունների ու նյութական միջոցների խանդուտ յուրացնանը [147]:

ՄՐԵՑԱԼԻ ՀԱՇՎԵԿՃԻՌ

Փոքրամասնությունների ծակատագրի շահարկումն իրագործվեց տարբեր մակարդակներով՝ ավելի կամ դակաս աղետալի հետևանքներով: «Պաշտոյանություն» եզրոյթի շարաշահումը ի վերջո հանգեցրեց որդերգործյան, դժբախտացրեց շատ ժողովուրդների, որոնց արթեցրել էն ինքնագլխատության, ընդհուտ անկախության, նաև դաշտուանության մշուշու խոստումներով: Ամբողջ համայնքներ զոհ գնացին իրենց ֆրանսամետության՝ իրականացումն անհնար հեռանկարի հավատալու համար: 20-րդ դարասկզբի բառարանում «փոքրաթիվ ազգեր» կոչվու այս դժբախտները դատմեշի վատթարագրու կողմուն հայտնվելու ծախողությունն ունեցան: Կլեմանսոնի՝ «Կրտսեր քաջազակց» կոչած Հայաստանը զոհվեց realpolitik-ի խորանին:

Չկարողանալով հանդերձ ուրանալ իր նախկին հանձնառությունները, նույն Ֆրանսիան վերադարձ մնաց իր դարավոր բնօրիրանից բռնագաղթեցված, ամենուր անցանկայի դարձած հայ ժողովրդի խսակներին օգնելուց: Անտարբերության ու նախընտրությունը դետական շահին տալու ընդհանուր նքննորդուում՝ տարբեր հասարակական կազմակերպություններ, միավորվելով նարդասիրական ընկերակցություններում և օգնության հանձնախմբերում, զանազան առիթներով չզլացան ցուցաբերել իրենց աննիշական ու սրտացավ աջակցությունը ավելի կամ դակաս արդյունավետությամբ: Նախաձեռնությունն առանձին շրջանակներից տարածվեց. վտարանոի բրիստոլյաներին սատարելու ցանկությունն իր արտահայտությունը գտավ Եվրոպական բազմաթիվ երկրներում: 1894-1896 թթ. կոտորածների ընթացքում զրոյաշարժվեց հատկապես Շվեյցարիայի հանրային կարծիքը, որ զանգվածաքար ընդգրեց ընթացող վայրագությունների դեմ: «Օսմանյան Պետության բրիստոլյաների նախաճիշտին վերջ տալու համար», 1896-ին Շվեյցարիայի Դաշնային Խորհրդին հղված ու նրա անմիշական միջամտությունը դահանջող հանրագության տակ ստորագրեց 454 291 շվեյցարիացի, այսինքն՝ բնակչության 15,7%-ը:

Վերաբրողների սերունդների հավաքական հիշողություններում դահողանվել են նաև բնույթի բազում դատմություններ, որոնց առանձին դատարիկները երբեմն արծարծվում ու վերաբարծվում են: Բացառիկ, հիշարժան է Ֆրանսիական մարտանավերի կողմից 4000 հայերի փրկությունն ու տարիհանումը 1915-ի սեպտեմբերին: Նրանք Ալեքսանդրետի հարավում, սիրիական ծովափի Մուսալեռում, իրենց ընտանիքներով 53 օր դաշարման տոկացել են, և խրամատավորվելով՝ դիմադրել:

Մարտական փառքի մի այլ վկայություն է գեներալ-Լեյտենանտ, ավստրալիացի սոր Ստենլի Ջորջ Սևիջ (Sir Stanley George Savige) խիզախությունը. 1918-ին, Պարսկա-

տանի հյուսիսում տեղակայված բրիտանական կայսերական ուժերի սովոր կատարան լինելով, նա հազարավոր աշուղիների կյանք փրկեց: Նա ինքնակամ օգնության հասավ աշուղի փախստականների քարավանին, որոնց մահ եր սղանում թուրքերի՝ Ուրմիան գրավելուց հետո, ու հաջողությամբ ավարտին հասցրեց իր առաքելությունը:

Մարդասիրական այս առանձին դրվագները մնում են վերաբրողների սերունդների համայնական հիշողությունում որպես հերոսականության էջեր: Այդ էջերը հիմնականում դատահականության արդյունք են, նոյնիսկ մոտավոր հաշվարկներով՝ բացառություն են կազմում: Եթե նկատի չունենանք Լիբանանի դարագան, որտեղ նարոնիներն ինչ որ իմաստով «իրենց» դետությունն ունեցան, Եվրոպական տերությունների՝ բրիստոլյայ «փոքրամասնություններին» դաշտողանելու, նրանց ինքնուրույն կառավարման կառուցով օժտելու ջանքերն աղարդուն մնացին: Ավելին՝ այդ «ջանքերը» որոշ տեղերում, որոշ դեղբերում դատձառ դարձան ուղղակիորեն ժողովրդագրական արյունահեռության՝ բրիստոլյական համայնքների գրեթե ամբողջական վերացնան (Անատոլիայում՝ հոյների, հայերի, աշուղիների, քաղեցացիների ու ասորիների):

Սովորաբար, բնաջնջում ընթանում է երկու փուլով՝ նախ՝ շարդերով, աղա՝ վերաբրողների բռնագաղյօնվ: Տարօրինակ է թվում, որ այդ ժամանակներից ի վեր Պատմությունը հաճաղատասխան հետևողական չի անում, ու հավերժական «Այլևս երբեք»-ը աղաքրիստոնեացած Եվրոպայի միջավայրում հնչում է որոշես իր նախնական իմաստը վաղուց կորցրած սնամեջ կրկներգ: Եվրոպական դիվանագիտական գեկուցագրերի (Ֆրանսիականների գլխավորությանը) բովանդակությունը կուրություն է վկայում, երբեմն անհեթեթության համար: Ներկայում Ֆրանսիան չի կարող նորից թափանցել այդ տարածաշրջանը՝ եթե անզամ նման հավակնություն ունենա:

Մենք մոռացել ենք, – նախազահ էմանուել Մակրոնի հանձնարարությամբ գրած գեկուցագրում ընդգծում է Շառլ Պերսոնան (Charles Personnaz) [148], – որ Արևելքում քրիստոնյաները ֆրանսիական *soft power*-ի [149] լավագույն գործակալներն են՝ հանձին ֆրանսախոսության արժեքները կրող կրթական ուղղության: Այսպ, թե ինչն է հարկ համարում շեշտել Ազգային ժառանգական սեփականության ինստիտուտի տնօրենը հանրապետության նախազահին հղած գեկուցագրում [150]:

Բնակ հարկ չկա թաքնվել «խաղաղությունը ռաշտուանել», «Վտանգված բազմազանությունը հարգել» աղաղակող նշանախոսքերի ետևուած, երբ այլակրոնները քրիստոնյաների ներկայությունն իրենց հոդատարածքում անհանդուրժելի են հաճարում: Անհանդուրժողականությունը ավելի քան նկատելի է դառնուած հատկադիմ խառնակրոն ուսումնական հաստատություններում, որի փորձերն արվում են Եգիպտոսից մինչև Լիբանան: Ֆրանսիայի դեկավարներն զգացել են ֆրանսերնի տարածման եական կարևորությունը այն քրիստոնեական ուսումնական հաստատությունների միջոցով, որոնք տվյալ տարածաշրջանում ֆրանսերն են դասավանդում և նուսուլման սաների են ընդունում: Այդ հաստատություններն այժմ ավելի քան երբեք խոցելի են դարձել՝ նկատի ունենալով այն փաստը, որ դատերազմը հոշոտում է Սիրիան, Իրաքը, ու նոյն այդ կրթարաններն ստիլված են լինում անհավասար գենքով դայրար մղել աղաղորոցականացնան դեմ ու դեռ փախստականների հորձանքներ ընդունել լիբանանում, ինչն աղակայունացնում է լիբանանյան ամբողջ կրթական համակարգը:

Չնայած ճգնաժամային իրավիճակին, այնուամենայնիվ դղորոցները շարունակում են իրենց առաքելությունը, ջանում են քարելավել դասավանդման, դաստիարակության միջոցները և յուրաքանչյուր աշակերտի ընդունում են՝ տնտեսական դայնաներից ու դավանաբանական դատկա-

նելիությունից անկախ: Այս դեղքում է, որ աշխարհի տվյալ նասուածքանության հիմնական տարածողի՝ «Արևելյան առաքելության» հրաշագործ դատգամբը շարունակվում է:

Սատարել նման ուսումնական հաստատություններին նշանակում է նոյաստել, որ 400.000 մեծ նասանք իւլանական դավանանքի երեխաներ ֆրանսերենով շարունակեն իրենց ուսումը և յուրացնեն ֆրանսախոսության քարոզած համագոյակցության ընդհանրական արժեքները: Սուտավորաբեր 400 հաստատություններ օճանդակություն են ստանում ֆրանսիական այս հասարակական կազմակերպությունից, որի միջոցներով հիմնանորոգվում են շենքեր, կահավորվում դասարաններ, հայթայթվում դասավանդման նյութեր [151]: Եգիպտոսի 170 կաթոլիկական, Լիբանանի 200.000 աշակերտներով 330 վարժարաններում կրթություն են ստանում ֆրանսերենով: Այս աշակերտների մեծամասնությունը նույնական է, բոլորը ֆրանսախոս են և Ֆրանսիայի ու նրա արժեքների լավագույն դեստաններն են Արևելքում:

Նկատի ունենալով տարածաշրջանում դեռևս շարունակվող աշխարհաքաղաքական վարիվերումները՝ գիտելիքներ հաղորդող ու աճրաղնդող վերոնշյալ հաստատություններին սատարելը դետք է լինի ֆրանսիայի առաջնահերթ խնդիրը: Ինչ խոսք՝ առկա է նաև Ուուսաստանի «Վերադարձ»: Նա չի կորցնում 1882-ին Պաղեստինում հիմնված «Ուղղափառ կայսերական միությունը» վերականգնելու հոլովը, որի դրոցներն անցյալ դարում արար նուազուականների բազմաթիվ սերունդներ են դատրաստել: Մուկամ ծրագրում է նորից ենթականցել Սիրիա, ինչդեռ նաև Իրաքել, որտեղ արդեն ուսախոս կարևոր համայնք է հաստատվել:

ՈՐԳՈՅՑՆԸ ԵԵՆՔՈՎ

«Դիտուն ասել է՝ «Եթե մեզը աղյուսում է աջ այսու, ծախս է մեկմիր: Բայց, եթե որևէ մեկն աղյուսում է աջ այսու, գնդակը միշրծում եմ ծակատը», – հայտարարել է մի ասորի ազատամարտիկ»:

«Վարդարաններ և ինքնածիգ գենքեր. Ռաքքայի քրիստոնյան արտականները», «Լ'Օրիան-լը ժուր», 30 հունիսի 2017 թ.

Նրա լուսամկարը դեռևս դահողանվում է Բեյրութի ու Լեռնայիրանամի քրիստոնեական համրային բազմաթիվ վայրերում: Առնական դեմքով, սև ակնոցի ետևում քողարկված ժոհիտով, երեմն ինքնածիգը ուսին, Լիբանանի կարճածամկետ ընտրյալ նախագահ, 1982-ին սղանված Բեշիր Ջենայելը [152] կարողացավ մարմնավորել քրիստոնեության զորեղ ու անբարդույթ հոյսը. բոլոր չափանիշներով նա դարձավ տեղական մի տեսակ Զե Գևարա, ով այսօր էլ լիբանանցի քրիստոնյա երիտասարդ սերմոնի կոտրն է մնում:

Ինչ վերաբերում է գոյության համար մոված դայքարին, այստեղ ոչ որ այն չի նույնացնում հասարակական դարվինականության՝ բնական ընտրության տրամաբանության հետ, քանի որ թվաքանակի ուժը, ժողովողագրությունը գերակա է մշակույթի բազմազանության ու խաղաղ գոյակցության նկատմամբ, քանի որ փոքրանամություններին հանդուրժում են, եթե նրանք ինքնամեկուսանում են, մնում են «զիմնիի» նսեմացուցիչ կարգավիճակում:

Մարտաշունչ, առնադեմ, «զիմնիությունը» մերժող, եկեղեցների զանգերն ազատորեն հնչեցնել դահանջող քրիստոնյայի կերպարը առինքնել է ֆրանսիացիների տարբեր

սերունդների: Նրանք փութացել են կովելու փաղանգավորների կողքին, ինչողևս գրող Ռիչար Միլլետ (Richard Millet) [153], ով իր «Բացասական խոստովանություն»-ում (2009) բացատրում է, թե ինչողևս է դատերազմին նայելով Անդրե Մալոյի հայացքով, հայտնվել փաղանգավորների շարքում: Վերջին տարիներին «Խոլամական դետության» խծնդությունները, որոնց ավելացան տարածաշրջանը աղակայունացնող փոխակայումները (métastase), նոյաստցին, որ քրիստոնեական բազմաթիվ մարտախմբեր աստարեց են ներ Սիրիայում և Իրաքում: Իրաքյան հակամարտությունը, որին հաջորդեց Սիրիայի դամդաղ ընկրմումը դժոխիք մեջ, քրիստոնյաներին ստիղեց զենք վերցնել ու ինքնաղացտղանական ջոկատներ կազմավորել: Սիրիայի ու Իրաքի քրիստոնեական համայնքները ներգրավվեցին իրենց մերժած դատերազմի մեջ ու բախվեցին սալաֆիական ջիհադական գրոհայինների դաժան անհանդուրժողականությանը: Քրիստոնեական մարտախմբերը «ընդհանրապես կազմավորվել են որոշես հարամվանական ինքնաղացտղանական ջոկատներ և ունեցել փոփոխող թվաքանակ ու բազմաթիվ նոյատակներ» [154]:

Սիրիայի մինչ այդ միանգամայն խաղաղ քրիստոնյաները, ահաբեկված իրաքյան սցենարի կրկնությունից, գենքի դիմեցին, եթե սիրիացի աղստամբներն ու օստար զինյալները սկսեցին գրոհել վանքերն ու եկեղեցիները, առևանգել քրիստոնյաներին՝ հետո ճնշումը սաստկացնելով փրկագին դահանջելու համար:

ԱՐԵՎԵԼԵ-ԱՐԵՎԱՌԻՏՔ ԽՉՍԱՆ ԵԵՂԲՎԱԾԵՆԵՐ ՍԻՐԻԱՅՈՒՄ

Սիրիական վարչակարգը, ճակատների բազմացումից մտահոգ, դիմագրավելու համար ահազմացող վտանգը, կառավարամետ աշխարհագորային ջոկատներ կազմելու

և դրանք գինելու արագ կարիք զգաց: Այդ նոյատակի համար փոքրամասնությունները հիանալի լրակազմ էին, չնայած վարչակարգի վստահությունը վայելող քրիստոնեական համայնքները ավելի հակված էին տեղերում իսլամական աղստամբների գրոհներին հակադարձելու, քան այլ Շակատներում կովելու:

Մյուս վճռորոշ գործոնը տղանարդկանց դարտադիր զինվորական ծառայությունն էր (բացառությամբ ընտանիքի միակ որդու), որը դատերազմի դայմաններում տևում էր *ad mortem* [155]՝ դառնալով արտագաղթի հիմնական դատաներից մեկը:

Ժամանակին՝ լինի ցանաքային, ծովային ու հատկապես օդային ծառայությունում, քրիստոնյամները գինվորական հրամանատարությունում ամենաբարձր դաշտոններն են զբաղեցրել: Սիրիայի դարագայուն աշխարհագրությունն է վճռորոշ դեր խաղաց: Մեծ մասամբ աղրելով խառը, հիմնականում ալիսներով ու սումմիներով բնակված շրջաններում կամ թաղերում, թե՛ գյուղաբնակ և թե՛ քաղաքաբնակ քրիստոնյամները հայտնվեցին բուն դատերազմի բովում: Դեմ լինելով հարանվանական ջոկատներ կազմելուն, Սիրիայի հոգևորականությունը ստամուդական՝ այսինքն խաղաղամետ դիրք բռնեց՝ հակամարտությանը հագվադեմ անդրադառնալով: Մյուս կողմից, Չոյն Կաթոլիկ Եկեղեցու նախկին դատրիառը Գուեգորիոս Գ Լահիանը (1933-2017) կտրուկ մերժեց իր համայնքի գինումը:

Այսպես թե այնուեւ, քրիստոնեական գորամիավորումները 2013-2014 թվականներին եական դեր խաղացին Քայամունի լեռնադարի (որտեղ քրիստոնեական քազմաթիվ կարսոր կենտրոններ են գտնվում), ինչողեւ նաև Դամասկոսից հյուսիս՝ Սերմայային մոտակա Շերութիմի վանքի մարտերում:

«Յուրաքանչյուր ալ-Ֆամրը»՝ «Արշալույսի դահաղանները» սի-

րիական քաղաքացիական դատերազմում մերգրավված և Օդուծի հետախուզության տնօրենությանը կցված կառավարամետ քրիստոնյա աշխարհագորային միավորում է: «Արշալույսի դահաղանների» դաշտոնական կարգախոսն է՝ «Ով իր հայրենիքը չի դաշտուանում, արժանի չէ այնտեղ աղրելու»: Նա մերկայանում է որոշես սիրիական ազգային ուժ, նրա նարտիկները հիմնականում առաջնորդվում են սրբազն դատերազմի իրենց սեփական հայեցակարգով: Նրանց համար եականը մուսուլման ջիհադականներից Սիրիայի քրիստոնեական տարածքների դաշտուանությունն է: Միավորաման հիմնական ջոկատներից մեկի՝ «Ուսուտ ալ-Շերութիմի» («Շերութիմի այուծներ») մարտիկները իրենց նինջև իսկ կոչել են «Խաչի նուշահեղներ» [156]:

Ըստ իրենց առաջնորդի՝ Ֆադի Արդել Մասիհ ալ-Խուլիի, «Արշալույսի դահաղանները» ստեղծվել է 2015-ի սեպտեմբերի 11-ին, երբ տարբեր քրիստոնյա աշխարհագորայիններ միավորվել են Դամասկոսից հյուսիս գտնվող Մաարունա (Maarounah) բնակավայրը «Ձեյշ ով-հսլամի» [157] հարծակումից դաշտուանելու համար: Այդ *ad hoc* [158] ստեղծված միավորումը փայլուն հաջողության հասավ: Խոփի հրամանատարության ներքո, քրիստոնեական մարտախուզների համագործակցությունը տվեց իր դտուլները՝ փոխօգնությամբ կանխվեց ընդիանուր սրբանակիքը: Բացի դրանից՝ տեղական հնքանադաշտուանական ջոկատ գլխավորելը կարող էր նաև ծառայել խորհրդանշական միասնականությունը ամրագործելուն և օդինականացնելուն: Դնարավոր էր նաև, որ ուզմական դաշնությունը հաղթաթուղթ դառնար Ֆադի Արդել Մասիհ ալ-Խուլիի նման հրամանատարին, ով դատզամավորական աթոռի համար 2016-ին առաջադրվեց խորհրդարանական ընտրություններին:

Վերանվանվելով «Ղիրը ալ-ուաթան» («Ջայրենիքի վա-

հան»), որի համախմբումն իսկույն ձեռնամուխ եղավ Սիրիայի քրիստոնեական բնակավայրերի դաշտումության ու ազատագրության ռազմական գործողությունների: 2015-ի վերջին նորա մարտիկները Յոնսի նահանգի արևմտյան ճատկամ միացան կառավարական գործերի գրոհին և կովի ընթացքում նոյանական քրիստոնեական գործողությունները ԴԱԻՀ-ի ձեռքից հետ խելելուն: Մեկ տարի անց, մարտին, «Դիրքը ալ-ուաթանի» մարտիկներին կարելի էր հանդիպել Յանայի նահանգում, քրիստոնեական որոշ գյուղերի դաշտում առաջանական մասնակցելիս, չիհաղական աղստամբների հարձակումը հետ մոելիս, աղա, 2017-ի գարնանը, Յանայի գրոհի ընթացքում՝ Քամիհանայուն:

Մեղնայայի մոտ գտնվող Շերութիմի վանքի դաշտումության համար 2013-ին կազմավորված «Ուսուղ ալ-Շերութիմի» մարտիկները 2014-ից շատ աշխուժացան ամբողջ արևմտյան Սիրիայում: Նրանք հավաստիացնում են, որ Քայլամումի լեռնաղարում հաջողությանը մասնակցել են կառավարական գործերի տարբեր մարտական գործողություններին (2013, 2014, 2015 թթ.), Զորարի ազատագրմանը, արևելյան Դուտայի [159] գրոհին, Դարայյայի ու Մուադիմիյյայի [160] դաշարմանը, 2015-ի նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին՝ Յոնսի, 2016-ին՝ Յանայի գրոհներին:

«Շուտոր ալ-զատրաս»-ն («Պոտտահողմի արծիվներ») կրոնակիցների մի մարտախումբ է, որի շարքերում «Սիրիական ազգայնական սոցիալական կուսակցության» (ԱԱՍԿ) շատ անդամներ կան: Ազգայնական և աշխարհիկ այս կուսակցությունը Սիրիայի թերակղզին, Կիլրոսը, Կիլիկիան, Ալեքսանդրետի սանջակը, Սիրիայի Արաբական Յանրադեսությունը, Լիբանանը, Պաղեստինը, Յորդանանը, Իրաքը և Քուվեյթը ներառող Մեծ Սիրիայի դահանջատերն է:

8000 սիրիացի ու լիբանանցի կովողների այս մարտա-

խումբը կրոնական կամ դավանաբանական որոշ դատկանելությունից ավելի հենվում է կուսակցության հետ իր կաղերի վրա:

Մեծ մասամբ կառավարական ուժերին կցված կամ նրանց հետ համագործակցող քրիստոնեական քաջարիկ վորոնիկ ջոկատներ եղել կամ շարունակում են գործուն լինել սիրիական տագնատի թատերաբեմում: Խոսքը Յոնսից արևմուտք գտնվող, գրեթե բացառապես քրիստոնյա բնակչությամբ Ուաղի ալ-Նասարա տարածաշրջանի «Ուաղի ալ-ուատի» («Յովտի առյուծներ») հնքնաղաշտոյանական ջոկատի մասին է հատկացնես: Յոնսից արևմուտք՝ Լիբանամին սահմանակից այս հովտում է, որ քրիստոնեական գյուղերը կրեցին սալաֆիկան ջիհաղականների, ինչողևս միայն լիբանանցիներից կազմավորված «Զամաատ ջունդ ալ-Շամի» [161] գրոհների հետևանքները:

Իր կարգին, «Ուսուղ ալ-Շամիիյյե»-ն («Շամիիյյեի առյուծներ») Յոնսի Յամիիյյե թաղամասի բնակչիներից ստեղծված մի կազմավորում է: Զոկատը գլխավորում է Ռամի Սարինան, ով «Արշալուսի դահաղամներից» հեռացել էր միանալու համար 2016-ի մայիսից Ուազական հետախուզության տնօրենությանը կցված «Անաղատի կոնանդիների գրախնճին»: Դիշատակության արժանի է նաև Դամասկոսի Դույյաա թաղամասի ինքնաղաշտոյանական ջոկատը՝ «Ուսուղ Դույյաա»-ն («Դույյաայի առյուծներ»): Զանտեսնը կառավարամետ «Բուլաթ ալ-Ղադար» («Ցաման ուժեր») աշխարհազորը, որը 2013-ից ի վեր մարտնչում է Յանայի նահանգի՝ մեծ մասամբ ուղղափառ քրիստոնյաներով բնակեցված ալ-Սուֆայյարիյա բնակավայրում՝ ենթարկվելով Սիրիական հանրաղետական դահակագործին: Զոկատը Սիրիայի հյուսիս-արևմուտքում մասնակցել է քաջարիկ ճակատամարտերի ու 2013-2016 թվականներին 163 «Յահատակ» է ունեցել [162]:

Բացի տեղական դաշտում գոյացած կամավորական ջոկատներից՝ նախ ժողովրդական կոմիտեների, հետո Ազգային դաշտում գոյացած ուժերի միջոցով, Ուաղի ալ-Նասարայի քրիստոնյաների կիսառազմականացած կազմակերպության անդամները մեծ ճամանք իրենց հոժար կազմով հաճալրել են սիրիական գինված ուժերի շարքերը։ Դամանճան երևոյթ է տեղի ունեցել ալ-Սուայդա'առև ու Ջեբել ալ-Շեխում ամրակայված դրուզների հետ։ Ուաղի ալ-Նասարան շարունակում է բացարձակացնել կառավարման շրջան մնալ՝ հակամարտության սկզբից ի վեր ծանր կորուստներ կրելով։

Միանց դետք է հավելել Լաթարիայի նահանգում ալ-Աշխարհազրայինների ու քրիստոնյաների համագործակցությունը, որն իրականանում է սիրիացի ճախ ազգայնական հրամանատար Ալի Կայյալի միջոցով, ով հանդես է գալիս Ալեքսանդրետի սանջակը մայր հայութիքի գիրկը Վերադարձնելու դահանջատիրությամբ [163]։

Ծովափում, Սիրիայի «օգտաշատ» կոչված տարածքի երկարությամբ ու արևելքում՝ Դամասկոսի հանդեմ քրիստոնեական ուժերի վերաբերմունքը տարբերվում է։ Սիրիական ու արաբական ազգայնականության հետ ներքին կաղը խորացնելու արմատացած է Ուաղի ալ-Նասարայի բնակչների միջավայրում, որոնցից հոյն ուղղափառների մեծ ճամանակակի հակումներով Սիրիական ազգայնական սոցիալական կուսակցությանն է հարում։

Դազգադեմ չեն դեռքերը, երբ հենց Յովն Ուղղափառ և Յովն Կաթոլիկ (Մելքիտ) Եկեղեցիների նվիրաբետությունները, Մելքիտ Եկեղեցու նախկին դատորիարք Գրեգորիս Գ Հակիմի օրինակով, դիրքորոշվել ու գործել են ի նոյաստ Պաղեստինյան դատի ու արաբական ազգայնականության։

Յովնի թեմի Քարայի (Qara) վանքի կարմեղյան [164] մայ-

րաբետ Ազնիս Մարիամը հակամարտության հենց սկզբից հայտնի դարձավ կողմերին հաշտեցնելու իր ջանքերով։ Յոր կողմից դադաստինցի լինելով՝ սույն լիբանանցի-Ֆրանսիացին շատ շուտ իր վրա ընելուց նրան վարչակարգի քարոզչության խոսափող համարող ընդդիմության ցասումը։

Այնուամենայնիվ, եթե քրիստոնյաները համեմատաբար համեստ թվաքանակով ընդգրկվեցին ինքնաղաշտանական տարբեր ջոկատներում, դատապան այս էր, որ տվյալ դեռքում դավանարանությունը նրանց համար դեր չխաղաց։ Այստեղ լիբանանյան տարբերակը կիրառելի չէ, զինակոչի տարիքին հասած քրիստոնյա սիրիացիներն ունեն իրենց գինվիրական ծառայությունը իրենց սեփական հողը դաշտում նշոցով կատարելու ընտրանքը։

ԱՍՈՐԱԿԱՆ ԻՆՔՍՈՒԹՅԱՆ ՊՐԻՍՍԱԿԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԻՐԻԱՅՈՒՄ

Որքան տեղաշարժվում ենք Սիրիայի հյուսիս-արևելքով, հատկապես Յասակեի նահանգում, որտեղ աղաստանել են Դեյր լե-Զորի նահանգից գաղթած բազմաթիվ քրիստոնյաներ, իրավիճակն այնքան բարդանում է, որովհետև իրու արար ինքնորոշվելու միտումը անհամենատ սահմանափակվում է։

Ավանդաբար, Սիրիայի այս մասում բնակվող քրիստոնյաները արաբականությունն իրենց ինքնության առաջին հատկանիշը չեն համարում։ Նրանք այս տարածաշրջանում հաստատվել են իրենց ուժերին թշնամիների՝ թուրքերի ու քրդերի հայածանքներից խոյս տալու համար։ Ոնանց հեռանալու է դրդել անցյալուն «Բաասի» արաբականացման հետևողական քաղաքականությունը, եթե անգամ հնարավորություն են ունեցել իրաղարակայնորեն

արտահայտվել իրենց մայրենի լեզվով՝ արևելյան նոր-արամերենով կամ սուրբեթով (soureth), որն ինքնության վկայություն է և նրանց տարրերակում է հոյս ուղղափառ, հոյս կաթոլիկ, ինչպես նաև մարոնի կորոնակիցներից:

Փաստն այն է, որ Սիրիայի բոլոր քրիստոնյաները չեն միացել Ասադին, ինչդես հավաստում է անզլիացի-իրաքի հետազոտող Այման Զառաւոր ալ-Շամիմին՝ քրիստոնյա աշխարհազորայիններին նվիրված իր բազմաթիվ հոգվածներում [165]: Եթե Ուաղի ալ-Նասարայի և Սիրիայի «օգտաշատ» կոչված տարածքի քրիստոնյաները կառավարամետների կողքին գենք վերցրին, իրավիճակը նույնը չեղավ Սիրիայի՝ Եփրատի արևելյան ափի այդ հատվածում (իհմնականում իյուսիս-արևելյում՝ Հասակեի նահանգում, որտեղ Դեյր էգ-Չորի նահանգից բազմաթիվ քրիստոնյաներ ին գաղթել ու այնտեղ հաստատվել):

2011-ից ասղարեզ ելած քրդական շարժման ազդեցության ներքո, քրիստոնյա գործիչները, որոնք տարրերակող հատկանիշ, առաջ են մղում իրենց ասորական արմատները: Արևելյան Սիրիայի քրիստոնյաները հիմնականում ասորիներ, աշուրի-քաղդեացիներ ու հայեր են: Անկախ այս բանից իրենք իրենց կիանարեն արամեացի, ուղղափառ կամ կաթոլիկ ասորի, աշուրի կամ քաղդեացի, այս տարածաշրջանի քրիստոնյաները (բացի հայերից), ունեն մի ընդհանուր հայտարար՝ իրենց հոգևոր արարողությունները կատարում են ասորերենով: Մյուս կողմից՝ 1930-ական ներին Իրաքից արտաքսված աշուրի-քաղդեացիների հետորդները Սիրիայի հետ չունեն երկրի արևմուտքի իրենց կրոնականիցների կառվածությունը:

Սփյուտքում գործուն, ասորական շահերը ներկայացնող որոշ բաղաքական կազմակերպություններ բախումների սկզբից ի վեր ճգտում են իրենց ձայնը լսելի դարձնել: Խոսքը հատկապես վերաբեռնում է հնրանվառության տահանջներ առ-

ծարծող «Աշուրիհական ժողովրդավարական կազմակերպության» (ԱԺԿ, ADO) ու «Ասորական միաբանություն կոսակցությանը» (ԱՄԿ, SUP): «Աշրիհական Բոլորի հաստանը» կամ Ռուծավան կազմող երեք կանտոնների միացյալ քրիստոնեական շարժմանը ի նոյանու «Արարական գարունների»՝ ասորիներին առիթ տվեց համրային Ծանալարիով Ներկայացնելու ժողովրդավարական աղակենտրոնացման իրենց ուսահանքություն:

Սիրիայի հյուսիս-արևելքից կառավարական ուժերի նահանջն ու քրդական «ժողովրդավարական միություն կուսակցության» (ԺԱԿ, PYD) առաջխաղացումը Սիրիայի ու Իրաքի սահմանամերձ տարածաշրջաններում բնակչող բազմահազար ասորիների դրդեց գենքի դիմել։ Եթե նրանք վարչակարգին հակառակվեին, ընդդիմության լուսանցքում ուժի հայտննելին [166]:

Հականարտության սկզբից աշխուժացած իրենց դավանաբանական հակվածությանք հատկանշվող քաղաքական կազմակերպությունները՝ Խոսքը հատկապես վերաբերվում է սիրիական իշխանության ուղղակի քննադատությամբ աշխի Ընկոնո՞՝ 1957-ին հիմնադրված, արդեն հիշատակված «Աշուրիական ժողովրդավարական կազմակերպությանը» (ԱԺԿ), որի կենտրոնը գտնվում է Կամիջլիում, և «Ասորական միություն կուսակցությանը» (ԱՍԿ): Զիհադականների առաջխաղացումը նրանց ավելի մոտեցրեց նույնության արդեն հիշատակված «ժողովրդավարական միություն կուսակցության» (ԺՄԿ) քրդերին, որը «Քուրդիստանի բանվորական կուսակցության» (ՔԲԿ, PKK) սիրիական թևն է ու դեռևս վերահսկում է Թուրքիայի սահմանակից երկու կանոնաները:

ԱՍՈՐԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՐՅՈՒՐԴԸ

«Ասորական ռազմական խորհուրդ» (ԱՌԽ) «Ասորական միություն կուսակցության» մարտական թևն է, որն ունի Սիրիայում քրիստոնյաների ամենաակնառու աշխարհազորը: Այն ստեղծվել է 2013-ին՝ «Իսլամական դեսության» դեմ դայքարելու համար: Նրա առաջնահերթ խնդիրը դիսի լիներ Սիրիայի ասորական, աշուրիական ու քաղդեական համայնքների դաշտությունը:

Աշխարհազորը երկար ամիսներ տեսադաշտից անհետանալուց հետո վերահյտնվեց 2013-ի վերջում: 2014-ի հունվարից Դասակեում տեղակայված «Ասորական ռազմական խորհուրդ» «Սիրիական ժողովրդավարական ուժերի» (ՍԺՈՒ) հիմնադիր-անդամ է: Ամենայն հավանականությամբ այն քրիստոնեական միակ աշխարհազորն է, որ միաժամանակ գործում է Սիրիայում ու Իրաքում և միշագային չափանիշով ամենահյունին է: Աշխարհազորը նման ճանաչնան է հասել «ժողովրդական դաշտության» (ԺՊԱ, YPG) քրդերի հետ զիսավորաբար Սիրիարի բարձունքի ու Նինվեի հովտի, Շասակե քաղաքի, Թօքունի ամբարտակի, Շաղդաղի ու հատկադի Շաքբայի կողմերի շնորհիվ: Որպես «Սիրիական ժողովրդավարական ուժերի» անդամ՝ աշխարհազորն առաջին գործում մասնակցեց «Եկեղեցներ կործանող» ջիհադականների դեմ մղվող մարտերին, և ամեն ինչ արեց ասորի քրիստոնյաներին դաշտության համար [167]:

Միաժամանակ, քողարկելով իր թշնամանքը և չեզոքությունը «քասասականների բռնատիրական վարչակարգի» նկատմամբ, աշխարհազորը հիմնարար բանակցություններ է վարում քրդերի հետ: Ըստ նույան աշխարհազորի սահմանափակ միջոցները առանց քրդական «ժողովրդական դաշտության» հնարավորություն չեն ընձեռում հասնել իրենց նողատակին: Բնականաբար, ին-

տղիետե սերտացող նման մերձավորությունն ունեցավ իր հետևանքները, այն աստիճանի, որ «Ասորական ռազմական խորհրդի» անկախությունը վեճեր հարուցեց՝ սկսած այն դատմաներից, որոնք նրան սուսկ ինքնադաշտողանությամբ սահմանափակվելու փոխարեն դրուեցին «Իսլամական դեսության» դեմ հակահարձակման անցնել:

«Ասորական ռազմական խորհրդին» գուգահեռ «Ասորական միություն կուսակցությունը» 2013-ի փետրվարին ստեղծեց իր աշխարհազորը՝ «Սուտորո» (Sutoro) (արամերենում նշանակում է «դաշտություն»): Տեղակայվելով Հասակեում՝ այս առահովական ուժերը դարտավոր էին, համագործակցելով «Ժողովրդական դաշտության միության» առահովական ուժերի և հետախուզական սղասարկությունների՝ Ասայիշի [168] հետ, կառավարական անվտանգության ուժերի հեռանալուց հետո կարգուկանոնը դահղանել այդ գոտիներում, ինչդեռ նաև 2013-ի գարնանը իսլամականների գրոհներից դաշտության Սիրիայի հյուսիս-արևելյան ալ-Քահիտանիյա և ալ-Մայիդիյա ավանների և Կամիշլիի քրիստոնյաներին: Խստորեն վերահսկելով քրդական «ժողովրդավարական միություն կուսակցության» (ԺՄԿ) կողմից՝ «Սուտորո» իր քաղաքական կնքահայրի՝ «Ասորական միություն կուսակցության» օրինակով, ինքնահամալրվել է քրդական կուսակցության Ծերուուկ և Սիրիայում իր ծերուում ամուլ դահում է սեփական կանտոնները: Դրանով հանդերձ՝ առահովության այս ուժերը քաղաքական առումով ընդդիմադիր չեն ու տարածաշրջանում բացառադես դաշտությանական գործունեություն են ծավալում: Ամեն դեղքում, այս չեզոքությունը 2013-ի ամռանը խախտվեց, երբ «Սուտորոյի» Կամիշլիի թևը միացավ կառավարամետների ճամբարին: Այդ ժամանակ կառավարական ուժերը վերահսկում էին քաղաքի մի քանի թաղանասերը, Թուրքիայի սահմանի անցակետն ու օդանավակայանը: Կերանվանվելով «Սոուտ-

րո» (Sootoro)՝ ոստիկանական այս «կառավարամետ» միավորումը փոխեց իր գինանշանը: Անենայն հավանականությամբ Կամիշլիի ու ալ-Մահրիյյաի ասորական մարտական միավորումների ներքին դառակտումը քոյի սև ստվեր էր սփոռում ջիհաղական հակառակորդի դեմ մղվող դայքարում համագործակցելու հնարավորության, ինչդեռ նաև իրենց տրամադրության տակ եղած միջոցներով քրիստոնյաներին արդյունավետ դաշտումնելու վրա [169]:

Աշուրիներն ու նրանց դաշնակիցները, ինչ խոսք, կարող են ակնկալել նաև սփյուռքի, մասնավորապես Գերմանիայի, Շվեյցարիայի, Շվեյչայի իրենց համայնքների ազդեցիկ աջակցությունը:

Իրենց բնօրրանը «Խսորական ղետության» ջիհաղականներից հնարավորինս շուտ ազատագրելու համար՝ Շվեյցարիայից [170] և Արևմուտքի մի քանի երկրներից աշուրի երիտասարդ կամավորականներ եկան հաճախելու «Ասորական ուազմական խորհրդի» հազարավոր մարտիկների շարքերը:

Չնայած իր տրամադրության տակ եղած նարտունակ աշխարհազորայիններին՝ «Ասորական ուազմական խորհրդու» շահարկում է նաև տարրեր խորհրդանշիներ և ծգտում է օրինական դաշտ մտնել, հուսալով, որ ասորական համայնքը վաղվա Սիրիայում ավելի գործուն դերակատարում կունենա: «Ասորական ուազմական խորհրդուն» իրեն առնվազն դիտարկում է արաբների ու քրդերի միջև տեղակայված առանձնահատուկ միջնորդ ուժ: Այնուամենայնիվ «Խալիֆաթի կարձածամկետ նայրաքաղաք» Շաքքայի ազատագրումը բացահայտեց այն դժվարությունները, որ կարող է հարուցել արաբա-քրդական համակեցությունը:

Եվ մինչ «Սիրիական ծողովրդավարական ուժերն» հաջողությամբ ազատագրում էին տարածաշրջանը՝ վայելելով ԱՄՆ-ի ակնհայտ աջակցությունը, 2017-ի նոյեմբերին

Վաշինգտոնը հայտարարեց նոր, ուղղակի ծանադարիով Միջն Արևելքի՝ Իրաքի, Լիբանանի հովտի, Սիրիայի աշխարհազորայիններին, քրիստոնեական ինքնառաջտողանական ջոկատներին օգնելու հավանականության մասին: Շնորհիվ Վաշինգտոնում տեղակայված քրիստոնեամետ «Կյարին որոշեկտ» շահախմբի ջանքերի, նշանակալի միջոցներ ներհուցին [171]:

«ԽԱԲՐՈՒԻ ՊԱՐԱՊԱՍՆԵՐԸ» ՈՒ «ՆԱԹԹՈՐԵՆԵՐԸ» [172]

Տեղական աղահովության «Խաբրուի դահաղաններ» աշխարհազորը (ասորերեց՝ *Mawtba d-Natore d-Habor*) կազմավորվել է 2012-ին, 2017-ի առողիին, անդամակցել «Սիրիական ծողովրդավարական ուժերին»: Ինչդեռ քրիստոնյա աշխարհազորայինների մեծ նասը, «Խաբրուի դահաղաններն» ի սկզբան ստեղծվել էր նաև քրիստոնյա կրոնակիցներին խլանական և այլ գինված հանցախմբերից դաշտումնելու նորատակով: Անվանումն էլ վկայում է, որ «Խաբրուի դահաղանները» նախ ծգտում էր աղահովել Հասակեի նահանգում գտնվող Խաբրուի հովտի անվտանգությունը: Խաբրուի գետեզերքով ծգվող այս տարածքում հաստատվել է նշանակալի քրիստոնյա ազգաբնակչություն, ամենահայտնի բնակավայրն ամենայն հավանականությամբ թալ թաներն են: Սահմանված էր, որ «Խաբրուի դահաղաններ» միավորը իիմնականում դիտի գործեր որոշես անվտանգության ուժ, աղահովեր շրջանի աշուրիական գյուղերի ինքնառաջտողանությունը, որոնք, անկախ հականարտության կողմերի կուսակցությունների ու խմբակցությունների քաղաքական, կրոնական ուղղվածությունից, չեզոք էր մնացել սիրիական քաղաքացիական դատերազմի ընթացքում: Եվ չնայած «Խաբրուի դահաղաններ» կարողացավ բառացիորեն հարցուավոր նորակոչիկներ հավաքագրել, շուտով սկսեց նարտական ան-

հաջողություններ արձանագրել՝ բազմաթիվ բնակիչների արտագաղթի, ինչդես նաև աշուրիական շատ մարտախմբերի, այդ թվում «Աշուրիական ժողովրդավարական կազմակերպության»՝ զենք մատակարարելուց հրաժարվելու դատմառով։ «Խարուրի դահաղանների» հիմնական խնդիրը Խարուրի հովիտ խաճականների թափանցման կանխումն ու համրային անվտանգության աղափակումն եր, ինչդես անում էն «Սոտորոն» ու «Սոոտորոն»։ Ի հակադրություն իիշատակված ասորական մյուս աշխարհազորերի՝ «Խարուրի դահաղաններն» ու «Նաթօրենները» առնչված չեն «Ասորական միություն կուսակցությանը», այլ քրիստոնեական մի ուրիշ՝ «Աշուրիական ժողովրդավարական կուսակցությանը» (ԱԺԿ), որն ստեղծվել էր 1978-ին՝ տարանջատվելով «Աշուրիական ժողովրդավարական կազմակերպությունից», որ «Ասորական միություն կուսակցության» նոցակիցն է։ Վերջինիս դիրքորոշումը սիրիական իշխանության հանդեռ շատ անհաջող է։ «Աշուրիական ժողովրդավարական կուսակցությունը» դեռևս 1990-ականներից համագործակցում էր «Բաաա» կուսակցության հետ, և քաղաքացիական դատերազմի բռնկվելուն դեռ քացահայտ սատարեց կառավարամետների ճամբարին։

2014-ի մայիսին ԴԱԻՀ-ը հարձակեց Թալ Թամերի վրա, ինչը «Խարուրի դահաղաններին» ստիլեց սերտացնել կաղերը քրդական «Ժողովրդների դաշտանության միության» հետ՝ քաղաքի համար մղվող մարտերում օգնություն ստանալու նորատակով։ Այնուամենայնիվ ԴԱԻՀ-ը 2015-ի փետրվարի ու մարտի միջև կարողացավ զավթել Թալ Թամերն ու շրջակա տասնյակ գյուղերը։ Այնուհետև «Ասորական ուազմական խորհրդի» ու քրդական «Ժողովրդների դաշտանության միության» աջակցությամբ, «Խարուրի դահաղանները» կարողացավ ամրապնդել ուազմաճակատի գիծն ու ի վերջո՝ 2015-ի մայիսին հետ վերցրեց տարածաշրջանը։ Տեղի հարյուրավոր քրիստոն-

յաներին փրկելը, իսկ մի քանի օր անց քրիստոնյաների մի մեծ խնդիր ազատագրելը, լուսարձակները սևեռեցին այս փոքրաթիվ աշխարհազորի վրա։

2015-ին «Ժողովրդների դաշտանության միության» մի խմբակի՝ «Խարուրի դահաղանների» հրամանատարներից Դավիդ Անտար Ջինդոյ (David Antar Jindo) սղանությունից հետո, քրդական կողմի խիստ ծնշնան դատմառով, «Ժողովրդների դաշտանության միության» ու «Ասորական ուազմական խորհրդի» հարաբերությունները խզվեցին։ Ճետագայում, 2017-ի տարեսկզբին, փոխադարձ համաձայնությամբ, փոքրաթիվ աշխարհազորը դաշտոնայես դարձավ «Սիրիական ժողովրդավարական ուժերի» անդամ։ Ի դատավան այդ անդամակցության, նկատվեց, որ «Ժողովրդների դաշտանության միությունը» տարածաշրջանում ազդեցիկ ներկայություն դարձավ։ Չուգահեռաբար՝ «Աշուրիական ժողովրդավարական կուսակցությունը» համաձայնվեց միանալ «Սիրիական ժողովրդավարական խորհրդին», մինչդեռ քրդական «Ժողովրդների դաշտանության միության» նարտիկները թամբերին մոտակա ուազմական խարիսխը դահղաններով հանդերձ։ «Խարուրի դահաղաններին» ու «Նաթօրենների» փոքրաթիվ աշխարհազորներին վստահեցին Խարուրի երկայնքով ձգվող աշուրիական բնակավայրերի հասարակական կարգի ու անվտանգության աղափակումը։ 2018-ի սեպտեմբերի 24-ին «Աշուրիական ժողովրդավարական կուսակցությունը» հայտարարեց «Նաթօրեններին» ու «Խարուրի դահաղաններին» միավորող ուազմական գերագույն հրամանատարության ստեղծման մասին։ Նոր գիմակցությունը կոչվեց «Աշուրի ուժեր»։ Վերջինիս գաղափարական, ինչդես նաև եթնիկ ու կյունական արմատներն ընդհանուր էին «Խարուրի դահաղանների» հետ։ Երկու ուազմական միավորումներն էլ ուղղակիորեն կաղված են «Աշուրիական ժողովրդավարական կուսակցությանը»։

2011-ի հոկտեմբերի 1-ին կազմավորված աշխարհագործ «Սիրիական ժողովրդավարական ուժերի» գլխավորությանը մասնակցեց «Խոլանական ուժության» դեմ մղված բազմաթիվ ուազմական գործողությունների, ինչդեռ, օրինակ, Մումբիջի հարձակմանը, Շաքրայի ուազմարշավին ու Դեյր էգ-Չորի (2017-ի սեպտեմբերին սկսված) գրոհին: «Նաթթորեները» դաշտողանում էին նաև աշորիական սրբավայրերն ու աղափառական եկեղեցիների ծխական արարողությունները:

Ընդհանուր առմամբ, այս դահին, երբ մենք շարադրում ենք այս տողերը, Սիրիայի դատերազմում նարտնչող ինը քրիստոնեական աշխարհագործ քացահայտված է: Տարբեր նակարդակների այդ՝ ինքնաղաշտողանականից ընդուռ դատերազմող մարտախմբերը նույն նողատակները չեն հետաղնդում՝ նայած կառավարական ուժերից են աջակցություն ստանում, թէ՝, ինչդեռ ասորական աշխարհագործները, գործում են քրդական գոտում: Ունենալով շատ սահմանափակ հնարավորություններ, վարչակարգից աջակցություն չստացող աշխարհագործները հովսները դնում են սփյուռքի, հաւկառեն Գերմանիայի, Շվեյցարիայի և Շվեյցարիայի իրենց հայրենակիցների վրա, որոնք նյութական միջոցներ, ինչդեռ նաև որոշ քանակությամբ կամավորականներ են ուղարկում:

Այս կրկնակի՝ աշխարհագրական ու քաղաքական ճեղքվածքը քացատրվում է նաև Եվրատի երկու ափերի՝ թէ՝ մեկ և թէ՝ մյուս կողմի ինքնության առանձնահատկության գերակայությամբ: Պատերազմը չստեղծեց այնիսի գաղափարախոսություն կամ քաղաքական կուսակցություն, որն ի վիճակի լիներ միավորել երկու քրիստոնյաներին, թեկուզ նրանց մեծ մասին:

Թեև հարավուին իրավիճակը թույլ չի տալիս ծշգրտել Սիրիայից չհեռացած քրիստոնյաների թիվը, քայլ մնա-

ցած ու գենք վերցրածներն ընտրության երեք հնարավորություն ունեն՝ կամ միանալ քոյերի դեկավարած համարաշնորհամբ, կամ «Սիրիական ժողովրդավարական ուժերին» ու նրա դաշնակիցներին, կամ էլ մարտնչել կառավարմետների շարքերում:

Մյուս կողմից, սունիների գլխավորած չափավոր ընդդմությունը նոյաստավոր արձագանք չգտավ քրիստոնյաների միջավայրում: «Աշորիական ժողովրդավարական կազմակերպությունը» (ԱԺԿ, ADO) քրիստոնեական միակ կուսակցությունն է, որ հանդես եկավ ի նոյաստ սիրիական ընդդմության համարաշնորհայան (չնայած վերջին քաղաքականացես դառակտված է ու լիովին կորցրել ազգեցությունը): Քանի որ «Աշորիական ժողովրդավարական կազմակերպությունը» չունի իր աշխարհագործ, կարող է միայն խորհրդանշական դերի հավակնել: Սրան ավելանում են քրիստոնեական աշխարհագործայինների՝ հաճագործակցելու իրենց հնարավորությունները խոչընդոտող նարտավարական ու ուազմական գործողությունների շուրջն առաջացած սկզբունքային տարածայնությունները՝ լինել կառավարամետների՝ ծամբարում, թէ՝ «Սիրիական ժողովրդավարական ուժերին» կից:

Սիրիական կառավարությունը, որոշ քացառություններով, այդ աշխարհագործներն անհաղաղ ծավալելու անհրաժեշտություն առաջարդեց, քանի որ մեծ մասամբ կազմավորված էին քրիստոնյաների տոկոսային քարձր համեմատություն ունեցող տարածքների քրիստոնյա նարտիկներից: Պետք է հավելել նաև իրենց տարածքների հետ աշխարհագործայինների սերտ կառվածության շահարկումը: Նոյն մարտավարությունը կիրառվեց նաև ոչ միայն վարչակարգի վերահսկողության տակ գտնվող տարածքներում, այլ նաև հյուսիս-արևելքում՝ Կամիջլիի կղզյակի շրջանում:

Դրան հակառակ՝ «Սիրիական ժողովրդավարական ու-

մերն» այլ նողատակ է հետաղմում՝ քրիստոնեական օճանդակ միավորումներին հիմնականում օգտագործում է ոչ քրիստոնեական զյուղերն ու քաղաքները թիրախավորելու ընթացքում, այսինքն՝ «չեզոք» ուժի միջոցով փորձ է արվում մեղմել արաբ-քրդական լշնամանքը։ Կարծ ասած, մինչ վարչակարգը, քրիստոնյաների օգնությանը դիմելով, դավանարանական խաղաթուղթն է դարձում, քրդերի գլխավորած համադաշնությունը ճգտում է, նվազագույնը, միասնականության ու համագործակցության տողավորություն թողնել։

Ընդհանուր հաճաղատկերում դիտարկվող հաջորդ երեւություն սոցիալական ցանցերում գործունյա մի քանի աշխարհագորերի՝ հաղորդակցական կաղը ուժեղացնելու ժիգն է։ Անգերենով հմտորեն վարվող քարոզչական քայլերը ընդարձակում են լսարանը՝ հնարավորություն ընձեռնուկ քարոյական, նյութական աջակցության հասնել, երբեմն էլ Արևոտրից կամ ընդհանրաբես արտասահմանց կամավորականեր գինվորագրել։

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎՃԱԿՇՈՒԹՅՎՆ ԿՎՈՌԵՑՆԵՐԸ ԻՐՎԵՌԻ

«ՆԻՆՎԵԻ ՀՈՎՏԻ ՊԱՇՏՈԱՍՈՒԹՅԱՆ
ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ» [173]

«Աշուրիական ժողովրդավարական շարժումը» 2014-ին կազմավորել է «Նինվեի հովտի դաշտումնության միավորումները» (ՆԴՊՄ)՝ իրաքյան քանակի նախկին գեներալնայր Բենհամ Աբբասի հրամանատարության մերքը։ 1979-ին, իր հիմնադրումից ի վեր, այս շարժումը Իրաքի աշուրաքաղեական ազգայնականության միզակն է։ «Նինվեի հովտի դաշտումնության միավորումները» ժղում է, որ սկզբում ջոկատը հինգ հարյուր կանավորական է ունեցել, ինչ հազարը հետո են ավելացել։ Նրանք քուրդ գինյաւերի՝ փեշմերգաների [174] կողմին մասնակցել են քաղեական Տեսրողա (Teskopora) քաղաքի մարտերին, ավելի գործուն են եղել Նինվեի հովտում, որտեղ նշանակալի աղեցություն են ունեցել տարածաշրջանի քրիստոնյա ազգարնակչության վրա։ Մյու կողմից, «Նինվեի հովտի դաշտումնության միավորումները» ճգտում է միանալ «Քուրդիստանի ժողովրդավարական կուսակցության» (ՔՃԿ)՝ քրդերով հաճալրված աշուրա-քաղեական-ասորական «ժողովրդական խորհրդին» (Վերջինս սերտորեն առնչվում է ՔՃԿ-ին, այն հիմնել է ՔՃԿ-ի աշուրի-քաղեացի դատախանատու, Քուրդիստանի ինքնավար շրջանի կառավարության Ելմուտքի նախկին նախարար Սարգիս Աղաջանը)։ «Նինվեի հովտի դաշտումնության միավորումները» շարունակում է գործել փեշմերգաների հրամանատարության մերքը ու առայժմ տեղակայված է Նինվեի հովտի հյուսիսում։ Զնշին բացառություններով, «Նինվեի դաշտումնության ուժերը» սերտորեն կաղված է ՔՃԿ-ին։ 500 գինյալ ունենալ հավակնող մարտախնիք գլխավորն է

Ռումեն Յակարին, ով ծագումով էրիխ նահանգի աշուրիական մի քաղաքից է: «Նինվեի տաշտուանության ուժերը» ըստ Եւլայան նույնութեան ենթարկվում է փեշմերգաներին ու մասնակցում «Խոլանական դետության» դեմ մղվող կոկմերին:

«ԲԱՐԵԼՈՆԱՆ ԳՈՒՂԾ»

Այս գնդի առանձնահատկությունն այն է, որ 2014-ին՝ իր ստեղծումից ի վեր, ուղղակիորեն կախում ունի «Ժողովրդական զորահավաքի միավորումներից» (շիա աշխարհագորայիններից): Այս միավորը հաշվում է մոտ հազար մարտիկ, թվաքանակը գոյացել է սուննի ու շիա խմբավորումներից կազմված ժողովրդական զորահավաքի ուժերի միջոցով: Ընդհանուր հրամանատարը կասկածելի անցյալով բարդադիր երիտասարդ քաղերեցի Ռայան ալ-Քիւնահին է: Նրան դատադրատողներից ոմանք մեղադրում են, որ նա յուրացնում է հանրային նյութական միջոցներն ու քրիստոնյաներին դատկանող հոդերը, իսկ ԱՄՆ-ում անհանգստանում են, որ «Բարելոնյան գնդում» առկա է Իրանի ծերը, քանի որ գնդին հովանավորում է երկրի շիայական գլխավոր գինուժը [175]. արդարև, «Բարելոնյան գումարը» մի մասն է «Բաղր» կազմակերպությունից կախում ունեցող «Ժողովրդական զորահավաքի միավորումների» («Բաղրը» Իրաքում իրանյան ազդեցության հիմնական հետարանն է): Քրիստոնեական համալրման նվազման դատճառով, «Բարելոնյան գնդի» շարքերում ներգրավված են շաբակներ, ինչույն նաև շիաներ: Շազմական գործողություններ ծավալելով հատկապես թե՛ Կեփիթում (Թալ Կայֆ) (Tal Keppe, Tal Kayf), այս աշխարհագործ Նինվեի հովիտնութեք գործեց ազատագրումից հետո՝ մրցակցելով «Նինվեի հովիտի տաշտուանության միավորումների» հետ: Տեղանքի վատ ինացությունը, Իրանի հետ ակնհայտ կատերն ու շիաների հետ համագործակցությունը սահմանափա-

կում են աշխարհագորի ծավալման հնարավորությունները:

Իրաքում մնացած և նախաղատվությունը գենքին տված քրիստոնյաներն այսօր մարտնչում են երեք ջոկատներուն՝ «Ասորական ուազնական խորհրդում», «Նինվեի հովիտի տաշտուանության միավորումներուն» և «Բարելոնյան գնդում»: Նրանք համոզված են, որ դարտավոր են կովել հանուն տարածաշրջանի քրիստոնյաների, նրանց բնօրրանը ակնհայտ թշնամու ծեռքից ազատել:

Այս ամենը՝ առանց Իրաքի հանրահայտ Եկեղեցու օգնության: 2019-ի հուլիսին, Քաղուեական Եկեղեցու դատորաբեր ուղերձով դաշտոնադես վերահաստատում էր «իր վերաղափությունն ու որոշակի հեռավորության դահլանուած իրացյան բեճահարթակում որումս «քրիստոնեական աշխարհագորեր» հանդես գալ հավակնող գինված խմբերի գործողություններից»: «Ֆիդես» մամուլի գործակալության ուղարկած դաշտոնական հայտարարությունն օադդեացիների դատրիհարք ընդգծում էր, որ քրիստոնեական գինված խմբերի կազմավորումը նիմշև իսկ «հակասում է սիրո, հանդուրժողականության, ներդամտության և խաղաղասիրության զգացումների վրա հիմնված քրիստոնեական հոգեկանությանը» [176]:

Մի կողմից քրիստոնյաների թվաքանակը Իրաքում շագրենու կաշվի նման փոքրանում է, նյուու կողմից այս երեք գինված մարտախմբերը հայտնվում են իրենց իսկ յուրայինների հարուցած դժվարին կացության առաջ: Չոկամների գոյությունն իսկ վկայում է դարավոր բնօրրանում հայութելու համար դայըքարը շարունակելու քրիստոնեական կանքը, սակայն նրանք բախվում են իրենց համայնքների բացահայտ ընդդիմությանը: Հաջորդ խոչընդոտը, որին ստիղոված են դիմագրավել Նինվեի հովիտի քրիստոնյաները, Սեսուի Բարգանիի գլխավորած ԲժԿ-ի շահարկումներն ու խարդավանքներն են:

Ըստ քրդական շրջանային կառավարության՝ Բաղդադի հանրելոց գերիշխող դիրք գրավելու համար անհրաժեշտ է խստորեն վերահսկել քրիստոնեական աշխարհազորայի հաներին: Նինվեի հովտի քրիստոնյաներին ներքին ինքնավարություն շնորհելու ենթադրյալ խոստումը լավատեսություն չի ներշնչում: Այս տարածաշրջանի քրիստոնյաների առաջան ամորության մշուշում է:

ԵՌԱՐԴԻՍՎԱԾ ՓՈԵՐՎԱԾՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՊՎԱՏՎՐՎՆ

Բրդերը տարածաշրջանի բնադրյալական իշխանությունների հավերժական գրիերն են, առանց դետության ամենամեծ ժողովուրդը, միակը, որ իրենց հսկ բնօրիրանում դիմագրավում են ջիհադականներին ու «Խսլամական դետությանը»: Դրա համար, նախքան ամերիկացի գործակիցներից լքվելը, շատ թամկ վճարեցին, գրիված նարտիկների թիվը տասնյակ հազարների է հասնում:

Իրենց գերակայության մերու շրջաններում քրդերը դարձեն են, որ փորբանանությունների դաշտովաններն են: Քրիստոնյաների թվաքանակը հոյս նվազած Բասրայի, Բաղդադի և Մուտավի փոխարեն հոյակերտ եկեղեցիներ են հառնել երիխում, Անկառայում (Ankawa) և Նինվեի հովտում: Այս շարքում Վերջինը 2019-ին երիխում օծված հայկական եւենտցին է:

Քրդերը շատ շուտ հասկացան քրիստոնեական հաղթաթղթի կարևորությունն ու այն դարձրին քարոզչության եական կովան, որովսպի հավատացնեն, թե իրենց երազած Քուրդիստանը համուլտոնականության ու համակեցության օրրան կարող է դառնալ Իրաքի հայածված բոլոր ազգությունների ու հարանվանությունների համար:

Իրոք, իրաբյան քուրդիստանը Յորդանանի հետ լոեցայն հիմնական աղաստարան է դառնում Իրաքից անդարձ հեռացած քրիստոնյաների ու եզրիների վերջին վերաբրոդների հաճար: Նախաղետություն հանդիսացող, անկախության զգտող քրդական այդ ինքնավար շրջանը փոքրանամություններին աղափովել է քաղաքական ներկայացուցչություն, իրավունքներ և անվտանգություն:

Լրագրողները, լինեն աջակողմյան դահլյանողական, թե արմատական ծախակողմյան, ոչ առանց որոշ քնարականության արտահայտել են իրենց հիացմունքը բուրդ կանաց նկատմամբ, որոնք, վարսերը քանուն, ժողիտը շոթերին, մարտնչում են «Խևաճական դետության» շիհադականների դեմ: Նոյնիսկ դարբերականների առանձին համարներ են նվիրվել քրողություններին: Գերմանամետ միջավայրում լրագրողները, խոհագիր Բենար-Անրի Լիլի գլխավորությամբ, փորձել են քրդական դատը դարզարանել ու «լուսաշող իսլամի» շլացուցիչ դատկեր են ստեղծել: Եթե հավատալու լինենք այդ կանխակալ իրադարակումներին, Արևոտքի դաշնակիցներից անթիվ անգամ դավաճանված քրդերը ջիհադական բարբարոսության դեմ քաղաքակրթության վերջին դատմէշն են: Քաղաքական տարակարծությունը խախտում է նման միահամուռ հիացումը: Եթե ֆրամսիացի դեկավարները այդ նոյն դատճառով չեն սատրում քրդերին, նշանակում է տառապում են անբացատրելի կարճատեսությամբ, որին ավելանում է, ցավալիորեն, դատմության շիմացությունը:

ԱՐԱԳԸՆԹԱՑ ՔՐԴԱՑՈՒՄ

Նամակային բացիկի հակառակ կողմը անհամեմատ անհրաժուր դատկեր է դարզում: Որոշես խաղաղության ու բարզավաճնան նավահանգիստ ընկալվող առինքնող երթիւ հակադրվում է ողբերգականորեն հայտնի Հալաբչային, որտեղ՝ Իրաքում և Սիցին Արևելքում սալաֆական ջիհադականության այդ բնօրրանում, Սաղդան Հուսեինի գործականները քիմիական գեներ գործադրեցին իրենց իսկ խաղաղ բնակչության դեմ:

Արևելյան քրիստոնեության բնօրրանում, ինչողես նաև Հայաստանի եղիների շրջանում, քրդերին համարում են իրենց ժողովրդի բնաշնչման անգութ դահիճներ: Բուրդ ավատա-

դետերը, հավատացյալ չինելով հանդերձ, երկար ժամանակ շահարկել են թուրք-քրդական մուսուլմանական եղբայրությունը և կրոնը համարել են իմանարար տարր, այն դեռքում, երբ հայտնի է նոյն բուրդ ժողովրդի ներքին ծայրահեղ մասնատվածությունը:

Քրիստոնեական համայնքները չեն մոռացել համիդիե հեծելագների [177] հայերի 1894-1896 թվականների դահիճների արյունոտ նախնիրները: Նրանց մերօրյա հետնորդները, որոյն գյուղերի դաշտում անթիվ ընկան ՔԲԿ-ական գինյաների ներ հաշվեհարդարներում: Քրդերը ջանասիրաբար մասնակցել են թե՛ 1915-ի հայաստանությանը և թե՛ կանանց ու երեխաների առևանգմանը, որոնց հաջորդել է բոնի իսլամացումը:

Երկու անգամ՝ 1843 և 1846 թվականներին, բուրդ ենիր Բեյրիսան բեկը դարձավ այն սղանի մեղսագործը, որը զարդուեցրեց համայն աշուրի ազգաբնակչությանը:

Թեև բուրդ քաղաքական առանձին դաշտումյաներ կամ քահաքացիական հասարակության որոշ դեմքեր անհատացես ընդունել են իրենց ժողովրդի դատախանատվությունը 20-րդ դարավագրին հայ, աշուրի-քաղդեացի և ասորի ժողովուրդների բնաշնչման մեջ, այնուամենայնիվ, հակաքիստոնեական հալածանքները Անատոլիայում չեն դադարել: 1980-1990-ական թվականներին և նոյնիսկ բոլորովին վերջերս թուր Արքիների կամ Մարողինի բնիկների՝ հատուկենտ մնացած քրիստոնյաների կոյսերի առևանգումները, հողատերերի սղանությունները, տարբեր բնութիւ բռնաճնշումները սովորական առօրյա են, ընդ որում Ա. Գաբրիելի վաճրի շոշակա գյուղերը արդեն վաղուց իրենց բուն բնակչիներից դարդվել են: Յայտնվելով երկու կրակի միջև՝ Հակկարիի լեռնադարի աշուրա-քաղդեական գյուղերի քաղդեացիները և հեռացան ՔԲԿ-ի գինյաների գործունեությունը սաստկանալում դես: Մնացողները մին-

չն իհմա կրում են միաժամանակ՝ թէ քրդերի և թէ թուրքական բանակի՝ այրած հողի և շորթումների քաղաքականության հետևանքները:

Ինչ խոսք՝ ի տարբերություն թուրքերի, քրդերն իրենց բռնածնչումների ցեղաստանական բնույթը չեն վիճարկում, չնայած շատ-շատերը իրենց մեղավորությունը չեն ընդունում, թաքնվում են բնաջնջումը հրահրող Օսմանյան Պետության միակ դատասխանատվության հետևում:

Իրաքում, սալաֆական ջիհադականների կազմավորումն ու հզորացումը և 2003-ի մերիսում նոյաստեցին «ալ-Քայիդայի» քրդական թևի՝ «Անսար ուլ-խլամի» ինքնահաստատմանը: 2001-ին քուրդ ջիհադական քարոզիչ Նաջ-նուրին Սինադ Ֆարաջի (կոչեցյալ Մալա Ֆաթե Կրեկար, նաև Մոլլա Կրեկար) սկզբնավորած այս սալաֆական շարժման կողիզը աֆղանական դատերազմի քուրդ նախկին ճամանակիցներն եղան: Շարժումն օգտվեց Ծոցի դատերազմից հետո Սադրամ Չուսեիմի վարչակարգի թուլացումից ու իր գլխավոր գորակայանը հիմնեց Իրաքյան Քուրդիստանի հարավ-արևելքում: 2002-ին «Անսար ուլ-խլամը» աղաստան տվեց «ալ-Քայիդայի» թիվ 2-ին՝ Աբրու Սուլեմեր ալ-Զարքաւիին, ինչը նոյաստեց կազմակերպության հզորացմանը: «Անսար ուլ-խլամը» Ուսան Բեն Լադենից [179] ստացավ 300.000 ու 600.000 դոլար կանխիկ գումարներ, որոնք հատկացրեց գորավարժության ու դարձնավորման անհրաժեշտ միջոցներին: Միջազգային չափանիշով ջիհադականության երկրորդ սերումն համարվող այդ շարժումը, տվյալ դաիհոց սկսած, հավատարիմ է մնում ԴԱԻՀ-ին: Մեկ խոսքով, կարելի է ասել՝ «քրդական քացառիկություն», որդես այդուհան, գոյություն չունի: Կենցաղի ու բարքերի քուն արևմտականացումից անակնկալի եկած քուրդ երիտասարդության մի մասը տեղի տվեց այդ՝ առաջին հայցքից աննկատ, իրականում չափազանց քացահայտ

արմատականացնամ ահազանգի առաջ: Քրդական ազգային ինքնավարության դեմ ԴԱԻՀ-ի նղած դատերազմը, չնայած թաքցնելու ջիգերին, մերժընդերթ քաղաքացիական դատերազմի էր վերածվում, ինչողև դատահետ Կոքանի հիշակավոր ճակատամարտի այն դրվագում, որտեղ ջիհադական քրդերը առաջնազնում ճարտնչում էին ՔԲԿ-ի ու «Ժողովրդավարական միություն կուսակցության» երբայր-թշնամների դեմ: Ըստ քուրդ հետազոտող Ադել Բակավանի (Adel Bakawan),¹ 5 միլիոն բնակչություն ունեցող Իրաքյան Քուրդիստանը «Խումական դետությանը» առնվազն երկու հազար ջիհադական է մատակարարել [180]:

Ծուտով, Իրաքյան Քուրդիստանում, քրիստոնյաների առանց այն է ծանր վիճակը ծայրակետին հասավ: 2017-ի սեպտեմբերի 25-ին, երբ տեղի էր ունենում Քուրդիստանի անկախության հանրաբեկն, «Աշուրիների եվրոպական համադաշնությունը» հրադարակեց վերլուծաբաններ Ույն Շաննայի ու Մաթեու Բերբերի գեկուցագիրը, որը որքան ծավալուն, նույնքան էլ համոզիչ էր ինչողև ինքնավար շրջանի, այնուա էլ Նիմկեի հովտի աշուրի-քաղիդացիների նկատմանը ՔԲԿ-ի որդեգրած կեղերչական քաղաքականության վերաբերյալ: Զեկուցագրում հեղինակները անդրադառնում են նաև աշուրիների նկատմանը ինքնավար շրջանի կառավարության գործադրած լուրջ իրավախսատումների մտահոգող աճին: Դրա վկայություններն էին աշուրիների հողերի հետևողական յուրացումը Նիմկեի հովտի իրենց բնօրրաններում, ինչը տարածաշրջանի ծրագրավորված բռնակցման քաղկացուցիչ մասն է: Այս միտումն զգալի դարձավ հատկապես Իրաքյան Քուրդիստանի անկախության 2017-ի հանրաբեկի կազմակերպությունից հետո: Զեկուցագիրն անդրադառնում է այսուհի հարցերի, ինչողիսիք են ընտրակեղծիքները, հողատարածքների հափշտակումները, ժողովողավարությանը ընտր-

ված ներկայացուցիչների մերժումն ու նրանց փոխարինումը թժկ-ի դատահական անդամներով, ինչողևս նաև կուսակցության ինքնահամալրման ու զանագությունն ու հովանավորչական հաճակարգը [181]:

Թժկ-ի աղակովության ուժերը խիստ քննադատությամ են ենթարկվում նաև մարդու իրավունքները խախտելու համար: 2015-ին կուսակցության տեղական անվտանգության ուժերը կուսակցության դեմ հոդվածներ հրադարակելու համար ձերբակալեցին ու կալանավորեցին քաղաքական գործիչ Քամալ Սահի Կաղիրին: Դրա հաճար նա 30 տարվա բանտարկության դատապարտվեց: Որոշ գործիչներ դնդում են, որ Իրաքյան Բոլորիստանում «հարմար դաշտոն կամ հաճադատասխան կրթություն ստանալու հանար» անհրաժեշտ է քրդական կուսակցությունների անդամ լինել: ԱՄՆ-ի Պետական դեղարտամենտի գեկուցագրից մեջբերում կատարելով, փաստաթուղթը հավաստում է, որ քրդական իշխանությունները իրավազրկում և կտտանքների են ենթարկում եյուսիսի ազգային փոքրամասնություններին, այդ թվում՝ թուրքմեններին, սունի արաբներին, քրիստոնյաներին ու շաբակներին: Դաշախակի երեկով յայի փոքրամասնությունների ներկայացուցիչների դատական կարգով ձերբակալությունները: Սրանց դեսպ է հավելել շարունակական ճնշումները փոքրամասնությունների կրթարանների վրա, դասավանդման լեզուն բացառադես քրդերնը լինելու դարտադրանքը: Կիրկուկում մնացած քրիստոնյա փոքրամասնությունները «արաբների ու թուրքմենների նման հալածվում են քրդական անվտանգության ուժերի կողմից»:

Քրիստոնյա աշուրիները 1998-1999 թթ. երիլում բազմաթիվ ուժահարումների թիրախ դարձան, սակայն քրդական իշխանությունները հետաքրննություններն անհետեվանք թողեցին: Տարածաշրջանում քուրդ ահաբեկիչների դավադիր գնդակից ընկած քրիստոնյա դաշտոնյաների

ցանկը երկար է: 1993-ին բռնարարի զոհ դարձավ «Աշուրիական ժողովրդավարական շարժման» ակնառու դեմքերից մեկը՝ Ֆրանսիս Յուսեֆ Շահօ (Francis Yousef Shahro): Թժկ-ի հանրածանոթ անդամ ահաբեկիչը ամենակի կաշկանդած չէր թվում, ազատ-համարձակ շրջում էր: Քուրդ ազգայնականների ձեռքով սղանված մյուս աշուրի անձանց թվում հիշատակելի են Թժկ-ի քրիստոնյա առաջնորդ Ֆրանսո Հարիրին (Franso Hariri), ում ահաբեկեց «Անսար ուլ-խլամի» մի խլամական զինյալ և Սարգարետ ժորդ Շելլոն (Margarit George Shello): Վեշմերգայի առաջին կամացից մեկը (սղանված է 1969-ին): Տարօրինակն այն է, որ զոհերի մեծ մասն սղանվել է քուրդ դեկավարների հետ իրենց ումեցած մտերճական հարաբերություններից անկախ:

Դժգոհության մի այլ դաստիա է աշուրի-քաղդեացիներին դատկանող հոդերի բռնախլումն ու զավթումը: Եթե վերջիններս իրենց արդարացի դահանջներն են ներկայացնում, քրդերը նորանոր օրենքներ են հորինում օրինական տերերին սեփականությունից գրկելու համար:

Քրիստոնյանի ինքնավար շրջանում, ինչողևս նաև Սիրիայի հյուսիս-արևելքում, քրիստոնյաները դժգոհում են դղրոցական ծրագրերի քրդացումից: Աշուրիները բոլորուն են, որ մինչ քրդական ուսումնական հաստատությունները նյութառես շատ լավ առահովում են, իրենք գործնականում ոչ մի օգնություն չեն ստանում: Աշուրիները դժգոհում են նաև այն բանից, որ քրդերը դղրոցական ձեռնարկները խեղաթյուրում ու կեղծում են՝ ավանդական քրիստոնեական անունները փոխարինելով քրդականներով: Երբեմն, քուրդ հեղինակների կողմից դատմության վերաշարադրումը ծայրահեռ չափերի է հասնում. դասագրերի հեղինակները որոշ աստվածաշնչյան կերպարների քրդական ծագում են վերագրում:

«ՔՈՒՐԴԻՆԱՌԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ»

ՀՈՎԱՆԱՎՈՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՍԿԱՐԳԸ

Ըստ «Աշուրիների եվրոպական համադաշնության» գեկուցագրի՝ թժկ-ն փորբանամություններից ներկայացուցիչներ ընտրելու ու նրանցով ինքնահամալրվելու քաղաքականություն է վարում՝ նրանց անունները կուսակցության ցուցակում ներկայացնելու և կարևոր դաշտուններում առաջարկելու համար։ Երկրորդ փուլը այդ նույն անձանց ծառայեցնելը է իր քաղաքական օրակարգերին, միաձանակ դարտադրելը, որ կատ հանդիսանան կուսակցության ու իրենց կրոնակիցների միջև՝ այսինքն իրենց արևմտյան զորուակիցների մոտ «օգտակար աղուշի» դեր խաղան։

Հետաղմողելով Նինվեի հովտի բռնակցման ծրագիրը, քուրդ դաշտունյաները երկրինի ռազմավարություն են վարում, դիմում են ինքնահամալրնան ու դարտադրանքի։ Քուրդ դատախանատունները հովանավորչության միջոցով շահում են առանձին աշուրի-քաղդեացի ցեղադետերի ու քաղաքական առաջնորդների վստահությունը, որով և սաղում են տվյալ համայնքի դատակտունը։ Հովանավորչության համակարգը հովանավորյալին աղահովում է կանոնավոր եկամտով, որը հաճախ «կուսակցական աշխատավարձ» է կոչվում։ Տվյալ անձանց դարտավորությունն է դառնում համայնքի ներսում, հրատարակայնորեն կամ անհատապես, դրվագել ու հավանության արժանացնել թժկ-ի գործունեությունը։ Հոյժ կասկածելի արդյունավետությունը ունեցող նման ռազմավարության դատշառով, փորբանամությունների միջավայրում նախ անվտահություն է առաջնում կրոնական ու քաղաքական դեկավարների օրինականության նկատմամբ, հոգևորականներն ու աշխարհիկ գործիչները հավասարապես սկսում են համարվել «հերձվածողներ», համայնքի ներսում հետզհետեւ

արմատավորվում են հուսախարությունն ու իրենց իսկ առաջնորդներից լրված լինելու զգացողությունը։

Հովանավորչության այս քաղաքականության մի այլ օրինակ է Նինվեի հովտի քաղաքադետական խորհուրդների ամերամների ու քաղաքադետերի փոխադիմումը թժկ-ի վստահությունը վայելող, հաճախ որևէ փորձառությունից գուրի անձանցով։ Բնորոշ օրինակ է թժկ-ի երիտասարդ աշուրի անդամները։ Երկրորդ օրինակ է թժկ-ի երիտասարդ աշուրի անդամ Լարա Ֆուտեֆը, ում շնորհվեց Ալ-գոշի (Al-qosh) քաղաքադետի ղաջտունը։ 2017-ի ամռան ընթացքում կուսակցությունը դաշտուններ արեց Նինվեի հովտի երկու կարևոր քրիստոնեական քաղաքների քաղաքադետերին։ Ալ-գոշի Ֆայէզ Աբեդ Զահվարեհն (Faiez Abed Jawhareh) ու Թել Կեփիկեհ (Թալ Կայֆ) Բասիմ Բելլոյին (Basim Bello)։ Այս դաշտունամկությունները հասկանալի են հանում Նինվեի հովտի բռնակցման ծիրում։

Քուրդիստանի ինքնավար շրջամի իշխանությունները կարողացան օգտվել անգամ 2014-ի ամռանը հովտի «Խոյանական ղետության» ջիհադականների ներխուժումից։ Սուսուից կախում ունեցող քրիստոնյա դաշտունյաներն ու ժողովողի ընտրյալներն ստիլված եղան հեռանալ թժկ-ի ազդեցության տակ գտնվող գոտի՝ Դիհուկ, որի հետևանքով մեկընդիշտ կտրվեցին իրարյան կենտրոնական իշխանությունից։ Վարչական միջոցների դիմելու այս կերպը, որի նոյատակը ընդդիմության ծայնը խացնելն էր, ի հայտ եկավ նաև Նինվեի նահանգադետարանից կախված Մինջարի տարածքում։ Այս շրջանում տեղակայված իրարյան ուժերը հաճախ գլխավորում էին թժկ-ին հավատարին քրդեր, ինչը կուսակցությանը հետագայում հնարավորություն ընձեռեց տեղում աղահովել փեշմերգայի ու Ռումակայի անվտանգության և ոստիկանության ուժերի։ Սայահիշ ներկայությունը։ Վերջիններս ծնավորվել են քաղաքահական դատարագմի ընթացքում՝ 2012-ին ու կառվել «Քրդական ժողովրդավարական միություն» կուսակցության հետ։

Սինջարում ռազմական ու քաղաքական ննան գերակայություն աղահովելով, ՔԺԿ-ն առանց ընտրություն անցկացնելու էլ կարող էր տեղական կառավարման դաշտոներում տեղափորել յուրայիններին: ԴԱԻՇ-ի ձեռքից ազատվելուց բիշ անց Սինջարը դուրս մնաց Նինվեի տեղական կառավարության վերահսկողությունից, չնայած հովհտը մնում էր նոյն նահագաղետության նյութական աղահովման դատապիսանատվության շրջանակում:

Կենտրոնական կառավարության իրավասության ներք գտնվող շրջանները ՔԺԿ-ի յուրայինների ներթափանցումը, քաղաքային խորհրդադիրների ներքին քայլայումը, կամայական դաշտոնանկություններն ու կարևորագույն դաշտոներում կուսակցության անդամների նշանակումը առանց խորհրդակցության, զանազան ինքնահամալրումները ուղղված են Նինվեի հովհտի ուղղակի ու վերջնական բռնակցմանը...

ԵԶԴԻՆԵՐԻՆ ՉՈՒԵԼ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ

Եթե աշուրիները ավել կամ դակաս հաջողությամբ դիմադրում են քրդական ուժերի՝ Նինվեի հովհտը բռնակցելում, եզդիներն անհամենատ անօգնական են: Խնդիրն այն է, որ նրանք քրիստոնյաներին համահավասար եթող-դավանական կարգավիճակ չունեն: Ըստ քուրդ ազգայնականների դաշտոնական տեսակետի, եզդիները քրդերի մեջ ծոված են, մինչդեռ այդ համայնքը ամեն կերպ ծգտում է ինքնավարության ու ազատագրության:

Լինելով քրդախոս՝ եզդիները նախաղատվությունը տվել են ինքնամեկուսացման ու ինքնահամալրմանը, մի կարգավիճակ, որն ամբողջովին քայլայել է համայնքային կառավարման ավանդական կառուցյները (ցեղաղետեր, հոգևոր առաջնորդներ և մտավորականներ): Դրա հետևան-

քով, եզդիները գրեթե զրկվել են իրենց խնդիրները բարձրածայնողներից: Ու չնայած եզդիները Բուրդիստանի ինքնավար շրջանի խորհրդարանում ներկայացուցիչներ ունեն (բոլորն էլ ՔԺԿ-ի անդամ), քուրդ դաշտոնակիցները նրանց վերաբերվում են զիջողամտությամբ: Որպես փոխհատուցում՝ եզդի դատզամավորները ՔԺԿ-ի նկատմամբ համայնքի ներսում հնչած դժգոհություններին լուությամբ էին արձագանքում երկար ժամանակ:

Դրան հակառակ, աշուրիական անկախ կուսակցությունների գոյությունը ճնշումներին անհամենատ արդյունավետ դիմադրածելու հնարավորությունը ընձեռեց աշուրիներին, մինչդեռ Բուրդիստանի ինքնավար շրջանի կառավարությունը եզդիներին արգելում է դավանաբանական իիմքով կուսակցություններ ստեղծել՝ ելեւով այն դրույթից, որ քուրդ եզդիները քրդեր են, ուստի, եթե ուզում են խորհրդարանում ներկայացուցիչներ ունենալ, դեռք է անդամակցեն գոյություն ունեցող քրդական կուսակցություններին: Տարօրինակն այն է, որ այդ նոյն խորհրդարանում հավասար հիմունքով իրենց ներկայացուցիչներն ունեն քրդական հյանական երեք կազմավորումներ՝ այն նոյն դայնամամերով, որ դահանջում են եզդիները...

Խուսափարելու հնարավորությունից ու քաղաքական գործունեությունից զրկված Սինջարի եզդիները, որոնց ՔԺԿ-ի ուշադրությանը չեն էլ արժանացուել, հայտնվեցին վաղանցիկ «Բարեփոխության ու առաջընթացի շարժման» մեջ, որը փորձեց կադ հաստատել ուղղակի Բաղդադի կենտրոնական իշխանության հետ և դաշնային խորհրդարանում աթոռ ունեցավ: Ամրող աշխարհն է հիշում եզդի կիս դատզամավոր Վիհան Դախիլի արցունքները, ով Իրաքի խորհրդարանում 2014-ի ամռանը գործընկերներից խնդրում էր հանդես գալ «հայանական դեսության» ջիհադական հայածանքների դեմ: Ավելի քան տասը տարի ՔԺԿ-ն դամանորեն ծնշեց «Բարեփոխության ու առաջընթացի

շարժումը», չվարանեց անդամներին սղառնալ, վիրավորել, նոյնիսկ ձերբակալել: Երբ ՔԺԿ-ի փեշմերգաները հետ գրավեցին Սինջարը, «Բարեփոխության ու առաջընթացի շարժումը» դադարեցրեց իր գործունեությունն այդ տարածաշրջանում:

Ամեն դեղքում եզրիների ու Բարզանիի «Քուրդիստանի ժողովրդական կուսակցության» միջև շփման եզր կա: Կուսակցությունը քաղաքական նորատակներով ամեն կերպ շահարկում է՝ ԴԱԻՇ-ի՝ 2014-2016 թվականներին եզրիական համայնքը բնաջնջելու ծրագիրը: 2017-ին Քուրդիստանի հիմնավար շոշանի վարչապետ Նեշիրվան Բարզանին որսաց զոհերին հիշատակելու հնարավորությունը՝ Բաղդադին մեղադրելու համար, ընթացքում մոռանալով ՔծԿ-ի փեշմերգաների դատասխանատվությունը 2014-ի ամառվա իրադարձություններում, եզրիների անրոր անեօթ-ներն իրենց դավաճանելու համար:

Նետզիեստ ակնհայտ է դատնում, որ քուրդ հեղինակություններն անձնական նոյատակների համար շահարկում են փոքրամասնությունների տառապանքը: Միշտ կրկնվում է նոյնը՝ Նինվեի հովտի քաղաքաբետերին ահարեկում են, սոյանում, ճնշում, որդեսզի իրենց համայնքներում սատարեն հանրապետին: Այս հարկադրական ռազմավարությանը գուզահեռ, հանրային հարաբերությունների առանձնահատկությունները. Քուրդիստանի ինքնավար շրջանի կառավարության անդամների շահախմբային գործունեությունը ակնհայտ են դարձնում ԲժԿ-ի քուրդ դատախանատունների հնարագիտությունը՝ իրենց որ հարկ է լինում Եվրոպական ու ամերիկյան լսարաններին ներկայացնել իրենց փոքրամասնությունների իրավիճակը:

Առաջարկություն «Փողովարակարգական ՀԱՄԱՐՆԱԾՆՈՒԹՅԱՆ» ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ՍԱՏՎԱԾ ՔՐԻԱՏՈՒՅՆԵՐԸ

Հարլան Սիրիայում, ՔԲԿ-ի աջ թևն եղող «ժողովրդավարական միություն կուսակցության» (ԺՄԿ, PYD) քրդերը իրենց տարածքը դահում են երկարյա բռնըցրով։ Դամակված անիշխանականության դատրանքային, սեփական մէկնարանությամբ՝ ժողովրդավարական համադաշնությունն առաջադրում է մի աննախադեռ համակարգ՝ քրդական համայնքայնությունը։ Բանտախցում Արդուլլահ Էռջալանի [182] (Abdullah Öcalan) մշակած տեսության վրա իիմնված համակարգը շարժնան հասարակական ու զաղաքարական հիմքն է։ Ըստ արգելափակված գլխավոր առաջնորդի Խնկարկուների՝ խոսքը ՔԲԿ-ի սառեցրած նարքսիզմ-Լենինիզմը շրջանցելու, ազգ-տեսություն տարբերակը մերժելու մասին է՝ այն որոշակի տրամարանության շրջանակում, որն ակնհայտ է դարձնում քրդական աշխարհաքաղաքական նույանությունը, միաժամանակ՝ ազգայնականության բոլոր դրսնորումները։ Մի խոսքով՝ սահմանվում է «ազատական քաղաքադեստականությունից» [183] սերող հավաքական բնույթի ժողովրդավարական նոր ծրագիր, որը տեղերում դիտի իրականանա ամերիկացի Շենմարքսիտ ու քաղաքական բնադրական Մյուլեր Բուկչին (Murray Bookchin) ժանանակին առաջադրած ծնուվ։ Բուրդ հեղափոխականները սնվում են նաև ներշնչանքի մի այլ աղբյուրից։ Մերսիկայի զաղատայականների [184] հնավարության փորձառությունից։

